



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Մ. Մ. ԱՅՎԱՏԵԱՆԻՆ

ՆԱԽԱԿԻՆ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ

ՔՐԻՍՏՈՍԵԿԸՆ ԵԿԵՂԵՅԻՈՅ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ ՎՐԱՅ

ԳՐԵՑ

ՅՈՎ.Է. ՊՐՈՒ. Տ. ԿՐԳՏ.

ՏԷՐՈՅԵՆՑ



ՏՊԵԼ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ԳՈՐԾԱՐԱՆԻ Յ. ՏԷՐՈՅԵՆՑ

1861

Թ
337


10
337

Մ. Մ. ԱՅՎԱՏԵԱՆԻՆ

ՆԱԽԱԿԻՆ ԲՆՆՈՒԹԻՒՆԸ

ԻՐԻՍՏՈՍԵԿԸՆ ԵԿԵՂԵՅԻՈՅ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ ՎՐԱՅ



ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՍԱՐԳՍԻ

ԱՐԹԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ ՊԱՏՐԻԱՐԺԻ

ԿՍՈՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՅ


ԵՐ

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅՆ

ԳՐԵՑ

ՅՈՎ. Է. ՊՐՈՒ. Տ. ԿՐՊՏ.

ՏԷՐՈՅԵՆՑ



ՏՊԵԵԼ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ


Ի ԳՈՐԾԱՐԱՆԻ Յ. ՏԷՐՈՅԵՆՑ

1861



337-Ղ

1. § 339



Մեծիմաստ սիրելի մեր 'ի Տէր •

N . 255

'ի 10 փետրվար ամսոյ տարւոյս' 'ի տասնօրեայ պարբերականն Մեղու Հանդիսի տեսաք նամակ ինչ ուղղեալ յանուն ձեր 'ի հաստատել թէ սուրբ եկեղեցիս Հայաստանեայց է սահմանադրական, որ երբէք չէ՛ ընդունելի մեզ, եւ մինչեւ ցայժմ չեմք ուսեալ 'ի սուրբ գրոց եւ 'ի հոգեշունչ վարդապետութեանց սրբազան Հարցմերոց՝ թէ ուղղափառ եկեղեցիս Հայաստանեայց սահմանադրական իցէ :

Ուստի այսու գրու թեամբ մերով պարտաւորեմք ըզ ձեզ պատասխանել առ նոյն նամակն, եւ հերքել դամենայն դայթակղական բանսն՝ որ 'ի նմա, որով թէ գուցէ ոմանք դայթակղեալ իցեն, ուղղեսցին միտք նոցա :

Ողջ լեր 'ի Տէր •

Պատրիարք Կ . Պօլսոյ
Սարգիս արքեպիս

23 մարտ • 1861 :

և՛՝ Յովնանէն վարդ •
Սէբեան :

Սուրբ Եկեղեցի
և՛՝ Իսահակ վարդ •

և՛՝ Յովնանէն վարդապետ
Ղալաթիոյ :

և՛՝ Մանուէլ
վարդապետ

Մայր Էկե՛

Ս . Խաչ Էկե՛ Յովն .
Գահանայ Փափաջեան :

Գրեցի Գահանայ
Խասգիւղէ

և՛՝ Երեմիա Գահանայ
Խասգիւղէ :

Սուրբ Գրեցի Էկե՛
Տ . Փիլիպպոս :

Սուրբ Աճմ Էկե՛ Պէշի .
և՛՝ Գրեցի Գահանայ :

Տ . Յովնանէն
Էկե՛ Գրեցի Գահանայ

Ս . Երե՛ Էկե՛ Գրեցի
Գահանայ Աճմ Էկե՛

THE UNIVERSITY OF CHICAGO

PHYSICS DEPARTMENT

REPORT

ON THE THEORY OF THE

PHYSICS DEPARTMENT

OF THE UNIVERSITY OF CHICAGO

PHYSICS DEPARTMENT

PHYSICS DEPARTMENT

PHYSICS DEPARTMENT

PHYSICS DEPARTMENT

PHYSICS DEPARTMENT

PHYSICS DEPARTMENT

PHYSICS DEPARTMENT

PHYSICS DEPARTMENT

Յ Ե Ռ Ե Ջ Ե Բ Ե Ն

Մեղս անուն տասնօրեայ պարբերականին մէջ (ԲԻ՝ 124), Մատթէոս Այվատեան ստորագրութեամբ մեզի ուղղուած նամակ մը կարդացինք սա՛խորագրով. «Եկեղեցւոյ կառավարութիւնը սահմանադրական է թէ միայն տական»։ Այս նամակիս պատասխան չգրելու քանի մի պատճառ ունէի։ Նախ որ անվայել տեղ մը հրատարակուած էր։ Մեղսն՝ ինչպէս որ ինքն ալ կը խոստովանի, կատակաբան է՝ ի բնէ. իսկ աստուածաբանական նիւթերը կատակաբան գրուածոյ մը մէջ հրատարակելը՝ ինչպէս որ Պ. Այվատեանը ըրեր է, կրօնական խնդիրները կատակաբանութենէն տարբերելուն վրայօք ճիշդ գաղափար մը չունենալէն կուգայ։ Նամակը հրատարակուելու տեղւոյ պակասութիւն չկար. Սէր եւ Կեւեկ եւ Թոնիկ, եւ նոյն ինքն Մասիս ալ որ թէպէտ քաղաքական լրագիր է. բայց երբեմն կրօնականի ալ կը խառնուի, կը նային իրենց էջերուն մէջ ասոր տեղ գտնել։ Պ. Մատթէոսին ասոնք ձգելը եւ Մեղսին Թերթերը իրեն ասպարէզ ընտրելը մեզի օրինաւոր պատճառ մը երեւցած էր անոր չպատասխանելու։

Երկրորդ պատճառնիս էր՝ որ այնպէս նիւթոյ մը վրայ կը խօսի որ քրիստոնէից անձանօթ չէ՛, եւ ամէն մարդ կրնայ խօսածները դատել։ Մանաւանդ թէ իրօք ալ քննութեան տակ ձգողներ կան թէ՛ խօսքով, եւ թէ՛ ինչպէս որ լսեցինք, գրով ալ մէկ երիտասարդ մը՝ որ աստուածաբանական խնդրոց խորին հմտութիւն մըն ալ չունի, (եւ Պ. Այվատեանին ըսածներուն խորին հմտութիւն մըն ալ պէտք չէ՛ պատասխանելու), այս նամակիս պատասխան մը կը պատրաստէ եղբւր հրատարակելու։

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Երբորդ պատճառ՝ գրածներուն մէջ տեսնուած հակասականները՝ որով
մէկ տեղ մը ըսածը քանի մի տող վարը կաւրէ, ուրիշ հերքման կարօտութիւն
չունէր: Մենք կարդալ գիտցողներուն վրայ որ այսպէս բաներ կարդալու հետա-
քրքրութիւն ունին, աղէկ վարկում ունիմք. կը կարծեմք թէ շատերը այդ
հակասութիւնները կը տեսնեն, եւ շտեմողներուն ալ կը ցուցնեն: Եւ այս-
պէս մի եւ նոյն գրուածոյն մէջ երկու խօսք իրար աւրելով՝ մեզի աւրելու և
հերքելու բան չիմար:

Չորրորդ պատճառ՝ գրածները հաստատելու համար բերած վկայութիւն-
ներուն անյարմարութիւնը. մանաւանդ անոնց՝ որոց միայն տեղը ցուցուցեր
եւ խօսքերը չէ՛ գրեր: Կարդացողներուն առանձին պարտականութիւն մը կը
ճանաչեմք որ կարդացածնուն մէջ «է՛ս բառով սուրբ գրոց մէջէն տեղ ցուց-
ուած գտնեննէ՛ տեսնեն թէ ի՞նչ գրուած է հոն» չէ՛ նէ կարդացածնին կամ
կիսատ կը հասկընան, կամ հասկըցածնուն հաստատութիւնը կիսատ կը ըլլայ:
Բայց այն ալ գիտեմ որ ոմանք կարդացած բաներնուն հեղինակին վրայ աղէկ
վարկում ունենալով, եւ կարծելով որ սուտ վկայ չքերեր, այս պարտականու-
թիւնը կատարելու զանց կընեն. եւ հակառակը խօսողին չհաւատացողներ ալ
կը ըլլայ անոնց մէջ. եւ այս է նախապաշարած եւ կոստիցո-ւիան: Ասանկներուն ալ
բան հասկըցընելու աշխատիլը՝ ջուրը անկանի մէջ ծեծել կըսուի. մենք այն-
պիսեաց հետ բան չունենալու համար պատասխան չգրելու պատճառ մըն ալ
այս բռնած էինք:

Հինգերորդ պատճառ մըն ալ մեր ուրիշ տեսակ գործերու զբաղմունքը

նիս էր՝ որ քիչ ժամանակ կը գտնէինք անոնցմէ դուրս բանի գլուխ դնելու •
եւ մեր սակաւիկ ինչ հանդէսը ժամանակնիս ասոր զոհելու կը ստիպուէինք •
Թէ որ պատասխանելու ձեռք զարնէինք նէ :


Այս պատճառները չգիտնարով շատերը մեր լուրը անպատեհ սեպե-
ցին : Վերջապէս՝ բարձրագոյն հրաման մը որու հնազանդիլ հարկ էր մեզի, ու-
րովհետեւ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ հաւատոց եւ կարգադրութեան
անբիծ եւ անարատ մնալու • պաշտպանութեան սահմանուած ստեանէ մըն էր •
մեզ ստիպեց մեր բռնած լուրթիւնն աւրելու • եւ այն նամակին պատասխա-
նելու համար ձեռքերնիս գրիչ առնելու :

Մէնք հոս՝ ուրիշ անգամ ըրածնուս պէս՝ կարգաւորեալ ուսումնական ոճ
մը պիտի չբռնեմք, որուն մէջ հակառակորդին ամէն առարկութիւններուն
պատասխանը կատարեալ տրուի ալնէ՝ անոր խօսածին կարգով չըլլալուն հա-
մար կարգացողը պակաս բան մնացած կը կարծէ : Այլ նոյն իսկ Պ. Այվատե-
եանին նամակը առաջնիս պիտի առնեմք • հատուած մը անկէց պիտի կարդամք • եւ
անոր պատասխան տալէն ետքը անմիջապէս անոր ետեւէն եկած հատուածը պի-
տի առնեմք • անոր ալ պատասխանէն ետքը անոր յաջորդը մինչեւ վերջը • ա-
նանկ որ՝ այս գրուածոյս մէջ Պ. Մատթէոս Այվատեանին ամբողջ նամակը պի-
տի պարունակուի պատասխանովը : Եւ թէ որ կարգաբանութիւն չտեսնուի ը-
սածներու մէջընէ՝ պատճառը մեզնէ չըլլալը դիւրաւ կը հասկըցուի • այսու ա-
մենայնիւ մեր ձեռքէն եկածին չափ ընթերցողաց դիւրութիւն տալու համար
նամակը պատասխանովը հատուած հատուած կը բաժնեմք :

Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ո Յ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

ՍՍՀՄ ԱՆԱԴՐԱԿԱՆ Է ԹԻ ՄԻԱՊԵՏԱԿԱՆ



ՀԱՏՈՒՄԻ Ա .

Պ . ՄԱՏԹԷՈՍ

Քա՛րեկամ . կարծեմ , քաղաքական կառավարութեանց այս երկու մեծ տեսակի բաժանումը գիտէք . եւ նոյնպէս իբրեւ քաղաքական մարմին՝ ազգի մը կամ ժողովուրդի մը՝ այս երկու տեսակէն որո՛ւն հպատակիլն հոգ չըլլալուն ալ տգէտ չէք : Բայց իբրեւ եկեղեցական մարմին , այս ընտրութիւնը՝ իր սահմանադրուած կերպէն ուրիշ կերպի կրնա՞յ արդեօք փոփոխուիլ : Եթէ չկրնար , ապա ո՞րն է եկեղեցւոյ կառավարութեան յատուկ կերպը , որով առանց բացառութեան վարուելու պարտական է ամէն ժողովուրդ :

ՊԱՏԱՍԻԱՆ



Ս) Երկու մեծ տեսակ ըսածը՝ խորագրին մէջ գրածներն են , ասոնց ինչ ըլլալը առաջ հասկընալ պէ՛տք է :

Ս) Իապետական կառավարութիւնն է այն որ միայն մէկ իշխողի մը հրամանով եւ կարգադրութիւնովը կը տնօրինուի . եւ թէպէտ տնօրինուելու գործերը բազմատեսակ ըլլալուն համար ամէն մէկը զատ զատ տեսուչ ունի որ նոյն գործոյն մատակարարութեանը գլուխ է՝ եւ կըսուի , եւ իւրաքանչիւր տեսուչ նոյն գործոյն վրայ իր հրամանին տակը գործակալներ ունի , բայց ամէնքն ալ իրենց գործը այն մէկ հատիկ գերագոյն գլխոյն կամ իշխանին անունովը կընեն , եւ անոր պատասխանատու են : Այն գերագոյն գլուխը կամ իշխանը կըսուի միապետ , կայսր , թագաւոր եւ այլն :

Սահմանադրական կառավարութիւնն է այն՝ որ վարչութեան հաս-
տատուն օրէնքներ ունի . անանկ որ՝ այս կերպ կառավարութեան գը-
լութիւնը կամ գլուխները իրենց հաճոյիցը հետեւելով՝ այն օրէնքէն դուրս
բան չեն կրնար ընել : Այլ օրէնքը ամէն հպատակներուն ծանօթ եւ պար-
տաւորիչ ըլլալու համար հրատարակուած ըլլալու է . անանկ որ այս
տեսակ կառավարութեան մէջ չհրատարակուած օրէնքը մարդ չպարտաւորեր :

Այս ծանօթութիւններու նայելով՝ որ աշխարհավարական Կի-
տութեան (բօլիզիքի) տեղեակ մարդիկ ամէնն ալ ընդունած են , ամէն
տեսակ կառավարութիւն կրնայ սահմանադրական ըլլալ . թէ՛ ճիւղապետի ըլ-
լայ , թէ՛ աշխարհապետի եւ թէ՛ սահմանադրական : Վաղղիայի եւ Անգ-
ղիայի եւ եւրոպական ուրիշ քանի մի տէրութեանց կառավարութիւնը
սահմանադրական է , միանգամայն եւ ճիւղապետի : Սօսիւսթիէրի ձեռքին
տակը Վաղղիայի առ ժամանակէն սահմանադրականը 1793ին , սահմանադրու-
կան չէր , բռնական էր : Միայն մէկ տեսակ կառավարութիւն մը կայ որ
սահմանադրական չկրնար ըլլալ . եւ այն է բռնակալութիւնը . (տէքսթիլ) :

Այս ծանօթութիւնները Պ . Մատթէոսին կիցնար տալ . բայց
զանց ըրեր է մեզ գիտցած ենթադրելով : Ամ գիտցածս այս է . եւ
ասոր նայելով՝ կառավարութեան երկու մեծ բաժանում չեմ ճանաչեր
ատոնք , որովհետեւ մէկը մէկալին հետ մէկ տեղ կրնայ ըլլալ : Առժա-
նում այն ժամանակը կըլլար՝ երբ միապետական կառավարութիւնը
սահմանադրական ըլլալու կարող չըլլար իր ներքին հանգամանացը կող-
մէն . եւ սահմանադրականն ալ միապետական չըլլար : Ահա՛ այս հի-
մամբ անոր ըսածը չեմ գիտեր եւ չեմ ընդունիր :

Իայց այն կընդունիմ որ ամէն ազգ կրնայ սահմանադրական միա-
պետականի ալ հնազանդիլ . սահմանադրական ռամկապետականի ալ ,
բռնակալ կառավարութեան ալ , ո՛ր տեսակ կառավարութեան տակ գըտ-
նուած է նէ՛ անոր չէ՛ թէ միայն կրնայ , այլ պարտական է հնազանդե-
լու . եւ չհնազանդողին պատիժն է բռնակալ կառավարութեան մէջ մահ .
իսկ սահմանադրական կառավարութեան մէջ՝ աքսոր . որոց երկուքը՝ թէ-
պէտ պատժաւորին նկատմամբ շատ մեծ տարբերութիւն ունին . բայց
քաղաքական ընկերութեան նկատմամբ արդիւնքը մէկ է . անհնազանդը
ընկերութենէն հեռացընելով եւ մինակ ձգելով՝ անոր ապստամբութիւ-
նը ճարակելուն եւ զօրանալուն առաջն առնել :

Այնտութիւն մը իր կառավարութեան կերպը կրնայ փոխել եւ
ուրիշ կերպ մը ընտրել . եւ ասիկայ օրինաւոր կըլլայ՝ պետութեան
գլխոյն կողմէն ըլլայ նէ այդ փոփոխութիւնը : Իայց թէ որ հասարա-
կութիւնը ոտք ելլէ , եւ պետութեան գլխոյն վրայ բռնանալով իր
ուզածը ընել տայ նէ՛ պարզ բառով սպառնալիս կըսուի . որն որ

ետքի ժամանակիս աշխարհավարները անուշոցուցած են այլ եւ այլ կերպ զրուցուածքներով : բայց ասոնք մեր խօսքէն դուրս են :

Եկեղեցական կառավարութիւնը այդպէս փոփոխութեան տակ չկրնար մտնել : Իսկ թէ ո՞րն է եկեղեցւոյ այս անփոփոխ ըսուած կառավարութեան կերպը , խօսքերնիս ետքը չկրկնելու համար պէ՛տք է որ այս պատասխանները մինչեւ վերջը կարդացուին . վասն զի ասոր վրայ խօսելու կարգը քանի մի անգամ պիտի գայ . եւ մենք ասոնց մէջէն պատշաճագոյնը պիտի ընտրեմք :

ՀԱՏՈՒԱԾ . Բ .

Պ . ՄԱՏԹԷՈՍ

Նաեւ կարծեմ , զանազան դարերէ 'ի վեր զանազան եկեղեցեաց պատակտութեան , եւ ժամանակէ մը 'ի վեր մանաւանդ վերջին օրերս՝ տաք կերպով զանազան երեւոյթներու տակ ազգերնուս մէջ յուզուած տարաձայնութեանց բուն պատճառը՝ մի միայն այս խնդրոյս լուծումը չք գիտցողներուն տգիտութիւնը , եւ գիտցողներէն ոմանց խորամանկութիւնը ըլլալն ալ կը խոստովանիք :

ՊԱՏԱՍԻԱՆ

Պ . Մատթէոսը իրեն միտքը դրածները մէկ մէկ անհերքելի եւ անջրելի առած կարծելու սովորութիւն մը ունի . առաին հատուա՛ին մէջ՝ կառավարութեան միապետականի եւ սահմանադրականի բաժանմանը իմ գիտնալս վկայ բերաւ . եւ մենք տեսա՛նք որ իր գիտցածը սխալ եւ անհիմն է : Զոս ալ՝ ինծի համար կարծածը թէ կը խոստովանիմ , հիմ մը չունի : Այս ուրիշ ըսելիք ունիմ ասոր . բայց քիչ մը ետքը , երբ խօսքին կարգովը՝ ասոր վրայ նորէն գանք :

ՀԱՏՈՒԱԾ . Գ .

Պ . ՄԱՏԹԷՈՍ

Իբրեւ քաղաքական Ազգ մը , ըստ ամենայնի կատարեալ կառավարութիւն չունինք ալ նէ , զանազան տէրութեանց մէջ ազգերնուս ըստ գոյին շնորհուած քաղաքական կառավարութիւնները մինչեւ ցայսօր Սահմանադրական սկզբամբ 'ի գործ դրված ըլլալը յայտնի եւ անտարակուսելի է ամէն ուն , որն որ աւելի բարեկարգութեամբ մը եւ ընդհանուր հաճութեամբ հաստատուած Ազգային Սահմանադրութիւնը վաւերացուց : Ասոր՝ գութ ալ , մենք ալ եւ ամէնքս ալ 'ի վերին երեսս ըսելիք մը չունինք :

Եւս ասոր քիչ մը ըսելիք ունիմ. սւստի զիս ալ ըսելիք չունեցողներուն կարգը կարծելը Վ. հատուածին մէջ ըսածիս կարգն է. Սեր ազգը ո՛չ էքրե, եւ ո՛չ էքոտ, քաղաքական ազգ չէ: Վաղաքական ազգ ըլլալու համար անկախութիւն եւ ինքնօրինութիւն պէտք է. այսինքն՝ ուրիշէ կախում չունենալ. ինքն իրեն համար զատ առանձին օրինակիւք եւ կանոններ ունենալ եւ անոնցմով կառավարուիլ: Սենք լոկ քաղաքականութեան կողմէն՝ ո՛ր տէրութեան հպատակ եմք նէ անկէց զատուած չեմք, եւ միայն կրօնական կառավարութիւնով անոնցմէ կը զատուիմք. մեր ազգային կառավարութեան հիմը կրօնական է. անոր համար ամէն տէրութիւն մեր ազգին գլուխ կը ճանաչէ մեր կրօնական գըլուխը. () սմանեան տէրութեան առաջը ազգերնուս գլուխ կը սեպուի Կոստանդնուպօլսի պատրիարքը*. () ուսաց մէջ՝ Սուրբ Լշմիածնի կաթողիկոսը. «Վարսից մէջ՝ Թուղայու արք եպիսկոպոսը կամ ուրիշ մը. եւ աշխարհական մեծերն ազգապետ կը ճանչցուին նէ՛ ինքնին չէ՛. իւրքեւ կրօնական մեծին խորհրդակից սեպուելով է:

Ինաւ մէկ տէրութիւն մը՝ որքան որ գիտեմք՝ մեր ազգին քաղաքական կառավարութիւն տուած չէ՛ ո՛չ ըստ քոյնն՝ ո՛չ ըստ շէննի: Եւ միայն թոյլտուութիւն մըն է ըրածը, որ կրօնից եւ եկեղեցական կանոնաց պահանջելոյն համեմատ ներքին կառավարութիւն մը ունենամք: Երբ այս կերպ ներքին կառավարութեան սահմաններ մենք մեր մէջը դնեմք եւ տէրութեան առաջարկեմք նէ՛ կրօնականի վերաբերեալներուն բան չըսեր. քաղաքականի վերաբերեալները իր օրէնքներուն կը համեմատէ, եւ ըստ այնմ կընդունի կամ կը մերժէ:

Եւս կառավարութիւնը մինչեւ հիմայ սահմանադրական սկզբունքով վարուիլը քիչ մը ինծի համար մութ եւ տարակուսելի է, որ միտքս դրած եմ թէ՛ սահմանադրական կանոնները հրատարակուելէն ետքը պարտաւորիչ կըլլան: (Եւս է վէր, Հաստատ Վ.): Պ. Սատթէոսը որ այս ըսածը հաստատելու համար կամ իմ միտքս դրածս ջրելու է, կամ 1860ին շինուած ազգային սահմանադրութիւնէն առաջ ազգին ո՛ր եւ իցէ կառավարութեանը համար հաստատուած եւ հրատարակուած սահմանադրութիւն մը ցուցընելու է. երբ ասոնց երկուքին ալ անկարող գտնուի՝ կիմանամք որ ո՛չ Կառավարութեան ազգ ինչ ըլլալը գիտէ, եւ ո՛չ Կառավարութեան կառավարութիւնը:

* Ասոր համար ազգային սահմանադրութեան մէջ (յօդ. 3 եւ 14.) ըսուած է. սազգային վարչութեան պաշտօնական գլուխ՝ Պօլսի պատրիարքն է ո՛ր:

Ըստ ծննդի տարեկան կը հետեւի որ՝ 1860ին շինուած ազգային սահմանադրութիւնը մեր ազգին քաղաքական մասին առաջինն աւելի բարեկարգութեամբ կանոն չաւանդեց . որովհետեւ առաջին չկայ որ այս անկէց աւելի բարեկարգ ըլլայ :

Ընտրած մեր ըսելիքն այս է . ինքը՞ . Մատթէոսը ըսելիք չունիմ կրսէ նէ՝ պարզապէս ըսելիք չունենալ չհասկընամք . չէ՛ նէ կը խառնուիմք : Դ՛ Վերին երէս՝ բառերը հսն զիպուածով դրուած չեն . Ի՛ ներքին երէս՝ ըսելիք մը պիտի ունենայ . այն ալ մեր ըսելիքին պէս անվնաս չէ՛ ձոր յայտնի ըսէ , ինչպէս որ մենք ըսինք : Արեւի է որ այս Ի՛ ներքին երէս՝ ըսելիքներն ալ Ի՛ վերին երէս՝ ելլէ՛ երբ սահմանադրութեան երեք տարին լիննայ եւ վերադարձուիմ ժամանակը գայ . բայց այն ատենն ալ՝ սահմանադրութիւնները քննութեան առնելու համար ընդհանուր ժողովին առաջարկողը աշխարհին վերջիննն պիտի ըլլայ . Պ . Մատթէոսը այն ժամանակը ազգային վարչութեան մէջ չգտնուի նէ՝ ըսելիքն ալ փորը կը մնայ . թէ որ օգտակար բան մըն էր նէ՛ այն օգուտէն պիտի զրկուինք : Տեսնենք ուրիշ ըսածները :

ՀԱՏՈՒԱԾ Դ .

Պ . ՄԱՏԹԷՈՍ

Բայց եկեղեցակա՛նը * : Ահաւասիկ հոս է խնդիրը : Եւ անտարակոյս՝ այս խնդրոյն յաւիտենական վճռով որոշուած ըլլալուն տգէտ կամ տարադէպ համոզուած եւ կամ գիտութեամբ մեղանշող անձինք էին , որ մէկը՝ ելաւ ըստ Սահմանադրութեան կազմուած Ազգային Երեսփոխաններուն քուէ տալը՝ խղճմտանքի դէմ հրատարակեց , ուրիշը՝ Պօղոս վարդապետին դատապարտութեան գործին մէջ ժողովուրդին մասնակցութիւն ունենալը՝ հաւատոյ սկզբան դէմ քարոզել ուզեց . եւ վերջապէս անոնց ամէնուն եւ խել մը ուրիշներուն կողմէ ալ միամտաբար սահմանադրական սկզբունքին ամենայն ոգւով դէմ կեցուելու առ հասարակ ոգի մը կը յայտնուի . որոյմէ մէկն ալ էք նաեւ հրամանքնիդ :

ՊԱՏԱՍԻԱՆ

Ըստ վերջին խօսքը՝ մասնաւոր ինծի ուղղուած , լոկ մարգարէութիւն մըն է . իսկ թէ ասով Պ . Մատթէոսը ճշմարիտ մարգարէ՞ մի պիտի սեպուի՞ սուտ մարգարէ՞ մի , պատասխանելոյս կարգովը յայտնի կը տեսնուի :

* Աստիկաները Պ . Մատթէոսին գրածին է :

Եկեղեցական սահմանադրութիւնը յաւիտենական վճռով որոշուած ըլլալը չգիտցող կամ գիտնալով չընդունող եւ մեղանչող անձեր կորուշէ : Առաջին որոշման մէջ՝ ազգային վարչութենէ հրատարիլը ինքնին պարսաւելի բան մը չէ՛. ազգային սահմանադրութեան մէջ (յօդ. 145) մեռնելուն համար ժողովքէն պակսողն ու հրատարմամբ ժողովքէն պակսողը մէկ կը սեպէ . եւ քաղաքական ժողովքին անդամներուն ընտրութեանը ժամանակը քանի մը յարգի անձերուն հրատարումը առանց պախարակելու ընդունուեցաւ . երբ տեսան որ հրատարման օրինաւոր պատճառ կար : Աստի այս բանս ընդունելի կամ պախարակելի ըլլալուն համար իր պատճառէն կախում ունենալով առանձին յիշելը աւելի բան է : Եկեղեցականներուն ընտրութեան համար ազգին երեսփոխաններուն քուէ տալը խղճմբտանքի դէմ հրատարակեց ըսածն ալ տարտամ է . ի՞նչ ընտրութիւնը . կարգաւոր ըլլալու համար՝ թէ կրօնական ժողովոյ անդամ ըլլալու համար : Ա. Սատթէոսը ասոր տարտամութիւնը չգիտցող չէ՛. դիպուածով տարտամ գրած ալ չեմ կարծեր . կարգաւոր ըլլալու համար ընտրութիւնը ըսել կուզէ . որ նամակին ետքի խօսքերովը կը բանայ . մէնք ալ այն ատենը կըսենք ըսելիքնիս : Առ այժմ միայն սա՛ ըսեմք թէ՛ ազգային սահմանադրութիւնը եկեղեցական ըլլալու մարդոց ընտրութեանը ընդհանուր ժողովքէն կամ ազգին երեսփոխաններէն կամ ո՛ր եւ իցէ աշխարհականէ ընտրուելուն վրայ բան չըսեր . ըսածը միայն սա երկու յօդուածներն են :

23. « Թէ՛ մայրաքաղաքիս եւ թէ՛ գաւառներու մէջ վարդապետի եւ քահանայի ձեռնադրութեան հրամանը կրօնական ժողովքէն կը տրուի » : Այս կրօնական ժողովը ամէնն ալ եկեղեցական պիտի ըլլան : (Գե՛ն ազգային սահմանադր. յօդ. 20) :

24. « Քանի՛ որ եկեղեցւոյ մը ժողովուրդը աւելի քահանայի մը հարկաւորութիւնը չըզգայ եւ թաղական խորհրդին միջնորդութեամբը չխնդրէ , նոյն թաղին եկեղեցւոյն համար քահանայի ձեռնադրութեան հրաման չպիտի տրուի » : Ասկ թէ քահանայ պէտք ըլլալը ժողովուրդը թաղական խորհրդին միջնորդութեամբը իմացընելէն ետքը քահանայ ըլլալու մարդը ո՛վ պիտի ընտրէ : ասոր վրայ սահմանադրութեան մէջ ամենեւին խօսք չկայ :

Աստի՛ եկեղեցականներուն ընտրութիւնը երեսփոխաններուն քուէ տալովը ըլլալուն խիղճ ընողները՝ կրօնական ժողովոյ անդամոց ընտրութեանը վրայ խիղճ ըրին ըսէր նէ սահմանադրութեան դէմ ցուցուցած կըլլար . բայց բանը այնպէս չէ՛ : Այս կերպով բողոք ըրին կարծուածները միտքերնին անանկ դրիր էին որ սահմանադրութեան տրուած պարեալ օրինակը՝ ստորագրեալ ձեռագրէն տարբերութիւն ունի , եւ թէ

ձեռնադրին մէջ կրօնական ժողովին ընտրութիւնը մայրաքաղաքիս մէջ գտնուող բոլոր եկեղեցականաց գաղտնի քուէարկութեամբն ըլլալ գրե- ուած էր, տպեալին մէջ փոխուելով երեսփոխաններուն ժողովքին քը- ուէարկութեանը ձգուեր է: Այս կարծիքնին հիմնաւոր էր կամ չէ՞ր, չեմք գիտեր. վասն զի սահմանադրութիւնը տպուելէն ետքը ձեռագիրը մէկ մըն ալ չերեւցաւ որ անոր հետ բաղդատելով ստուգուէր կամ սուտ ելլէր ասոնց կարծիքը:

Արրորդ կարգ անձինք կ'որոշէ անսնք՝ որ Պօղոս վարդապետին դատապարտութեան գործին մէջ ժողովուրդին մասնակցութիւն ունենա- լը հաւատոյ սկզբան դէմ քարոզել կուզին եղեր: Պ. Սատթէոսը չը գիտեր որ այս կերպ մասնակցութիւնը ապօրինաւոր դատողները ասիկայ հաւատոյ սկզբան դէմ է չին ըսեր. եկեղեցական կանոնաց եւ կարգա-ւորութեան դէմ է կըսեն: Ասոնցմէ մէկն ալ ես եմ եղեր. եւ Պ. Սատթէոսին մարգարէութիւնը հոս է: Ար ճանաչեմ ես թէ հաւատոյ սկզբունքը ի՞նչ է. եկեղեցւոյ կանոնը ի՞նչ է. եւ ո՞ր բանն է ասոնց մէկին կամ մէկալին դէմ: Այց ուրիշին ըսածը ծուռ մեկնելու զբա- ղելով ինքն ուրիշ սխալ մը կը գործէ, որովհետեւ «ասոնց կողմէն՝ սահմանադրական սկզբունքին ամենայն ոգւով դէմ կեցուելու առ հա- սարակ ոգի մը», տեսեր է. երբ (մասնաւորապէս այս վերջինս) սահ- մանադրութեան չէ՛ թէ միայն սկզբունքին՝ այլ եւ մասնաւոր խօսքին՝ ալ համեմատ է: Սկզբունքներուն Ա. ը այս է՝ մեր նպատակին յարա- բերութեամբ. «ազգային վարչութեան պարտականութիւնն է՝ . . . Հա- «յաստանեայց սուրբ եկեղեցւոյ դաւանութիւնն ու աւանդութիւնները «անխախտ պահել»: Այն ըսած մարդիկդ՝ որոց մէկն ալ ես եմ եղեր, այս սկզբունքին չէ՛ թէ ոգւով չափ, այլ մազիւ չափ դէմ նետուելու ոգի ունենալնուն ապացոյց ուղին նէ քեզնէ՛ պարո՞ն Սատթէոս. ի՞նչ ըսելիք ունիս: Աստի այդ ըսած մարդոցդ հետ մէկ տեղ ես ալ քու այս անհիմն զրպարտութեանդ վրայ բողոք ունիմք:

Պօղոս վարդապետը եկեղեցական անձ մը ըլլալով՝ ամէն քրիս- տոնեայ ազգերուն անյեղլի եւ նախնի սուրբ հարց կանոններուն հա-ւանձայն օրինօքը ասոր դատը տեսնելը եկեղեցականներուն կիսնայ. այ- սինքն՝ կրօնական ժողովքին. որուն վերաբերեալ գործերուն կարգը սահմանադրութիւնը կը դնէ նաեւ «եկեղեցեաց եւ եկեղեցականաց բարեկարգութեանը հսկել» (Սահմանադր. յօդ. 21). եւ թէ որ ծանր խնդիր մը պատահի՝ այն ատենն ալ երեսփոխաններուն ժողովքին հա- նել կամ ինչ եւ իցէ կերպով ժողովուրդը անոր դատապարտութեան մասնակից ընել չկայ. այլ տե՛ս ինչ կըսէ. «երբ պատահի կրօնական «այնպիսի ծանր խնդիր մը զոր կրօնական ժողովը չկրնայ լուծել, ընդ

« Հանուր ժողովին բազմական դանձրիոյ եկեղեցականաց հետ համա-
 « դումար ժողով պիտի կազմէ . եթէ այն համագումար ժողովն ալ իր
 « ձեռնահասութենէն վեր դատէ զինդիրը , Արարտեան Մայր Ա-
 « թուին պէտք է դիմէ » (յօդ . 22) . Հիմայ քեզի կը հարցընեմ պա-
 « րո՞ն Մատթէոս . 1 . Պօղոս վարդապետին դատը կրօնական ժողովի՞ն
 կը վերաբերի թէ ժողովուրդին , (երբ գատի եւ դատապարտութեան
 վերաբերեալ բաներուն մէջ ժողովուրդ ամենեւին յիշուած չէ՛ սահ-
 մանադրութեան մէջ) : 2 . այս դատը ծա՞նր է թէ թեթեւ : (Թէ որ
 ծանր է նէ՛ ընդհանուր ժողովին ներկայ գտնուող եկեղեցականներով
 ժողով պիտի ըլլայ . եւ ասոնք են Պօլիս գտնուող եպիսկոպոսները
 եւ Պօլսի եկեղեցեաց քարոզիչ վարդապետներն ու աւագերէցները .
 ինչպէս կը գտնեմք նոյն սահմանադրութեան մէջ . (յօդ . 9) : Ըսոնց
 ալ ծանր երեւի նէ սուրբ Աջմիածին պիտի վերնայ դատը : Իսկ թէ որ
 թեթեւ է նէ՛ կրօնական ժողովը պիտի կրնայ լուծել : Ար տեսար
 ասոնց մէջ՝ Պօղոս վարդապետին դատապարտութեան դործին մէջ ժո-
 ղովորդեան ալ մասնակից ըլլալու իրաւունքը : Մենք ամենայն ոգով
 դէմ կը կենամք սահմանադրութեան սկզբունքին եւ տրամադրութեանցը
 հակառակողներուն դէմ . որոց մէկն ալ դուն ես :

Իայց բան մը հարցընեմ քեզի : Արք սահմանադրութեան սկզբ-
 բունքներուն մէջ իրօք հաւատոյ սկզբան հակառակ բան մը գտնուի նէ՛
 ի՞նչ ընել խրատ կուտաս մեզի . հաւատոյ սկիզբը մէկ դի ձգենք թէ
 սահմանադրութեան սկզբունքը : Բսել չեմ ուզեր թէ սահմանադրութեան
 սկզբունքը հաւատոյ սկզբան դէմ բան կը պարունակէ . վերը ասոր հա-
 կառակը տեսանք որ Ա . սկիզբը՝ Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանու-
 նութիւնն ու աւանդութիւնները անխախտ պահելը ազգային վարչու-
 թեան պարտականութիւն կը դնէր : Այլ կըսեմ . թէ ասոր հակառակ
 սկզբանց վրայ շինուած ըլլար սահմանադրութիւնը նէ ի՞նչ ընելու էր :

Ար լուես . բայց ըսածիդ չափը բաւական է միտքդ հասկըցընե-
 լու : Այկեղեցականի մը դատապարտութեան աշխարհական մասնակից ըլ-
 լալը հաւատոյ սկզբան դէմ քարոզել ուղղոյններուն խիղճը հանդարտեցը-
 նելու տեղը՝ թէ ասիկայ այդպէս չէ՛ . սահմանադրութեան սկզբունք կը
 ցուցընես : Ասկէց ի՞նչ կը հասկըցուի . ըսել կուզես որ՝ հաւատոյ
 սկզբան համեմատ կամ հակառակ ըլլալուն նայելու չէ՛ , սահմանադրու-
 թեան սկզբունքներուն համաձայնը բռնելու եւ հակառակը հերքելու է :
 Ըսով ինչպէս որ ազգին լրութիւնը սահմանադրութիւն մը կազմեց ,
 դուն ալ եկեղեցի մը պիտի կազմես նոր . բայց զիտցած ըլլաս որ հիմ-
 քունի . սահմանադրութեան սկզբունքը քեզի հիմ կը կարծէիր նէ՛ անի-
 կայ հաւատոյ սկզբան հետ համեմատ ելաւ . եւ այն սկզբան՝ եւ սահ-

մանագրութեան 22 յօդուածին ո՞վ որ հակառակ դայ եւ կրօնական
ժողովքին վերաբերեալ դատաստանական գործի միջամուխ ըլլայ . թէ՛
ժողով , թէ՛ խորհուրդ , թէ՛ վարչութիւն , թէ՛ Մեղս , թէ՛ զըն-
նամիջեան ժողովակ* , ասոնք ամէնն ալ սահմանադրապէս մերժելի եւ դա-
տապարտելի են :

ՀԱՏՈՒԱԾ Ե .

Պ . ՄԱՏԹԷՈՍ

Ասանկ պարագայի մը մէջ , կըսեմ . օգտակար է որ մտքերը աղէկ բա-
ցատրուին եւ հրապարակաւ գիտցուին . եւ նախ եկեղեցական կառավա-
րութեան կերպին ի՞նչ ըլլալը քննուի եւ հակըցուի :
Ուրիշ երեւոյթի տակ այս նիւթիս վրայ ձեր Պ . Նալբանդեանցի նամակին
գէմ գրած մէկ յօդուածնիդ , որ Երեւակիդ 87 թուոյն մէջ հրատարակե-
ցիք . ճշմարիտը խօսելով , ձեր համբաւեալ իջխոփայական եւ աստուածա-
բանական հիտուութեանը եւ համբաւոյն պատիւ չբերեր . եթէ իրաւ ներքին
համոզմամբ էք գրած :

ՊԱՏԱՍԻԱՆ

Մեր ուղածն ալ այդ էր որ միտքերը աղէկ հասկըցուին . եւ
մինչեւ հիմայ քննութեան առնուած խօսքերուն մէջ քանի մի աղէկ չը
բացատրուած բաներ գտնելիս մեզի աղէկ չերեւցաւ . զոր օրինակ այն՝
որ Պ . Մատթէոսը չէր բացատրեր թէ միտքիս եւ սահմանադրական
կառավարութիւնները ինչո՞վ այնքան իրարմէ կը տարբերին որ ասոնց եր-
կուքը մէկ տեղ չկրնալ ըլլալ կենթադրէ . վասն զի կառավարութիւնը
այս երկու բաժանմունքն ունի ըսելն այն ըսել է : Ի՞նչ որ է նէ՛ հոս
(դո՛նէ ասկէց ետքը) միտքը աղէկ բացատրել կը խոստանայ . բայց այս
խօսքին վրայ պիտի կենա՞յ մի չկենա՞յ մի խօսքերուն կարգէն կը տես-
նեմք :

Երեւակին մէջ Նալբանդեանցին դէմ գրած յօդուածներնուս դա-
տաքննութիւնը քեզնէ չէի սպասեր պարո՞ն Մատթէոս : Ե՛րբ յօդ-
ուածին նիւթը կրօնական է . դատելը եւ դատապարտելը կամ արդարա-
ցընելը կրօնական ժողովքին կիցնար : Եւ երբ կրօնական վէճի մը վը-
րայ՝ եկեղեցական եւ քաղաքական մեծապատիւ եւ խոհական անձինք-
ներէ բաղկացեալ ընդհանուր ժողովքն անգամ դատաստան չկրնար

* Կոստանդնուպօլիս Մեծ Նոր խանը վերի յարկի եւ ներքին արտաքին
գրան մէջ տեղը յատկացած Մեղուեանց ժողովարանն է :

հարեւ եւ վճիռ չկրնար տալ, եւ այն ժողովքին ալ չկարեւոյր բանը
 Ս. Լճմիածին իմացընել կը անօրինէ՝ աղգային սահմանադրութիւնը նէ,
 ինչպէս որ նախընթաց հատուածին պատասխանեոյն մէջ տեսանք, հը-
 բամանքդ ո՞վ կըլլաս կոր որ, կրօնական ժողովքին եւ եկեղեցա-
 կանաց համագումար ժողովին՝ եւ սուրբ Լճմիածնի գերագոյն աթոռոյն
 անգամ իրաւունքը կը յափշտակես, եւ մեղը շինելու անկարող հեղու-
 բճիծին մէջ դատողական ատեան կազմելով պարսաւոյ եւ դատապարտու-
 թեան վճիռներ կարձակես: Թէ որ աստուածաբանական գրուածներուս
 դէմ ըսելիք մը ունիս եւ սահմանադրութեան կանոններուն պիտի հը-
 պատակիս նէ՝ կրօնական ժողովքին բողոքոյ գիր մը գրէ՝. այն ալ՝ երբ
 որ առաջ առանձին մէկ մը ինծի գրես եւ մտիկ չընեմ նէ: Թէ որ
 բողոքդ կրօնական ժողովքին վրայ աղգեցուցութիւն մը չըրաւ նէ՝ ընդ-
 հանուր ժողովին բազմական գտնւիող եկեղեցականներով համագումար
 ժողով ուզէ. Թէ որ քու ուզածիդ պէս չվճռեն նէ սուրբ Լճմիածին
 գրել տո՛ւր սրբազան պատրիարքին ձեռքովը (Սահմանադր. յօդ. 8 ՚ի
 վերջն). կամ դուն գրէ՛: Ի՞նչ է պատճառը որ այս քրիստոսակարգ խո-
 հական կերպը ձգեցիր՝ եւ ամէնէն վերջն անգամ չկրնալ ընելիքդ ա-
 մէնէն առաջ ընելու յանդգնեցար: Այսքանովս կը յուսամ Թէ համող-
 ուած կըլլաս որ մինակ այս գործովդ սուրբ Աւետարանի պատուէրին
 ալ դէմ գործ եցիր, սահմանադրութեան սկզբունքին ալ, կրօնական ժո-
 ղովին վրայօք նոյն սահմանադրութեան դրած կանոնին ալ: Հապա
 ի՞նչ էր մեղի համար դատախազութիւն ընելդ, Թէ սահմանադրական
 սկզբունքին ամենայն ոգևով դէմ կենալու ոգի կը յայտնեմ եղիք: Այո՛ կը
 յայտնեմ. բայց քո՛ւ վրայդ եւ ուրիշ քեզի պէսներուն վրայ նոյն ոգին
 կը ահաճեմ նէ:

Բայց այդպէս ընելուդ մէկ կողմէն կը ներեմ (իբրեւ ըրածը չը
 գիտցող տղու), կարծեմ՝ դու ալ փիլիսոփայական եւ աստուածաբանական
 հմտութիւնները քու վրայ ցուցընելով համբաւ վաստըկիլ կուզես.
 Բայց ասոնց երկուքն ալ առաջ սորվելու՝ ետքը վիճելու է. չսովորած
 վիճաբանութեան մէջ մտնելն է որ պատիւ չբերեր. իսկ այն գրած յօդ-
 ուածոյս ինծի պատիւ չբերելը քեզնէ կը լսեմ կոր, որ արժանա հաւատ
 վկայ մը չես. որովհետեւ դուն սահմանադրութեան դէմ կը գործես,
 ինչպէս որ տեսանք, եւ զիս անոր դէմ ցուցընել կուզիս, որ բարեկամի
 նշան չէ. եւ այդպէս վկայութիւն մը թշնամուոյ բերնէ լսուի նէ հա-
 ւատալի չըլլար:

Հատուածիդ վերջը մեկ հիւանալի զրուցուածք մը կայ: Արսես
 Թէ այն գրածներս ինծի պատիւ չբերեր եղեր. «Եթէ իրաւ ներքին
 համոզմամբ էր գրած», Վեղի համար չէ՛ ըսելիքս. խօսելէն ա-

առջ խօսելիքին վրայ մտածել ու ուղղ ուսումնականներուն ջայտնի է որ՝ մէկ խօսքին մէջ թէ ու թիւն կամ պայման մը մտնելու ըլլայ նէ, խօսքին ճշմարտութիւնը բացարձակ չըլլար. այն պայմանը քանի՛ որ կայ նէ՝ խօսքը ճշմարիտ կըլլայ. պայմանը վերնայ կամ փոխուի նէ՝ խօսքին ճշմարտութիւնն ալ կը վերնայ կամ կը փոխուի: Թէ որ Վալմանդեանցին նամակին դէմ գրածս իրաւ ներքին համոզմամբ գրած էի նէ՝ իմ հմտութեանս պատիւ չբերեր եղեր. թէ որ ներքին համոզմամբ գրած չեմ նէ՝ պատիւ պիտի բերէ եա՛: Վայց նախապէս՝ ներքին համոզմամբ չգրել ըսելը՝ իր զիտցածին դէմ սուտ գրել ըսել է. եւ սուտ գրելն է որ մարդոյն պատիւը կորսընցընել կուտայ. ներքին համոզմամբ գրողը սուտ ալ գրէ նէ՝ իր ներքին համոզումը զինքը կարգարացընէ. վասն զի մէկ մարդ մը որքան իմաստուն ըլլայ նէ՝ ամէն բան աղէկ չկրնար գիտնալ: Եւ երկրորդ. ի՞նչ նշան կայ ճանչնալու որ գրուածը ներքին համոզմամբ է մի չէ՞ մի: Ասիկայ մէկ մը սրտին խորը քննող Աստուածը՝ մէկ մըն ալ գրող մարդը կրնայ գիտնալ. իսկ պատիւն ընողը ուրիշ մարդիկ են: Ասով քու ըսած պատիւդ՝ առաջին նկատմամբ } գէշ բան մըն է. որովհետեւ ներքին համոզման դէմ սուտ խօսելով վաստըկուած պիտի ըլլայ: Երկրորդ նկատմամբ՝ ամենեւին անհիմն բան մըն է. որովհետեւ այնպէս բանի մը վրայ կայացած է՝ որ մարդոց գիտնալն անհնար է: Այս ըսածներս ալ քու կին տրամաբանական քաջ վարժութեանդ վկայականն ըլլայ մեր կողմէն:

ՀԱՏՈՒՍԺ. 2.

Պ. ՄԱՏԹԷՈՍ

Չանազան դարեր եւ հիմայ եկեղեցական կառավարութեան ուրիշ ազգի մէջ ի՞նչ ըլլալը պէտք չէ՝ մեզի հոս քննել. մնալի հիմայ սա գիտնալ բաւական ըլլայ միայն, թէ այս կառավարութեան բուն սահմանագրուած կանոնական կերպը ի՞նչ է. եւ ի՞նչ կերպով գործադրուած է մինչեւ հիմայ, եւ այժմ ի՞նչպէս կը գործադրուի մեր ազգին մէջ:

ՊԱՏԱՍԻՍԱՆ

Արօնական հնութեան այդ կարեւոր խնդիրներուն լուծումը սովորիլ մեր ալ շատ փափաքած բանն է. բայց քան սահմանագրուած կերպը պիտի քննես նէ՝ եկեղեցական կառավարութեան ուրիշ ազգի մէջ ի՞նչ ըլլալը իբրեւ անպէտ մէկ դի ձգելովդ կը սխալիս: Հայաստանեայց սուրբ եկեղեցին Վրիստոսի մի միայն սուրբ եւ ընդհանրական եւ առաքելական եկեղեցւոյ մէկ մասն է. ինք իր գլխուն զատ եկեղեցի չէ՛. եկեղեցւոյ վերաբերեալ կարգադրութիւնները՝ որոց գլխաւորն է

անոր կառավարութեան կերպը՝ 'ի Վրիստոսէ սահմանեալ է հարկաւ ո
դու ալ ասիկայ կընդունիս, ինչպէս որ հետեւեալ հատուածիդ մէջ պի
տի տեսնեմք: Ամեն քրիստոնեայ ազգ՝ որ հիմա իրարու հաղորդակից
չըլլալով իրարմէ առած չեն կընար ըլլալ, հարկաւ Վրիստոսէ եւ ա
ւաքեալներէն եւ իւրաքանչիւրը իրեն հայրապետներէն սովորած կըլլան:
Հայաստանեայց եկեղեցին իր կառավարութիւնը զատ Վրիստոսէ մը չը
սովորեցաւ. ուստի ուրիշ եկեղեցիներուն համաձայնութիւնը նայելնիս ա
մենահարկաւոր է, թէ որ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ դաւանու
թեանը եւ աւանդութեանցը պաշտպան պիտի կենամք սահմանադրու
թեան սկզբանցը համաձայն:

Իայց յանդիմութիւն մըն ալ՝ « եկեղեցական կառավարութեան
ուրիշ ազգի մէջ ինչ ըլլալը պէտք չէ՝ մեզի հոս քննել », ըսելով, մէկ
դի նետելդ չէ՞ մի. երբ կը տեսնեմք որ մեր նախնիքը Անկիւրիոյ եւ
Վէոկեսարիոյ եւ Նիկիոյ եւ Կոստանդնուպօլսի եւ Լչփեսոսի եւ Սար
դիկեայ եւ Վանդրեայ եւ Ղաւոզիկեայ եւ Լնտիոքայ եւ Կեսարիոյ
ժողովքներուն կանոնները առին, եւ կանոնագրքին մեծագոյն մասը ա
սոնցմով եւ սրբոյն Վարսղի եւ Վրիգորի աստուածաբանի եւ Լչփ
րեմի խորին ասորւոյ եւ Լչպիփանու Ախարացւոյ եւ Վրիգորի Աիւսաց
ւոյ եւ Սեւանդեայ եպիսկոպոսի կանոններով. լեցուցին: Դուն ասոնք
ձգելէդ ետքը եկեղեցւոյ կառավարութեան ինչպէս ըլլալը ո՞ւր պիտի
գտնես: Թէ որ Հայաստանեայց եկեղեցւոյ կառավարութիւնը ասոնց
համեմատ է նէ՝ մեզի պարծանք մըն է. որովհետեւ այս համեմատու
թիւնը կը ցուցընէ որ Վրիստոսական աւանդութիւնը սկիզբէն 'ի վեր
մեր մէջը անխախտ մնացած է, թէ որ ուրիշ ազգայ համեմատ չէ՝ նէ՝
ի՞նչպէս ելեր է որ ամեն քրիստոնեայ ազգ այսպէս կարեւոր բան մը
միօրինակ ընդուներ է, եւ մինակ քուկին Հայաստանեայց եկեղեցի
կարծածդ անոնց աննրման կերպ մը բռներ է. արդեօք անոնց մէկն
ալ աւետարան չե՞ն մի կարդացեր, Վրիստոսի սահմանած կարգը մինակ
այդ քու եկեղեցի՞դ մի դուշակեր է, որ Հիստորիայը կարգալէն ժամանակ
չունենար աւետարան կարդալու: Վու միտքդ անանկ ցուցընել է որ
Հայաստանեայց եկեղեցւոյ կառավարութիւնը ինքնուրոյն բան մըն է.
ուրիշ եկեղեցիներուն կառավարութեանը չնմանիր. որ զըստարտութիւն
մըն է, անոր համար ուրիշ ազգի եկեղեցական կառավարութիւն քննել
չես ուղեր: Իայց գիտցի՛ր որ եկեղեցին մէկ է. Հայաստանեայց ե
կեղեցին ինքնին զատ եկեղեցի չկացուցաներ, ուստի ուրիշ եկեղեցի
ները մէկդի ընել եկեղեցական կառավարութեան խնդրոյն մէջ՝ քու
դատդ շատ կը տկարացընէ: Իայց նայինք առանց ասոնց ի՞նչ պիտի
ցուցընես մեզի եկեղեցւոյ կառավարութիւնը:

ՀԱՏՈՒՄԺ Է՝

Պ. ՄԱՏԹԷՍՍ

Մեր եկեղեցական կառավարութեան Սահմանադրական եւ 'ի հարկէ այն պէս ըլլալուն վկայ ունինք. նախ՝ նոյն իսկ եկեղեցւոյ հեղինակը եւ հիմնադիրը, Քրիստոս եւ առաքեալք. եւ անոնցմէ ետքը բոլոր սրբազան հարք. կանոնգրքերնիս. եկեղեցական պաշտօնեայները անուանելու ծիսարաննիս որ է մաշտոցնիս. ազգային պատմութիւննիս. յառաքելոց մինչեւ ցայսօր միօրինակ պաշտուած աւանդութիւննիս, եւ վերջապէս՝ հայ արիւնով անցեալ եւ ներկայ ժամանակներու մէջ ճշմարտութեամբ զՔրիստոս դաւանողացս ամէնուս համոզումը կամ ներքին զգացումը եւ պատողութիւննիս :

ՊԱՏԱՍԻԱՆ

« Ե՛ս ուհետեւ եւ մեք՝ որ այսչափ շուրջ զմեօք մածեալ ունինք զբազմութիւն վկայից, զհպարտութիւն զամենայն 'ի բաց ընկեսցուք » (Եւր. Ժ. Բ. 1) : Ե՛սքսն վկայներ չորս բոլորնիս ներսէն դուրսէն պաշտած ըլլալէն ետքը՝ աւելի խօսք խօսիլը բանդիտցողութիւն ծախել է, որ հպարտութեան մէկ ճիւղն է. ասիկայ մէկդի նետենք :

Քեզնէ ալ ներում կուղիմ այս բու վկայներդ քննելը մէկ դի դընելու. նախ՝ որ սահմանադրանք ըսած կառավարութիւնդ որ Տիպիկոսնիս դիմաբաժանեալ կը դնես, ինչ ըլլալը տակաւին հասկըցուցած չես, եւ երկրորդ՝ այդ ցուցուցած բազմութիւ վկայներուն ո՞ր տեղացի՞նչ խօսելնին չես գրեր. մենք միայն անունէ բանմը Հասկընալէն զատ, երբեմն փարենթազիզի մէջ վկայութեան տեղեր կը ցուցընես եւ խօսքերը չես դներ նէ, անոնցմէ ալ բան մը չեմք հասկընար. եւ թէ որ գրածնիս կարդալդ շարունակես նէ՝ այն փարենթազիզները բացուելը պիտի տեսնես, եւ իրաւունք պիտի տաս մեզի՝ պարապ աղաղակներով վերարկու չձգելնուս : Ենցնինք :

ՀԱՏՈՒՄԺ Ը՝

Պ. ՄԱՏԹԷՍՍ

Իբրեւ հայ՝ եւ հայաստանեայց եկեղեցւոյ հարազատ եւ նախանձախընդիւր որդի, ճիշդ ձեր զՆալքանդեանցի նամակը դատաքննելու դիմող ըզ

գացումէն դրդեալ, մենք ալ ձեր այս մասին մեծապէս սխալումը ձեզի յիշեցնել եւ թերեւս անկէ պայթակղող կամ ծուռ համողուող ալ կան նէ՝ միտքերնին բժշկելու դիտաւորութեամբ է որ ձեզի այս նամակը գրելու հարկադրեցանք. եւ ուղղակի Նալբանդեանցի վերաբերեալ խօսքերնուդ եւ ուրիշ սխալներուդ և բնական եւ տասնաբանեայ օրինաց վրայ տուած օխալ բացատրութիւններնուդ դատաքննութիւնը նոյն իսկ Նալբանդեանցի ձգեցինք կատարել. եւ մենք առ այժմ յիշեալ գրութիւններնուդ ողին եղող այս մեծ կեդրոնին վրայ ուղեցինք գրել:

ՊԱՏԱՍԻՍԱՆ

Նորհակալ կըլլայինք թէ որ այս բաներուն վրայ դուք գրէիք, որովհետեւ Նալբանդեանցին գրիչէն շատ կը վախնամք. ազէկ կը տըրամաբանէ. բայց ծաղրաբանութեամբ եւ կատակաբանութեամբ, որոց մէջ մասնաւոր վարժութիւն ունենալ կերելի: Վայց գրիչը ձեռքդ առած որ գտնուեցար՝ ինչո՞ւ այս խնդիրները ամէնն ալ մէկ հարուածով չքակեցիր. եւ միանգամայն մեր փիլիսոփայական եւ աստուածաբանական հրմտութիւնը ինչո՞ւ զուծեցիր եւ ոչինչ ըլլալը չիմացուցիր: Նոր համար որ Նալբանդեանցին իրաւունքին չպղչիս. վասն զի ասոնց պատասխանելը անոր կիսնայ: Հապա ինչո՞ւ մասնաւոր այս մեծ կեդրոն ըսածիդ վրայ կը խօսիս: Ասան զի ասոր պատասխան տալը կամ դատաքննելը կրօնական ժողովքին կիսնայ. եւ քու առաջդ Նալբանդեանցին իրաւունքը աւելի սրբազան եւ անբռնաբարելի սեպուած է՝ քան թէ կրօնական ժողովքին իրաւունքը: Վաս ալ մեր կողմէն՝ իրաւագիտութեան քաջավարժ ըլլալուդ վկայական մը: Վաս օրերս Նալբանդեանցին յօրինած ու տպածն ալ տեսանք ու կարդացինք. հրամանքդ ալ կարդացած կըլլաս. թէ որ քու տալու պատասխանդ ալ անոր պէս է նէ՝ անոր տպածին հաւանութիւն տալդ իմացո՞ւր. դուն ալ անոր պէս ըսէ թէ էս անհասար է՛. հերիքելոս կողմէն չէ՛ վախնար, եւ այլն. դուն քեզ ամէն մարդու, մանաւանդ ազգային կարեւոր խորհուրդի մը անդամ ըլլալու արժանի տեսնողներուն իմացո՞ւր. այն ալ անանկ խորհուրդի մը՝ որ ազգին ապագայն անոր յանձնուած է. մատաղահասակ տղայոց կըրթութեան վրայ պիտի հսկէ, անոնց ուրիշ բաներու հետ հաւատք եւ կրօնք ալ սովորեցընել պիտի տայ:

Պ. ՄԱՏԹԷՈՍ

ՀԱՏՈՒԱԾ Թ.

Նոր համար նախ ձեր Նալբանդեանցի ըսած սա խօսքերը, մենք ալ ամենայն պարզութեամբ ձեր հրամանոցը կը զբուցենք. եւ հաւատացէք որ մեր

վկայութիւնն ալ ձերինն պակաս ճշմարիտ չէ՛ : Ձեր անձնական յարգը կը պահենք, զձեզ կը սիրենք իբրեւ ազգակից, անոր համար ձեր վրայ նըւմարած պակասութիւննիս ուղղելն ալ տեսնելու փափոքով կիմացնենք : Ասոր դուք ալ հաւանութիւն ունիք. որովհետեւ ամենայն ճշմարտութեամբ կընդունիք Նալբանդեանցի ըսածը թէ, ամենայն ազգային անդամ՝ ինչ չափով պարսպան էր սիրել իւր ազգը, նոյն չափով պարսպան է նշաւակել եւ աշխակել նորա պակասութիւնը : Ուրեմն դուք ալ կընդունիք որ՝ մէկին պակասութիւնը նշաւակելը անիկայ սիրելուն չափ մըն է : Մենք ալ հոս դրածովնիս՝ զձեզ սիրելուն մէկ չափը տուած կըլլանք, թէ որ ընդունիք :

Արօնական ժողովը զՊօղոս վարդապետը փախչելէն ետեւ կէս մը ստուգուած յանցանքներուն համար՝ սրաշունէն առ ժամանակեայ «դադարիլ» վճռեց : Մեղուն՝ ամբաստանեալին յանցանքներուն ծանրութեան եւ ստուգութեան վրայ անսարակոյս ըլլալուն՝ ամբաստանողաց հետ մէկ տեղ ոցմահ դադարիլ, առաջարկեց. իսկ Նալբանդեանցը ոչ միայն ցմահ լուծել կամ «իսպառ զրկել» ի կարգէն, «այլ եւ իբրեւ սոսկական աշխարհական եկեղեցւոյ հետ ի հոգեւորս հաղորդակցութեան մէջ մնալէ ալ արգիլել» : Դուք ձեր ուզած կերպով հասկնալով եւ ուզած մեկնութիւննիդ տալով, այս բաներուն եւ խօսքերուն մէջ բողոքականութիւն եւ հերեափկոսութիւն կը տեսնէք :

Ներքեզք մեզ յիշեցընել ձեզի, բարեկամ, որ մեր եկեղեցին Սանկ Օթիլիօ շունի եւ եկեղեցականաց դատապարտութեան աստիճանները այս երեքս են ըստ իրենց յանցանաց ծանրութեանը :

ՊԱՏԱՍԻԱՆ

Մեր պակասութիւնը մեզի յիշեցընելուն երախտապարտ ոգւով շնորհակալ եմ, եւ թէ որ առիթը գայ նէ միտք ունիմ այդ խրատներէն օգուտ քաղելու :

Արօնական ժողովին՝ Պօղոս վարդապետը փախչելէն ետեւ անոր վրայ յանցանք ստուգելը չեմք գիտեր. եւ թէ որ կայ նէ՝ պէտք է որ Պ. Մատթէոսը իր իրաւագիտութեանը վստահելով իմաց տայ կրօնական ժողովին որ մէկի մը վրայ յանցանք մը ստուգելու համար ամբաստանելոյն ներկայութիւնը ամենահարկաւոր է. եւ ասիկայ չհոգալով մէկը յանցաւոր դատելը անիրաւութիւն, որ պակասութիւն մըն է : Պ. Մատթէոսը զիս իրատելու եւ պակասութիւնն նշաւակելու եղբայրսիրութիւնը ունեցեր է, որովհետեւ զիս իրեն ազգակից բռնած է, որ մէկ մասնաւոր եւ առանձին մարդ մըն եմ. եւ իմ սխալէս ազգին մեծ մնաս մը չըլլար, մանաւանդ Մեղուն եւ Նալբանդեանցին եւ Պ. Մատթէոսին պէս քաջարթուն ուղղիչներ ունենալէս ետքը : Հապա ինչո՞ւ համար կրօնական ժողովին այդ պակասութիւնը չնշաւակեր, որ ազգին վրայ ինձմէ բիւրապատիկ աւելի ազդեցութիւն ունի. այն ժո-

զովքը ուղղելը ազգին աւելի մեծ ծառայութիւն ընել չէ՞ մի : Այամ թէ՛ ես իրեն ազգակից ըլլալու համար կուզէ նէ՛ կրօնական ժողովոյն անդամները իրեն ազգէն չե՞ն . կամ թէ ինքն անոնց ազգէն չէ՞ : Թէ որ այդպէս բան մը կայ նէ՛ ես ալ կըսեմ որ աւելի կընտրեմ զիս կրօնական ժողովին ազգէն դաւանիլ եւ . հրատարակել , քան թէ Պ . Մատթէոսին ազգէն . բայց լոկ հետաքրքրութեան համար կուզէի ասոր ալ ազգին անունը սովորիլ . կրօնական ժողովը հայոց ժողով է . ժողովը կազմող անդամներն ալ հայ են , ես ալ հայ եմ : Այս ալ Պ . Մատթէոսին ազգասիրութեանը վկայական թող ըլլայ :

Կրօնական ժողովը Պօղոս վարդապետին վրայ միայն մէկ յանցանք մը գտաւ* . դատաստանը լման շտեմնուած փախչիլը , որ կերպիւ իւր զինքը ժողով քին դատողութեանը տակէն հանելուն համար օրինաւորապէս զինքը դատելու պաշտօն սենցողներուն դէմ ապստամբութիւն մըն էր . այն ալ թէ որ Մեղուն ըսածը իրաւ է նէ՛ մէկու մը թելադրութեամբ փսխած ըլլալուն համար կը թեթեւնայ . բայց մարդ չպարտաւորիր Մեղուն ամէն ըսածին հաւատալու . ուստի կրօնական ժողով քին տուած պատիժը յանցանքին համեմատ եղաւ . առժամանակեայ կերպով պաշտօնէ դադարում մը . այսինքն՝ մինչեւ որ կրօնական ժողովոյն դատաստանին հնազանդի , եւ վրան ձգուած ամբաստանութիւններէն զինքն արդարացընէ :

Ասով գոհ չեղան՝ Այլբանդեանցը եւ մեղուն եւ դոնամիջեան ժողովակը , որուն Պ . Մատթէոսին ալ անդամ ըլլալը չգիտէինք , իր հոս գրածէն իմացանք . եւ հարեւանցի մը կըսեմք որ՝ այդպէս մէկ առանց օրինաւոր հեղինակութեան կազմուած եւ ազգին օրինաւոր՝ հեղինակութեամբ կազմուած ժողով քներուն գործը իրաւամբք կամ յանիրաւի դատաքննելու , բամբասելու եւ զրպարտելու ատելի պաշտօնը վրանին առնող եւ ազգային վարչութիւնը ազգին աչքէն ձգելու աշխատելով ազգը դարձեալ առաջին անիշխանութեան մէջ կործանելու հակում ցուցընող եւ ազգին մէջ հերձիք եւ երկպառակութիւն սերմանող ժողովակի մը անդամ ըլլալով Պ . Մատթէոսը՝ թէ որ այսպէս ըլլալը ճանչցուած ըլլար նէ ազգային վարչութեան մէկ ճիւղին համար չէր ընտրուեր . ինչպէս որ ընտրուած է ուսումնական խորհուրդին անդամ : Եւ այդ մէկ մարդուն ինչ ըլլալը մէկէն՝ ի մէկ չիմացուիր :

Մենք ՚ի սկզբանէ՛ չէ՛ թէ Այլբանդեանցին գրութենէն , որ ա-

* Պօղոս վարդապետին վրայ Մեղուն դրած յանցանքները կարգաւ քննուելու վրայ էին . առաջինը քննուեցաւ եւ սուտ ելաւ . միւսները քննուելու ժամանակ չմնաց . Պօղոս վարդապետը քաղաքէս մեկնեցաւ :

սույ՝ մըն էր հիւսիսէն փրժաւ արեւմուտք ինկաւ, միշտ կըսէինք որ Պօղոս վարդապետին դատը քննելու համար կրօնական ժողովէն զատ ամէն ժողով եւ խորհուրդ՝ քողոթական է. այս բառը իր ընդարձակ նշանակութեամբը առնելով. ըսել կուզեմ թէ քողոթ է. որովհետեւ կրօնական ժողովոյն ուշի ուշով հետազօտութեամբ եւ խոհականութեամբ եւ երկու կողմը լսելով վարած դատաստանին դէմ քողոթ կընէ. կուզէ որ Պօղոս վարդապետին կուսակիցները չկանչուին, եւ իրենք իրենցմէ դալու ալ բլլան նէ վաւրնտուին. անոր թշնամիները հրաւիրուին, պատիւ ընդունին, եւ ամէն խօսքերնին իրրեւաստուածային պատգամ ընդունուի:

Պիտի ըսեն ոմանք՝ որ քողոթական բառը երկրիմի է. կրօնական կողմէն եղած պակասութիւն մըն ալ կամ ընդդէմ հաւատոյ կամ ընդդէմ եկեղեցւոյ մոլորութիւն մըն ալ կը նշանակէ. ուստի այս բանիս համար անոնք բողոքական անուանելու տեղ բացատրութեան ուրիշ եղանակ մը բանեցընելու էր:

Ար պատասխանեմ թէ՛ անոնց ըրածն ալ ընդդէմ կարգաւորութեան եկեղեցւոյ մոլորութիւն մըն էր, որ բողոքական ըսուած հերետիկոսներուն յատուկ է. որովհետեւ ամէն քրիստոնեայ ազգ՝ կրօնական ատեան ունի. որուն գործոյն աշխարհականները չեն կրնար խառնուիլ. միայն երբ անիրաւութիւն կարծուելու բան մը տեսնեն նէ ընդդէմ կը բողոքեն դարձեալ նոյն ատեանին՝ եւ բացատրութիւն կրնան ուզել. բայց իրենք առանձին ատեան կազմել, Պօղոս վարդապետին միայն թշնամիներուն կողմը լսել, եւ անկէց ետքը վէճ տալ, բողոքականի գործ չէ՛ նէ ի՞նչ է: Այն եկեղեցականները ազգին մէջ արհամարհ ցուցընելուն աղբիւրը որկէ՛ց կը բղխի. եւ դոնամիջեան ժողովակը մէկ կողմէն Պօղոս վարդապետը, միւս կողմէն ազգին մէջ իբրեւ բանիբուն ճանչցուած եւ կրօնական ժողովոյ անդամ ընտրուած քսան եկեղեցականը, որոց նախագահ է սրբազան Պատրիարքը, եւ մէջերնին եպիսկոպոս կայ, վարդապետ կայ, քահանայ կայ, ազգին ատելի կը ցուցընէ նէ իբրեւ անիրաւ, ի՞նչ դիտաւորութիւն ունի: Մանաւանդ թէ այս ժողովակին բռնած ճամբան՝ ամբողջ ազգին լրութեանը դէմ մէկ ինքնահար ազգ մը կացուցանել է. որովհետեւ աշխարհի սահմանադրութեան ալ չեն ճանչնար: Թէ որ կրօնական ժողովքէն տհաճութիւն ունէին նէ՛ ընդհանուր ժողովքը նստելու արտօնութիւն ունեցող եպիսկոպոսներով եւ քարոզիչ վարդապետներով եւ քահանայներով համագումար ժողով մը ուզելու էին, որ չըրին. եւ ազգային տնօրէնութեանը դէմ իրենք իրենց՝ կրօնական դատեր տեսնելու համար աշխարհական անձերէ բաղկացած ժողով մը կազմեցին: Պ. Մատթէոս, էրեցական եւ անկէ-

337-26



հայեմաւիւր ըսուած բողոքականներուն ալ ըրածը ասոր պէս չէ՞ մի . միայն սա տարբերութեամբ որ անոնք եկեղեցական քահանայ կամ վարդապետ չունին իրենց աղանդոյն մէջ . անոր համար ժողովքներնուն մէջ ալ չունին . իսկ դոնամիչեան ժողովակնիդ թէ որ բողոքական չէ՞ , Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ հարազատ զաւակ է նէ՞ այսպիսի եկեղեցականներ ունեցած պիտի ըլլայ . եւ եկեղեցական նիւթոց համար առանց եկեղեցականի ժողով կազմեն եւ վճիռ տան նէ՞ դուն այն ժողովքին ի՞նչ անուն կուտաս թէ որ այն ժողովքին անդամներէն մէկը չըլլաս նէ :

Վալբանդեանցին գալով ասոր ըրածը քիչ մը ձեր ժողովակէն աւելի է . որովհետեւ իրեն ասուպի երեւոյթը ո՛րքան տեւեց նէ՞ այդ ժողովակին գրաւոր փաստարանն եղաւ . եւ հիմայ իրաւունք ունի պահանջելու որ ժողովակդ ալ իրեն Վերին Կողմին պաշտպանն ու փաստաբանը ըլլայ . Մեղուն ալ խօսք տուած է Վալբանդեանցին գրածին ամէն մէկ տողին եւ բառին պաշտպան եւ պատասխանատու ըլլալու* : Ձեզ տեսնեմ . միտքերնիդ բանսլու ժամանակն եկաւ : Վալբանդեանցը՝ ինչպէս որ գիտես՝ կրօնական ժողովոյն վճիռը դրով մերժեց . մինչեւ ի մահ իսպառ կարգէն զրկելն ալ բաւական չհամարեցաւ . իբրեւ լոկ աշխարհական՝ եկեղեցւոյ հաղորդութենէն ալ արգիլեց : Անպէնք թէ այդ մարդը բողոքական չէր . այդպէս դատաստան տեսնելու եւ վճիռ տալու իշխանութիւնը որկէ՞ առած էր : Մեկէ մը իշխանութիւն չառնելով այդպէս բանի մը յանդգնելը կարճ խօսքով հասկըցընելու համար ի՞նչ բառ ունիս մեղի սովորեցընելիք : Վայց երբ որ իր ըրածին վրայ կը յամառի , եւ սուրբ գրոց եւ եկեղեցական մատենից՝ խօսքերը կէսը ծածկելով եւ մնացածը ծուռ մեկնելով պարզամիտները Կայթակղեցընել կուզէ եւ եկեղեցւոյ լուծը խրոխտաբար վրայէն կը թօթովէ նէ՞ մենք այսպէս մարդուն հերեպիկոս կըսեմք . քու ընդունովդ ասոր ի՞նչ կըսէք նէ մեզի ծանուցանելնիդ շնորհ կը համարիմ :

Մեր եկեղեցին Վանդ () Փիչիօ չունի ըսեր ես . բայց դոնամիչեան ժողովակը ունի . կարծեմ ասիկայ պիտի գիտնաս : Եկեղեցականաց դատապարտութեան աստիճանները այս երեքս են ըսեր ես . առժամանակեայ դադարում , մինչեւ ի մահ լուծուիլ կարգէն եւ եկեղեցւոյ հետ իբրեւ աշխարհական հաղորդութիւն ունենալէն ալ զրկուիլ : Վայց յիշեալ ժողովակը՝ եւ անոնց մէկ երկու շաբաթուան նախագահ Վալ-

* Մեղուն առ այժմ Երկու Կողմը կտոր կտոր իր մէջը ընդունիլ եւ հըրատարակել սկսած է . գուցէ ետքն ալ պաշտպանութիւնը ընէ . եւ յիրաւի այս տեսրակը ուրիշ բանի համար չէ ալ նէ՞ յայտնուպէս էս հասարակ շահի՞ ըսելուն համար Մեղունին պաշտպանութեանը արժանի է :

բանդեանցը, որոց բողոքական եւ հերետիկոս չըլլալուն դուն կը վը-
կայես, չորրորդ մըն ալ գտած են եկեղեցականաց պատիժ: Արդա՛-
այն ժողովակին անդամներուն պօլիտիկ լուսաւորչական հայեր ստորագրու-
թեամբ 1860 դեկտ. 31 թուականով հրատարակած յայտարարութիւն-
նին, որուն ըսածներուս հետ յարաբերութիւն ունեցող հատուածը հոս
կը գնեմք:

Այս յայտարարութեան հեղինակները կը խնդրեն կրօնական ժո-
ղովէն որ «Պօղոս վարդապետը «կարգէն լուծելու բարեհաճի, չէ՛ թէ
«առ ժամանակեայ կերպով (որով ճշմարտապէս լուծուած չհամար-
«ուիր)*, այլ մշտնջենաւորապէս եւ անվերադարձ կերպով», : Այս
հրամանը իր բարձրագոյն ատեանէն հանելու յանդգնելէն ետքը տա-
սըն եւ հինգ օր միջոց կուտայ. չէ՛ թէ դատը քննելու, այլ իր ան-
հրաժեշտ եւ անբողոքելի հրամանը կատարելու: Չէ՛ նէ՛ չորրորդ՝
եւ առաջին երեքէն աւելի նուաստացուցիչ պատիժ մը ինքը ժողովակը
տալու որոշումն ըրած եւ պէտք եղած պատրաստութիւնները տեսած
ըլլալը կիմացընէ: Այս են խօսքերը:

«Իսկ պայմանաժամէն ետքը ազատ պիտի ըլլանք չարը մեր մէ-
«ջէն վերցընելու նախանձաւորութեամբ մեր բոլոր ճիգերը թափել
«կառավարութեան գերագոյն հեղինակութեան բողոքելով** երբ այս-
«պիսի անարգ յանցաւոր մը իր ձեռքը մատնենք անոր մեծեղեռն անօ-
«րէնութեանց ցուցակովը, կը յուսամք որ ինքը մեզմէ շատ գոհ պի-
«տի ըլլայ, վասն զի լսեր ենք որ բուն ասանկները ձեռք ձգելու հա-
«մար էր որ այնքան տաժանելի ճամբորդութիւններ ըրաւ: Ա՛նք
«ասոր վերաբերեալ պատրաստութիւնը արդէն ըրած եմք. եւ երբ
«որ այսպիսի յանցաւոր մը իր պատժարանը չմտած՝ երկրին օրէնքին
«համեմատ հասարակաց կամուրջին գլուխը կայնեցընեն իր վե-
«ղարովն ու մօրուքովը յանցանագիրն իր կուրծքը, կրօնական ժողովը
«կուզէ նէ թող գաւազան մըն ալ շնորհէ իր ձեռքը»):

Տեսա՞ր Պ. Մատթէոս. ո՞ւր է եղեր Անի () քիւլիօն. ինքն-
իրեն չպատժեր. վասն զի այդ իշխանութիւնը որ չունի՝ ՚ի գործ դընէ

* Այս վարենթազիզին մէջի խօսքն ալ յայտարարութենէն է:

** Ի՞նչ կըսես այս բողոքոյս սահմանադրական չէ՞ մի, որ 22 յօդուա-
ծին մէջ՝ գերագոյն բողոքոյ տեղ սուրբ Էջմիածին ցուցուցեր էր:
Սահմանադրութեան սկզբունքներուն ամենայն ոգւով հակառակ կեցող-
ները ո՞ւր կը բնտրուես պարո՞ն Մատթէոս. քովիններդ եւ քու ժո-
ղովակիցներդ չե՞ս տեսներ: Գուն քե՞զ ալ մի չես ճանչնար: Արդա՛-
չորրորդ հատուածիդ պատասխանը:

նէ, ինք պատժելի կըլլայ, այլ աշխարհական եւ բնական չեղող կառաւ
 վարութեան մը ձեռք կը մատնէ. որ արդէն ազգին կրօնական դատերը
 բողոքովին ազգին ձգած է: Սոսի ()Ֆիլիօն ալ ասանկ կընէր. դատա-
 պարտութեան վճիռը տալէն ետքը յանցաւորը աշխարհական իշխանու-
 թեան կուտար: Նուն կըսես որ « մեր եկեղեցին Սոսի ()Ֆիլիօն չունի », ուրեմն
 այս ժողովակը որուն Սոսի ()Ֆիլիօն ունենալը նոյն իսկ վերոյ-
 գրուեալ խօսքերէն յայտնի է եւ չես կրնար ուրանալ. մեր եկեղեցիէն
 չէ՛. եւ ինչո՞ւ համար կը նեղանաս որ ես մեր եկեղեցիէն չեղողներուն
 պարագլուխը բողոքական եւ հերետիկոս ըսեր եմ: Ասիկայ քու ըսա-
 ծիդ պատասխանն է: Այսքը պիտի տեսնուիք քո՛ւ խօսքովդ, որ Հա-
 յաստանեայց եկեղեցւոյ ընդունած եկեղեցական կանոններուն մէջ ալ
 յանցաւոր եկեղեցականաց մարմնաւոր պատիժ նշանակուած կայ: Ասալ-
 բանդեանցին նամակին մէջ ալ այդ յայտարարութեանը միտքերը շօշա-
 փող խօսքերը կարգացիր: Այս նեղանալդ՝ եւ ամբողջ նամակդ՝ քեզ
 Ասալբանդեանցին համախօհ կը ցուցընէ. որուն գրածը Սեղանին մէջ
 տպուած ըլլալուն, եւ անոր հրատարակիչն ալ այս բաներովս անոր եւ
 քու թելքովդ ըլլալուն համար ստիպուեցաւ իր գրածները ետ առնել
 յունվ. Յին, կրօնական ժողովքին առաջը. բայց ետքը նորէն իր ա-
 ռաջին միտքին դարձաւ փետր. 10/ին Սեղանին շնորհակալութիւն
 յօդուածովը:

Ակեղեցականաց դատապարտութեան աստիճանները այս երեքս են
 ըսելիք ալ աղէկ միտքդ պահէ՛. որ քիչ մը ետքը հետդ հաշուի պիտի
 նստինք:

ՀԱՏՈՒԱԾ Ժ.

Պ. ՄԱՏԹԷՈՍ

Իբրեւ մարմնաւոր մարդ, բոլոր եկեղեցականաց դասն ալ մէկ տեղ առնե-
 լով, ինչպէս ձեռնադրեալ նոյնպէս եւ դատապարտեալ քահանայի մը
 գերբնապէս կամ ըստ հոգւոյ ինչ փոփոխութեան տակ ըլլալը քննելու
 շնորհքը չունենալով, միայն մասնաւորապէս ըլլուելիք՝ Ասալբանդեանցի
 « իսպառ զըկել » քահանայութենից « բառէն ձեր հանած հետեւութիւնները
 չելլելը, եւ այս մասին ձեր հաստատել ջանացած նորուստումն վարդապետու-
 թիւնը՝ մեր եւ Քրիստոսի եկեղեցիէն չըլլալը ցուցունելու համար, կա-
 նոնգըքէն՝ յատկապէս եկեղեցականաց ամէն աստիճաններուն զանազան
 աստիճանացը համեմատ դատապարտութեանը վերաբերեալ կանոններէն ժող-
 ուելով սա հետեւեալ բառերն ու խօսքերը մէջ բերել բաւական կը սե-
 պենք ու ձեր խորին իմաստութեանը կը յանձնենք. որք էն:

Հրատարակաւ յանդիմանեացի, կշտամբեացի, դատապարտեացի, լուծցի:

Մեն ատենը Սեղանին յանցանքը կըլլար միայն իր չափը չգիտնալը եւ իրեն չհնկած բանին խառնուիլը : Այլբանդեանցին ալ այս ըսածէն մեր հանած հետեւութիւնը չէր ելլեր : Հետեւութիւն հանելնուս մէկ նախընթացը այս : Արհրորդ նախընթաց պարագայն այն է՝ որ քահանաներուն ք հանայութիւն տուողը ժողովուրդն է կը կարծէ. եւ ժողովուրդեան ու կարգ առնողին մէջ մէկ պայման մը կենթադրէ . որով այն կարգուորն որ պայմանին վրայ շմբար, կարգէն լուծուած կըլլայ . որով քահանայութիւնը անջնջելի կնիք տպաւորած չըլլար քահանային վրայ . ինչպէս որ ժողովուրդը անոր քահանայութիւն տուաւ, անանկ ալ տրուածը ետ առնելու իրաւունք կունենայ : Ահա՛ ասոնցմէ հետեւցուցեր եմ որ քահանայութիւնն ալ մկրտութեան խորհուրդին նման անջնջելի ըլլալը՝ Այլբանդեանցը շքեղունիք :

Ասոր վրայ Պ . Սատմէոսին միտքը ի՞նչ ըլլալը չեմք գիտեր . բայց ըսածէն կը հասկընամք որ մէկ որոշ դադարիտ մը չունի . որովհետեւ « ձեռնադրեալ եւ դատապարտեալ քահանայի մը գերբնապէս կամ ըստ հոգւոյ ի՞նչ փոփոխութեան տակ ի՞նչալը քննելու շնորհքը չունենալը » կը խոստովանի . ասկէց մէկ դի ձգենք այն թեթեւ սխալը որ ըստ հոգւոյ ու քեզմէնսմը մի եւ նոյն բան կը կարծէ, երբ հոգւոյ փոփոխութիւններուն մէջ շատ մըն ալ բնականներ կան : (Թէ որ միտքն եկածը կըլնելով գրի առնէր նէ՛ ըսելու էր, քահանայի մը քեզմէնսմը հոգւոյ ինչ փոփոխութեան տակ ի՞նչալը : Մէկ պզտըտիկ համ բառը խօսքը ուրիշ միտքի կը դարձընէ : Այց թէ որ այս գիտնալուն շնորհքը չունէր նէ՛ ունեցողներէն կրնար սովորիլ : Ամենուն տեղը սուրբն Արիգոր նարեկացին բաւական ըլլայ . որ ձեռնադրութիւնը անջնջելի կնիք տպաւորելուն եւ չկրկնուելուն վրայ՝ որ ըստ հոգւոյ գերբնական փոփոխութիւններուն մէկն է, կըլսէ . « մի ձեռնադրութիւն ՚ի պատիւ « օծութեան լուսոյն, զի մի՛ յանրձութիւնն թարէութիւն խառնեցի : » (Նորէկ . ՀԵ . Թ) : Այս խօսքը այսպէս կը մեկնէ՝ Յակոբ նալեան՝ կոստանդնուպօլսի պատրիարքը, որուն մականունն տրուած է սուրբանկոչումը, աստուածաբանական գրքեր շատ շինելուն համար : « Այսինքն թէ « միանգամ միայն է ձեռնադրութիւն քահանայական . զի եւ քահանայ « յութիւնն ներտպէ զկնիք . եւ ո՛չ ուրսցմամբ հաւատոյ բառնի . որ « պէս ասի Աիկիոյ ԺԱ՝ կանոնին վասն բռնութեամբ ուրացողացն ՚ի « ժամանակս Աիկիանոսի, եօթն ամ առանց հաղորդութեան ընդ ա « պաշխարողաց ապաշխարել : Արդ երեք են ՚ի մէջ խորհրդոց անկըրկ « նելիք . մկրտութիւնն, դրոշմն եւ կարգն . զի սոքա ներտպեն զկնիք « անջնջելի . զորս ունողքն, ՚ի մեղանջելն ոչ եւս կրկնելով գտանեն « զթողութիւն . եւ ո՛չ է խորհուրդ, թէ՛ եւ կրկնեցեն » : Այսինքն՝

կրկնածնին եկեղեցւոյ խորհուրդ չէ՛. առաջին անգամ առածնին է խորհուրդը : Հիմայ ո՛ւր կը մնայ 'Ալաբանդեանցիդ' ձեռնադրութեան ժամանակը քահանայացուին պայմանով կարգ առնել եւ նոյն պայմանը աւրէ նէ կարգէն զրկուիլ ըսածը : Արդէն շէնքէն բառերը կան կանոններուն մէջ . բայց 'Ալաբանդեանցին հասկըցընել ուզած կերպով լոկ աշխարհական դառնալ ըսել չէ՛. կարգապաշտութենէն զրկուիլ ըսել է . 'Իսկ հրամանքդ' Ա. Սատթէոս, որովհետեւ փիլիսոփայութիւն եւ աստուածաբանութիւն սովորելով համբաւ ստանալ կուզես, քահանայներուն թէ՛ ձեռնադրուած եւ թէ՛ դատապարտուած ատենը ըստ հոգւոյ ի՞նչ գերբընական փոփոխութեան տակ ի՞նչնին աստուածաբանութիւն սովորած ատենդ կը սովորիս . միայն թէ 'Ալաբանդեանցը չըլլայ քեզի աստուածաբանութեան դասատու ընտրածդ :

Հիմայ գանք եկեղեցականներուն յանցանացը համեմատ տրուելու կանոնական պատիժներուն . վասն զի այն նորոգման ըսած վարդապետութիւնդ որ ես հաստատել կը ջանամ եղեր, այն ատենը կը տեսնեմք, երբոր ինչ ըլլալը յայտնես մեզի : 'Դուն կըսէիր որ եկեղեցականաց պատժոց երեք աստիճան կայ . հիմա կանոնգրքէն ժողովելով քսան եւ մէկէն աւելի պատիժ կը գտնես : Ի՞նչպէս է . ասոնք աստիճան աստիճան բաժնելով մէջերնին երեք աստիճան գտա՞ր . եւ ինչո՞ւ համար այդ բաժանումը մեզի չես իմացըններ, եւ ի՞նչպէս բաժանելդ կարգ կարգ չես դներ, որ մենք ալ հասկընամք թէ կառավարութիւնը միապետական եւ սահմանադրականի բաժանելո՞ւդ կը նմանի այս ալ, թէ ուրիշ կերպ նոր բան մըն ալ ա՞յս է մի :

Այլ նախ եւ առաջ կը հարցընեմք . այն պատիժը որ կըսէ . "ըզ ջիլսն կտրեսցեն եւ զաղուէսադրոյմ դիցեն 'ի ճակատն", այս երեք աստիճաններուն որո՞ն կարգը կը մտնէ . առժամանակեայ դադարի՞ն է մի, ցմահ դադարի՞ն է մի, հաղորդութեան իբրեւ աշխարհական անգամ չընդունուի՞ն է մի . Ինձի եւ ամէն մարդու այնպէս կերելի որ ասիկայ մարմնաւոր պատիժ մըն է . ուստի երեք տեսակէն դուրս՝ Սանթ () ֆէլիքս պատիժներէն է : 'Դուն որ կըսէիր թէ Տէր եկեղեցին Սանթ () ֆէլիքս չունի, Հայաստանեայց եկեղեցւոյ կանոններուն մէջ այսպէս կանոն ցուցընելովք բաւական հասկըցուցած չե՞ս մի ըլլար որ Տէր եկեղեցին այս կանոնը իր կանոնգիրքը դնող Հայաստանեայց եկեղեցիէն չէ՛. անկէց ետքը ի՞նչ իրաւունքով օտարին արտը մանգաղ կը խօթես . դուն գնա՛ Տէր եկեղեցին կարգադրէ՛. Հայաստանեայց եկեղեցւոյ հետ ի՞նչ բան ունիս : Այս հետեւութիւնս ալ ծո՞ւռ է մի :

Ինքած կանոններուդ մէջը միայն երկու հատ կայ, որ առաջուց առնա. ձեռնադրուած մէկ իբրեւ բնաւ քահանայ ձեռնադրուած եւ

չօծուած սեպել կը ցուցընէ . եւ ասոնց մէկն է՝ « քարցձի յայնպիսւոյն
 « օծութիւնն », միւսը ետքը կը տեսնեմք : Աերեւի որ ասիկայ ալ մէկալ
 կանոններուն կարգը դնելով՝ եւ յիշած երեք աստիճանիդ մէջը առնել
 ցուցընելով, ձեռնադրութեան խորհրդոյն անջնջելի կնիք տպաւորելը
 կուրանաս . եւ՝ Ապրանդեանցին խօսքէն հետեւցուցածս ասկէց չհե-
 տեւիր կըսես նէ՝ այս մոլորութեան պարծանքը անոր ձեռքէն քեզի յա-
 փրշտակել կուզես . ատոր վրայ դուք երկուքդ իրաւասոհ եղիք : Այց
 որպէս զի կանոնական իրաւանց աղէկ մը հմուտ շեղողները ասանկ կա-
 նոն մը տեսնելով չգայթակղին . եւ չկարծեն թէ այս կանոնը դնող
 ժողովքն ալ ձեռնադրութեան խորհրդոյն ձեռնադրելոյն վրայ անջնջելի
 կնիք տպաւորելը եւ խորհրդոյս անկրկնելի ըլլալը ընդունած չըլլայ ,
 հոս քիչ մը բացատրութիւն հարկ կը սեպեմք :

Մի որ ձեռնադրութիւն ընէ նէ՝ ըրած ձեռնադրութիւնը անխտիր
 վաւերական չըլլար . այսինքն՝ ամէն ձեռնադրութիւն մարդոց վրայ
 գերբնապէս անջնջելի կնիք չտպաւորեր . ուստի եւ ձեռնադրուածն ալ
 թէպէտ եւ քահանայական օծումն ընդունած ըլլայ՝ ճշմարտապէս քա-
 հանայ չըլլար : Այս ասանկ կըլլայ՝ երբ որ մէկ լոկ քահանայ մը որ ե-
 պիսկոպոսութիւն չունի, եպիսկոպոս ձեւանալով մէկը օծէ եւ քեզ
 քահանայ ըրի ըսէ, ձեռնադրութեան կարգը ամբողջ կատարելով, այն
 մարդը այն օծումը առնելէն ետքն ալ լոկ աշխարհական մըն է . եւ
 քահանայութեան կարգը պաշտելու անարժան է էապէս : Աւստի թէ որ
 այս կերպով քահանայ եղաւ կարծուածը եպիսկոպոս ալ ձեռնադրուի . եւ
 այն ալ Աթուղիկոսէն՝ կամ երեք եպիսկոպոսի ներկայութեամբ իր
 մետրապօլտէն եղած ըլլայ . (վասն զի ասոնք երկուքն ալ ըստ եկեղեցա-
 կան կանոնաց վաւերական են) . այսու ամենայնիւ անիկայ եպիսկոպոս է-
 ղած չըլլար, պարզ աշխարհական է . վասն զի վաւերական կերպով քա-
 հանայ չձեռնադրուած եպիսկոպոս չըլլար : Այս ասով կը հասկըցուի որ
 քահանայ չձեռնադրուած եպիսկոպոս ձեռնադրուողն ալ լոկ աշխարհա-
 կան է : Աիկիոյ ժողովքին ժամանակները Աողութոս անուն քահանայ
 մը որ արիոսական էր, ինքը լոկ քահանայ ըլլալով ուրիշները քահանայ
 ձեռնադրելու յանգգնեցաւ . եւ շատ ալ ձեռնադրութիւն ըրաւ : Ամե-
 նայայտնի բան մըն է որ ասոր ըրած ձեռնադրութիւնները ո՛չ ինչ էին .
 « Վանապէս՝ բոլոր ժողովրդեան գիտցած մէկ յանցանքի մը համար հը-
 րապարակական ապաշխարութեան տակ ինկած մարդիկ անկէց ետքը
 չէին կրնար քահանայ ձեռնադրուիլ » : Այնպէս կաշառք տալով եղած
 ձեռնադրութիւնը ո՛չ ինչ կը սեպուէր . եւ իրօք ալ այնպիսին կը մեր-
 ժուէր իրրեւ բնաւ չձեռնադրուած՝ երբ որ կաշառք տալով ձեռնադր-
 ութիւնը գիտցուէր : Ազիտցուէրնէ քահանայագործութիւն կընէր, ինչպէս

որ Աողուժոս եպիսկոպոսական գործ կը կատարէր առանց իրօք եպիսկոպոս ըլլալու. եւ ինչպէս որ անոր ձեռնադրածները գուցէ պարզմտութեամբ չգիտնալով որ իրենք ձեռնադրողը եպիսկոպոս չէ՛ եւ ձեռնադրութիւն ընելու իրաւունք չունի, քահանայութիւն կընէին. ասոնց պարտականութիւնն էր իմացածնուն պէս քահանայագործութենէն դադարիլ. եւ թէ որ քահանայութեան արժանաւոր են նէ՛ վաւերական կերպով ձեռնադրուիլ :

Ասոնք ամէնը մէկ տեղ առնելով Աիկիոյ սուրբ ժողովոյն հայրապետները այս կանոնը դրին, որ է Աիկիոյ ժՎ երորդ կանոնը (ըստ հայերէն հին թարգմանութեան) : “ Ասն այնոցիկ որ օծան յանարժանից ըստ անգիտութենէ եպիսկոպոսին, եւ կամ թէ գիտէին որք մերձեցուցին, եւ ՚ի ձեռն արժաթոյ քարշեցաւ ճշմարտութիւն, եթէ ՚ի վերջոյ յայտնեսցին իրքն եւ անարժանաւորութիւն առն եւ կաշառակըրծութիւն կարգողացն, կամ եղև մեծ սուրբ ժողովոյն. օծումն ըարձցի ՚ի նմանէ. եւ կարգողքն ընդ պատուհասիւք նղեցին, որպէս եպիսկոպ “ կամեսցին ” : Այս կանոնը Աողուժոսի ձեռնադրութիւն ընելը կանարկէ. վասն զի ինք եպիսկոպոս չըլլալով՝ անարժանապէս կաշառքով ալ կընէր. ինչպէս որ սուրբն Աղէքսանդրոս Աղէքսանդրիոյ հայրապետը, եւ անկէց առնելով Թէոդորեոս եկեղեցական պատմիչը կըսէ : Թէ որ ուրիշ տեղ մըն ալ այսպէս օծան քարշե ՚ի նմանէ խօսքով կանոն կայ նէ սովօիլ կուզեմք : Այս մէկ հասիլը՝ ընաւ երբէք իրօք քահանայ չեղողի մը համար է : Ասոր պէս կըլլայ երբ որ ըսուի. այն որ պարզ ջրով մկրտուելուն տեղը վարդէջրով կամ գինիով կամ ուրիշ հեղուկով մկրտեցաւ սխալմամբ, կամ մկրտութեան արարողութիւնը եղած ատենը յանուն ամենասուրբ Արրորդութեան չեղաւ, այնպիսիներուն մկրտութիւնը վերնայ : Վնասպէս ասկէց կը հասկըցուի որ անիկայ չմկրտուած սեպուի, եւ վաւերական կերպով մկրտուի ըսել է :

Քահանայ ձեռնադրուածին վրայէն ձեռնադրութեան կնիքը ջընջուել հնար եղածի պէս ցուցընող երկրորդ խօսքն է. “ Լուծցի յօծմանէ ” խօսքը : Այլ այս է սրբոյն Վարսղի հայրապետի երրորդ զլուխ կանոններուն 140 յօդուածը, որ կըսէ. “ ո՛չ է արժան քահանային “ արիւն հեղուլ մարդոյ եւ ո՛չ անասնոյ. եւ ո՛չ որս առնել կամ զե “ նուլ ինչ. այլ զիօթն աղօթսն անգադար մատուցանել. եթէ որ խո “ տորի, լուծցի յօծմանէն եւ եղիցի նզովեալ ” : Հիմայ թէ որ այս կանոնս Պ. Սատթէոսին հասկըցածին պէս հասկընալու ըլլամք նէ, չէ՛ թէ միայն ոչխար կամ հաւ մորթող քահանայն, կամ որսորդութեան գացողը. այլ եւ աւուր հասարակաց ժամերգութեան մէկ անգամին ալ առանց օրինաւոր պատճառի եկեղեցի չգանուողը իր քահանայական

ծումը կորսնցուցած պիտի ըլլայ : Այն ատենը ո՞ր գտնելու է քահանայ , որ բնաւ երբէք եկեղեցիէն ետ մնացած չըլլայ : Ասանկ քանի՞ չատ կը ճանաչէ Պ . Ս ատթէոսը , որ մենք ալ մինակ այնպիսիները քահանայ ճանչնամք , եւ ուրիշները աշխարհական սեպեմք :

Իսկ միտքը ինչ ըլլալը՝ լռօնէ բառը կը սովորեցընէ . որ ըսել է՝ քակուի . եւ քակուիլը կապէ մը կամ պարտականութենէ մը կըլլայ . իսկ օծումը պարտականութիւն չէ՛ . ուստի լռօնէ յօժանէն ըսելն ալ չօծուածի պէս ըլլայ կամ օծումը վրայէն վերնայ եւ ջնջուի ըսել չէ՛ . այլ պարզապէս՝ օծումով առած հոգեւոր իշխանութիւնը գործադրելու պարտաւորութեան կապէն քակուի ըսել է . որ է կարգապաշտութենէն արգելուիլը : Իսկ նշմարելու էր ըսելը եկեղեցւոյ հաղորդութենէն կտրուի ըսել է : Կանոնիս ասկէց զատ իմաստ մը տալն անհնար է :

ՀԱՏՈՒՄԻ ԺԱ՝

Պ . ՄԱՏԹԵՆՍ

Եւ այս կերպով ըստ ձեր դրութեանը (ինչպէս որ ասոր հակառակ ըսած էք դուք՝ Նալբանդեանցին) չարագործ եկեղեցականներուն դատապարտութիւնը՝ Պօղոսի , Ապօղոսի , Կեփասի , աշխարհի , կենաց , մահուան , աստեաց , հանդերձելոց եւ ամենայն իրիք տէրը եղող ժողովուրդեան (Ա . Կորնթ . Գ . 4-23) գործակցութենէն ազատ եւ անկախ կերպով գործադրուիլը հաստատել ուղեւորվելով՝ ժողովուրդը՝ իրենց պաշտօնեայները կամ սպասաւորները անուանելու կամ կարգելու աստուածատուր իրաւունքէն ալ զրկելու ուղեւոր մտրութեան մէջ կ'իյնաք . եւ անով այսչափ դարեր 'ի պարծանս բոլոր քրիստոնէութեան անփոփոխ մնացած եկեղեցւոյ կառավարութեան կերպը խափանել եւ միապետութեան փոխել կուզէք :

ՊԱՏԱՍԻԱՆ

Պամաց կամաց սահմանադրական կառավարութիւնը հասկըցընելու կուգայ կոր կարգը . եւ ընթերցողներուն միտքը նախապաշարուով մը բռնելու եւ ըսելիքներուն պատրաստելու համար սուրբ Պօղոս առաքեալէն քան որոն խօսք մէկէն կը ցուցընէ . որով 'ի հարկէ սուրբ առաքեալը Պ . Ս ատթէոսին մեզի ըսելիքները երկար եւ ընդարձակ հաստատած ըլլալ կարծելու է կարգացողը : Ա կայութիւնը քիչ մը երկան է . ինչ բանի վկայութիւն ըլլալը մտքէ հանելու չէ՛ . վասն զի մէկ մը այս մտքէ հանես նէ՝ առաքելական խօսքովը միտքդ չես կրնար բերել : Այս խօսքը այն պիտի ցուցընէ որ ժողովուրդին՝ իրենց պաշտօնեայները կամ սպասաւորները անուանելու կամ կարգելու անոնց աստուածա-

տոր իրաւունքն է . եւ այս իրաւունքէն անոնք զըկելը մոլորութիւն է .
 եւ այս մոլորութեանս մէջ ալ ես եմ ինկեր . 'ի հարկէ այս պիտի ըլ-
 լայ իմ նորուսումն վարդապետութիւնս ալ որ նախընթաց հաստուածին
 մէջ ըսաւ . հիմայ Պ . Ստաթէոսը սիրողաբար այս առաքելական
 խօսքը իբրեւ երկան չուան մը՝ պլորած եւ փարենթազիզի մը մէջ Գոց-
 ուած՝ մեզի կը նետէ որ այն խորին խորխորատէն ելնենք : Սա փարեն-
 թազիզը բանանք եւ չուանը քակենք . նայինք մեզ այն վիհէն դուրս
 կը հանէ՝ մի : Եւ որպէս զի գրաբարը աղէկ հասկընալու դժուարու-
 թիւն քաշողներուն ձանձրութիւն չտանք , աշխարհաբար թարգմանու-
 թիւնը գնեմք հոս :

« Երբ որ ձեզմէ մէկը կըսէ , ես Պօղոսեան եմ . եւ մէյալը թէ
 « ես Լպօղոսեան . չէ՞ որ մարդ էք : Լնանկ է նէ ո՞վ է Պօղոսը կամ
 « ո՞վ է Լպօղոսը . պաշտօնեայներն էն , որոցմով հաւատացիք . եւ ին-
 « տոր որ տէրը տուաւ անոնց ամէն մէկուն : Ես տնկեցի , Լպօղոսը ջուր
 « տուաւ . Դ բայց Լստուած աճեցուց : Լսկէ ետեւ ո՞չ այն տնկողը մէկ
 « բան մըն է . ու ո՞չ այն ջուր տուողը . հապա Լստուած՝ որ աճեցուց :
 « Տնկողը ու ջուր տուողը մէկ են . բայց ամէն մէկը իր վարձքը պիտի
 « առնէ իր աշխատութեանը չափովը : Ինչու որ մենք Լստուածոյ գործա-
 « կից ենք . դուք Լստուածոյ պտուղն էք , Լստուածոյ շինուածքն էք .
 « Լստուածոյ ինծի տուած շնորհաց չափովը՝ իմաստուն ճարտարապետի
 « մը պէս հիմը դրի . բայց շինողը ուրի՛շ է . միայն թէ ամէն մէկը
 « թող զգուշանայ թէ ինտո՛ր կը շինէ : Ինչու որ մէկը ալ ուրիշ հիմ
 « չկրնար գնել գրվածէն 'ի զատ . որ է Յիսուս Վրիստոս : Թէ որ
 « մէկը աս հիմին վրայ կը շինէ ոսկի , արծաթ , պատուական քարեր ,
 « փայտ , խոտ , եղէգ , ամէն մէկուն գործը յայտնի պիտի ըլլայ . ին-
 « չու որ օրը պիտի ընտրէ . ինչու որ կրակով պիտի յայտնըվի . եւ ա-
 « մէն մէկուն գործը ինչպէս որ ըլլայ՝ կրակը պիտի փորձէ : Թէ որ մէ-
 « կուն շինած գործը մնալու ըլլայ՝ ինքը վարձք պիտի առնէ . եւ թէ որ
 « մէկուն շինածը երելու ըլլայ՝ անիկայ պիտի մնաս քաշէ . բայց ինքը
 « պիտի ապրի . սակայն անանկ՝ իբր թէ կրակին մէջը : Չէ՞ք գիտեր
 « դուք՝ որ Լստուածոյ տաճար էք . ու Լստուածոյ հոգին ձեր մէջը բնա-
 « կած է : Թէ որ մէկը Լստուածոյ տաճարը կապականէ՝ Լստուած ա-
 « նիկայ պիտի ապականէ . ինչու որ Լստուածոյ տաճարը սուրբ է , որ
 « դուք էք : Չըլլայ որ մէկը ինք զինքը խաբէ . թէ որ կուզէ ձեզմէ
 « մէկը աշխարհիս վրայ իմաստուն ըլլալ , թող յիմար ըլլայ՝ որ իմաս-
 « տուն ըլլայ : Ինչու որ աս աշխարհիս իմաստութիւնը Լստուածոյ առ-
 « ջելը յիմարութիւն է . վասն զի գրված է թէ՛ անիկայ իմաստուն-
 « նեքը իրենց խորագիտութեանը մէջ կը բռնէ : Եւ դարձեալ թէ՛ տէ-

“ րը կը ճանչնայ խմաստուններուն խորհուրդները, որ պարագ են, Լ,
 “ նանկ է նէ՝ ասկէց ետքը մարդ մըն ալ թող չպարծենայ: Ինչու որ
 “ ամէն բան ձերն է. թէ Պօղոսը՝ թէ Լ. պօղոսը՝ թէ Կեփասը՝ թէ
 “ աշխարհը՝ թէ կեանքը՝ թէ մահը՝ թէ ներկայ բաները՝ թէ գալիք-
 “ ները՝ ամէն բան ձերն է. դուք Քրիստոսին. Քրիստոս՝ Լստուծոյ, ”
 Լճա՝ ասոնք են նշանակած տեղին խօսքերը ամբողջ:

Եւ ո՞վ ըլլայ նէ այս կա՛րգաշուն պէս իսկոյն չիմանար եւ չհա-
 մոզուիր որ ժողովուրդը իր պաշտօնեայները կամ սպասաւորները ան-
 ուանելու կամ կարգելու աստուածատուր իրաւունք ունի: Թէ որ ըսես.
 Թէ այս խօսքերուս ո՞ր տեղէն կելլէ այդ ըսածդ, կըսեմ. դուն չես
 հասկընար. ես ալ քեզի պէս. պատճառն՝ որ Պ. Մատթէոսէն տը-
 րամաբանութիւն դաս չենք առեր որ այդպէս հեռուէն հեռու հետեւու-
 թիւններ հանենք. եւ Պ. Մատթէոս ալ իր այս արուեստը որ չնաշ-
 խարհիկ բան մըն է, ամէնուն չսովորեցըններ. աշակերտութիւն ընել ու-
 ղողը աղաչելու է. միջնորդ ձգելու է՝ Վալբանդեանցը կամ դռնամիջ-
 եան ժողովակէն մէկը. գուցէ անոնք հաճեցընեն: Մենք մի՛նակ մօ-
 տաւոր եւ դիւրաւ հասկըցուելու բաներէն հետեւութիւն հանել սովորած
 եմք. որուն օրինակը Ե. երորդ հատուածին պատասխանւոյն մէջ ցու-
 ցուցինք. բայց Պ. Մատթէոսին չկրցանք հանեցընել. որովհետեւ
 իր հանած հետեւութիւններուն չնմանիր: Ի՞նչ ընենք. համբերելու է:

Վոյնպէս կը համբերեմք. մինչեւ սովորիմք որ միապետական կա-
 ումարութիւն չունեցող եկեղեցին բոլոր քրիստոնէութեան պարծանք է
 եղեր. առ այժմ ասանկ եկեղեցի գիտեմք երիցական եւ քօնկրէկայի-
 օնալիսդ ըսուած բողոքականներունը. եւ ասոնց համար արշաւ գործեր ան-
 ժախի մնացած ըսել չվայլեր. որովհետեւ երկու երեք հարիւր տարուան
 բաներ են: եւ այդքան ուշ հնարուած եկեղեցիէ մը քրիստոնէութեան
 պարծանք չելլեր: Իսկ թէ որ այս ըսելով Պ. Մատթէոսը իրենց
 եկեղեցին, այսինքն իրենց դռնամիջեան ժողովակը հասկըցընել կուզէ
 նէ, անիկայ տակաւին տարուան մըն ալ չկայ:

ՀԱՏՈՒՄԺ ԺԲ.

Պ. ՄԱՏԹԷՈՍ

Այս ըսածներնիս, պա՛տուելի, սահմանադրական այն անձառելի իրա-
 ւունքներն ու արտօնութիւններն են, որ բոլոր աշխարհ արիւնը թափելով
 անկարելի էր ձեռք բերել. եւ որոնք Քրիստոսի ձրի մարդասիրութեամբը,
 անոր թանկագին արիւնովը գնուեցան եւ շնորհուեցան անխտիր առ հա-
 սարակ բոլոր ժողովուրդեան. բնաւ աշխարհական, եկեղեցական, արու, էգ,

հրեայ եւ հեթանոս խտրութիւն մը չդրուելով. (Գաղատ., Գ. 27-29). եւ
ամէն մարդ իր ձայնը ունի անոր կառավարութեանը մէջ, եւ մէկը այս
իրաւունքէն զրկելը ուրացութիւն է: (Ա. Կորնթ. ԺԱ. 12-25):

ՊԱՏԱՍԻԱՆ

Քիչ մըն ալ աւելի մօտեցանք սահմանադրական կառավարութիւնը
հասկընալու. Այս իրաւունքները եւ արտօնութիւնները որ սահմանադ-
րական կառավարութեան կարօտ են, այսինքն իրենց պաշտօնեայները
կամ սպասաւորները իրենք ընտրելը, որուն աստուածատուր իրաւունք
ըսաւ, անանկ բաներ են եղեր որ լուր աշխարհ արիւն թափելով չը
վաստըղուիր եղեր. տեսաւ մերոյ արիւնովը ստացեր ենք. Քսել է որ
տեսաւ մերոյ խաչելութեան ժամանակէն 'ի վեր է որ մարդիկ իրենց
պաշտօնեայները կամ սպասաւորները իրենք կընտրեն: (Չարմանալի
բան: Արդեօք Վրիստոսէ առաջ կուռքերուն քուրմերը որո՞նք կընտրե-
ին. վասն զի ասոնք ալ կուսպսշտներուն կրօնական պաշտօնեայներն է-
ին. ասոր վրայ մէկ նոր տեղեկութիւն մը ունի՞ մի Պ. Մատթէոսը,
թէ գետնէն կը բուսնէին կամ թէ կուռքերը իրենք կընտրէին իրենց
զոհադործ պաշտօնեայները: (Սաղաւորները կընտրէին ըսելը ամէն ազգի
համար տեղի չունի. պարսիկները եւ լակեդեմոնացիները եւ մակեդո-
նացիները եւ ասորեստանեայները եւ ուրիշ թագաւորութիւն ունեցող
ազգերը այդպէս թող եղած ըլլան. բայց հռոմայեցիներունը եւ աթե-
նացիներունը եւ բէովտացիներունը եւ քայեցիներունը եւ ուրիշ ասոնց
պէս՝ հասարակապետական կառավարութիւն ունեցող պետութիւննե-
րուն քուրմերը ո՞վ կընտրէր: Վրիստոսի անգին պատուական արեան
մեղի համար ստացած ճշմարիտ ազատութիւնը՝ որով դիւաց բռնութենէն
մեզ ազատած է, ասանկ մտացածին ազատութեան փոխելուն անունը
ի՞նչ է: Աերանս առաջ չերթար ըսելու թէ ամբարշտութիւն է. կար-
դացողները թող դատեն:

Բայց մէկ զարմանալի բան մըն ալ կայ. չէ՛ թէ միայն աշխար-
հական, եկեղեցական, արու, էդ, այլ եւ հրեայ եւ հեթանոս ալ
այս անձառելի իրաւունքներն ու արտօնութիւնները ստացեր են: Արն
է այս. իրենց պաշտօնեայները կամ սպասաւորները իրենք ընտրելը:
Աստուած իր անապական արիւնովը իրաւունք է վաստըղացեր հրեային
եւ հեթանոսին, որ մէկը իրեն խախտ պաշտէ, եւ միւսը իրեն պաշտէ կամ
պաշտէ կամ լաման ընտրէ: Ամ թէ ասոնք ընտրեն իրենց քաղաքին ե-
պիսկոպոսը եւ քահանայն եւ ասոնք անուանեն զանոնք կամ կարգեն:
Անմիտ դիմախօսութեան փափաքը մարդս ի՞նչ խենթ խօսքեր զրուցե-
լու կը հասցընէ:

Վիչ մըն ալ փարենթազիզները բանանք. անոնց մէջէն զուար-
 ճալի բաներ գտնելու սովորած եմք: Այս հատուածիս մէջ երկու հատ
 ունիմք. մէկն է (Վաղ. Գ. : 27-29): Ասիկայ երկար եւ զժուար
 հասկըցուելու բան մը չըլլալուն համար գրաբարը կը գնեմք. « Արք
 « միանգամ 'ի Վրիստոս մկրտեցարուք, զՎրիստոս զգեցեալ էք.
 « չիք խտիր. ո՛չ հրէի, եւ ո՛չ հեթանոսի. ո՛չ ծառայի, եւ ո՛չ ա-
 « զատի. ո՛չ արուի, եւ ո՛չ իգի. զի ամենեքեան դուք մի էք 'ի Վրիստոս
 « Յիսուս: Ապա եթէ դուք Վրիստոսի էք, ուրեմն Աբրահամու զա-
 « ւա՛կ էք. ըստ աւետեացն ժառանգք», ինչ մը հասկըցա՞ր մի աս-
 « կէց՝ ամէն ժողովուրդի պաշտօնեայնները ընտրելու իրաւունքին վրայօք:
 խօսքին միտքը այն է որ 'ի Վրիստոս մկրտուածները ինչ վիճակի եւ
 ինչ աստիճանի մարդ ըլլան, եւ ինչ ազգ ալ ըլլան, իրենց այս խը-
 տիրը եւ տարբերութիւնը կը կորսընցունեն. ամէնքն ալ 'ի Վրիստոս
 մէկ կըլլան. այսինքն՝ քրիստոնեայններուն տրուած բարեացը եւ առանձ-
 նաշնորհութեանցը ամէնքն ալ անխտիր մասնակից կըլլան: Իայց այս
 բարիքը եւ առանձնաշնորհութիւնները ինչ են, հոս չըսեր. միայն
 հաւատոյ կողմէն Աբրահամու ժառանգ ըլլալով ամէնն ալ միօրինակ այն
 բարեացը եւ արտօնութեանցը վրայ իրաւունք ունենալնին կը ցուցընէ:
 Իայց դուն այն ինչ կը նայիս. մեր Պ. Ա. ատթէոսը ասոր մէջ ամէ-
 նէին գրած է 'ի Վրիստոս Յիսուս խօսքը գտեր. եւ իր հզօր տգիտու-
 թիւնովը ասոր մէջէն քա՛շելուն պէս՝ ժողովուրդեան իրենց պաշտօնեայ
 ընտրելու իրաւունքը հաներ է: Դուն անոր չափ զօրաւոր չեմ. ինչպէս
 որ ես ալ. մենք մեր ուժը օգտածին չափ աշխատինք:

Վիչ մըն ալ երկրորդ փարենթազիզը բանամք (Ա. Կոր. Ժ. 12-25):
 Ասիկայ քիչ մը երկանկէկ ըլլալով՝ որովհետեւ տասն եւ չորս
 տուն կը պարունակէ, ըստ մեր սովորութեան աշխարհաբարը գնեմք:

« Ինտոր որ մարմինը մէկ է՝ ու շատ անդամներ ունի, ու ան մար-
 « մինին շատ անդամները ամէնը մէկ մարմին են, անանկ ալ Վրիստոս:
 « Ասան զի մենք ամէնքս մէկ հոգիով մէկ մարմին ըլլալու համար մը-
 « կըրտուեցանք. թէ՛ հրեայ թէ՛ հեթանոս, թէ՛ ծառայ թէ՛ ազատ,
 « ամէնքս ալ մէկ հոգի առինք*: Ինչու որ մարմինը մէկ անդամ մը չէ,
 « այլ շատ: Թէ որ ոտքը ըսէ. որովհետեւ ես ձեռք չեմ, այն մար-
 « մինէն չեմ. ասով այն մարմինէն չէ՞ մի: Այլ թէ որ ականջը ը-
 « սէ, որովհետեւ ես աչք չեմ՝ այն մարմինէն չեմ. անով այն մար-
 « մինէն չէ՞ մի: Թէ որ բոլոր մարմինը աչք ըլլար, ականջը ո՞ր կըլ-

* Գրաբարին մէջն է՝ ալբա. որուն աշխարհաբարը է՛նէնէն, աշխար-
 հաբար լեզուի չարմարելով ասինք թարգմանեցինք:

« լար . եւ թէ որ բոլորը ահանջ ըլլային , ո՛ր էին հոտոտելիքը : Բայց
 « հիմա Աստուած այն անդամներուն ամէն մէկը մարմինին վրայ դրաւ
 « իր ուզածին պէս . հասցա թէ ամէնը մէկ անդամ ըլլար նէ՛ մարմինը
 « ո՛ր կըլլար : Բայց հիմա անդամները շատ են ու մարմինը մէկ : Եւ
 « կրնար ձեռքը աչքին ըսել թէ դուն ինձի պէտք չես . եւ ո՛չ դարձ-
 « եալ գլուխը ոտքերուն , թէ ինձի պէտք չէք : Այլ մարմնոյն ան-
 « դամներուն մէջ աւելի տկարագոյն երեւցածներն ալ հարկաւորագոյն
 « են . ու անարգ երեւցածներուն աւելի պատիւ կրնեմք , եւ մեր ամօթոյ
 « անդամները աւելի պարկեշտութիւն ունին : Այլ պարկեշտ անդամներ-
 « նուս բան մը պէտք չէ՛ . ինչու որ Աստուած կարգադրեց մարմինը , եւ
 « պղտիկին աւելի պատիւ տուաւ որ մարմնոյն մէջ տարածայնութիւն
 « չըլլայ . այլ անդամները իրարու վրայ մէկ հոգ ունենան , : Ահա՛
 այսքանս է Պ . Մատթէոսին մեզի ցուցուցածը . որուն մէջ մարմին մը
 կը տեսնեմք , եւ քանի մը անդամներ . բայց Պ . Մատթէոսին ըսա-
 ծին նայելով հոս այն պիտի գտնէինք որ մէկ անդամը ինչ ընէ նէ մէկալ-
 ները նոյնը ընեն . ինչպէս որ ժողովուրդը ամէնն ալ հաւասար իրա-
 ւունք ունին կրսէ՛ իրենց պաշտօնեայնները իրենք անուանելու եւ կար-
 գելու . այս վկայութիւնս այն խօսքին վրայ բերելով հասկըցընել կուզէ
 որ մարդոյս ալ ամէն անդամները մէկէն կը քալեն . կամ կը լսեն , կամ
 կը տեսնեն , եւ այլն : Այսինքն՝ մարդս ահանջներովը կը քալէ կամ
 ձեռքերովը կը տեսնէ , կամ կերակուրը ոտքերուն վրայ դնելով փորը
 կը կշտացընէ . եւ որովհետեւ ասիկայ տեսնուած բան չէ՛ , հաւտացը-
 նելու համար այս վկայութիւնը գտնելու կարօտ եղեր է :

Բայց ինչ որ է նէ՛ ասիկայ այլաբանութիւն մըն է . նայինք սըր-
 բազան առաքեալը այս այլաբանութիւնը ի՛նչպէս կը պարզաբանէ . ուստի
 գլուխին 25 տունէն ետքը մնացածներն ալ թարգմանեմք :

« Թէ որ մէկ անդամ մը վշտանայ նէ՛ ամէն անդամներն ալ ա-
 « նոր հետ կը վշտանան . եւ թէ որ մէկ անդամը փառաւորուի նէ՛ ամէն
 « անդամներն ալ հետը կը խնդան : Բայց դուք Վրիստոսի մարմին՝ եւ
 « անոր անդամներէն անդամէք : Այլ եկեղեցւոյ մէջ դրածներն ասոնք
 « են , առաջ առաքեալները , երկրորդ՝ մարգարէները , երրորդ՝ վարդա-
 « պետները . ետքը զօրութիւնները , ետքը բժշկութիւններ ընելու շը-
 « նորհքը , օգնութիւնները , կառավարութիւնները , լեզուներուն տե-
 « սակները , լեզուներու թարգմանութիւնները : Ամէնքը առաքեալ են
 « մի . ամէնքը մարգարէ՞ են մի . ամէնքը՞ վարդապետ են մի . ամէնքը
 « զօրութիւն են մի . ամէնքը բժշկութիւններու շնորհք ունի՞ն մի .
 « ամէնքը լեզուներ կը խօսի՞ն մի . ամէնքը կը թարգմանե՞ն մի : Բայց
 « դուք աղէկ շնորհքներու նախանձաւոր եղիք . այլ ես ձեզի մէկ ա-

« Եւ ի ճամբայ մը ցուցընեմ » : Հոս կը լը մենայ Մ . կորնթացւոյ թըղ-
թին ԺԻ . գլուխը :

Մյս խօսքերէս ալ չհասկըցուիր որ ժողովուրդեան իրեն պաշ-
տօնեայներն անուանելու կամ կարգելու աստուածադիր իրաւունք կայ ,
ինչպէս որ Պ . Մատթէոս երազէր էր , եւ այս վկայութիւններով մե-
զի ցուցընել կուզէր . մենք հոս անոր հակառակը կը տեսնեմք : Եկեղեց-
ւոյ կառավարութիւնը սահմանադրական է կըսէ Պ . Մատթէոս . ժո-
ղովուրդն ալ այս սահմանադրութիւնը Վստուծմէ առած է ելեր Վը-
րիստոսի սուրբ եւ փրկարար չարչարանաց շնորհիւր . ուստի եկեղեցւոյ
կառավարութիւնը ամէն ժողովուրդին մէկէն ձեռքը պիտի ըլլայ : Բայց
այս խօսքիս մէջ Պօղոս սրբազան առաքեալը ատիկայ չընդունիր . եկե-
ղեցւոյ անդամները կարգ կարգ բաժնելով առաքեալ , մարգարէ , վար-
դապետ , կառավարող զատ զատ կը դնէ . ետքն ալ՝ ամէնքը մարգարէ
են մի , ամէնքը վարդապետ են մի , կը հարցընէ . որով կիմացուի որ
ամէն ժողովուրդ վաւել ալ չեն . այսինքն , եկեղեցւոյ կառավարող ալ
չեն . չէ՛ նէ՛ սուրբ առաքելոյն ըսած այլաբանութիւնը նայելով Պ .
Մատթէոսը կուզէ որ մարմինին ամէն կողմն ալ ձեռք կամ ախանջ ըլ-
լայ . աչքի կամ քրթի , բերնի կամ ոտքերու տեղ չունենայ : Մեր քաջ
տրամաբանը մեզի մինակ այլաբանութիւնը կը ցուցընէ , անոր բացատ-
րութիւնը կը պահէ : Կերեւի որ բողոքականներուն զրպարտութեանը
հաւատացեր է , որ կըսեն թէ հայերը սուրբ գիրք կարդալը ժողովուրդեան
կարգիչն . եւ ասոր վստահելով՝ սուրբ գրքին մէջէն իր բանին յարմարիլը
չյարմարիլը չնայելով փարենթազիզի մէջ գրքի մը անուն , թուանշան մը
հայերէն , թուանշան մըն ալ եւրոպական դնելով ամէն բան լըմնցած՝
եւ ամէն կարգացող իր ըսածին հաւատալու պարտական կը ճանչնայ :
Բայց այսու ամենայնիւ մինչեւ հիմայ իր ըսածներուն մէկ բառն անգամ
հաստատելու վկայութիւն չկըցաւ բերել . իսկ այս վերջինս իր կարծի-
քին բողոքովին հերքումն է . հերքողն ալ սուրբ առաքեալն է : Եւ աս-
ով խօսքը երկու իրարու հակառակ կերպի կը դառնայ . մենք Արեւոյան
առաքելոյն գրօշակին տակն եմք , եւ կըսեմք . եկեղեցւոյ մէջ առաք-
եալը , վարդապետը , մարգարէն , կառավարողը , այլ եւ այլ անձինք են :
Պ . Մատթէոս եւ Վալթանգեանցը եւ Մեղուն եւ ասոնց ժողովակը
կըսէ . այնպէս չէ՛ . եկեղեցին բաղկացընող ժողովուրդը ամէնն ալ
կառավարողներ են . եւ ասոնց գրօշակը որի՛ ձեռք ըլլալը Պ . Մատ-
թէոսը աղէկ գիտէ , եւ անունը չեմ յիշեր . բայց բողոքական երի-
ցականներուն եւ բօնկրէկացիօնալիսդներուն աղանդապետն ըլլալը կը
յիշեմ : Ար մնայ ինծի ըսել՝ ինչ որ Եղիա մարգարէն Վահաղ կուռքին
քուրմերուն ըսաւ . « մինչեւ ցե՞րք կաղայք յերկուս հետս , եթէ տէր

« Ե Քստոսա՛ծ՝ երթա՛յք զհետ նորա . եւ եթէ Բահա ղն իցէ՛ երթա՛յք
 « զհետ նորա » . (Պ . Բարա . ԺԲ . 21) . Թէ որ ուղղափառ Վրիս-
 տոնեայ էք նէ՛ ահա՛ Պօղոս առաքեալը . անոր ետեւէն գացէ՛ք : Թէ որ
 երիցականներուն ու քօնկրէկացիօնալիսփներուն աղանդապետին պիտի
 հետեւիք նէ՛ շիտկէ շիտակ անոնց ետեւէն գացէ՛ք : Իմայ կրօնից ա-
 զատութիւն կայ . մարդ ձեզի բան չըսեր . բարեպաշտ հայոց մէջ ին-
 չո՛ւ մնացեր էք . եւ գիրքեր եւ գրուածներ սպելով կապականէք հասա-
 բակաց միտքը ինչպէս որ օձը ըրաւ , եւ ինչպէս որ դուն՝ պարո՛ն
 Մատթէոս , հայոց պարզամիտներուն ընել ուզեցիր հայոց էկեղեցին ե-
 տիբէլիցի տրուելէ մակագրեալ տետրակովք բողոքականներուն : հակառակ
 ձեւանալով եւ անկլիքան եկեղեցիին մուլար սկզբունքները ուղղափառ
 ազգի գ մէջ ալ մտցընել ուզելով* :

ՀԱՏՈՒԱԾ ԺԳ .

Պ . ՄԱՏԹԷՈՍ

Սահմանադրական կառավարութեան մի ոգին՝ անոր պաշտօնեայները՝ տէր
 եղող ժողովուրդին կողմէն ընտրուիլ ու կարգուելուն վրայ կը կայանայ .
 վասն զի ընտրութեան տէր եղողը ա՛լ ամենուն տէրն է . ասիկայ դուք
 խիստ աղէկ գիտէք :

Իրաւ եկեղեցական կառավարութեան , սահմանադրական ըսուիլ սովորու-
 թիւն եղած չէ՛ . բայց ոմանց այս պաշտօնը շարաշար ՚ի գործ դնելով
 անոր սահմանադրուած բուն կերպին հակառակ , իրենց աշխարհային իշ-
 խանութեանց կերպին հետեւցընելով միապետականութեան փոխած ըւ-
 լանուն , զորն որ եւ դուք կը պաշտպանէք , խօսքերնիս հասկըցուելու
 համար մենք տլ Սահմանադրական բառով բացատրեցինք :

ՊԱՏԱՍԻԱՆ

Իմայ հասկըցանք Սահմանադրական կառավարութիւն ըսածն
 ինչ ըլլալը : Բայց որովհետեւ այս բառը եկեղեցական կառավարու-

* Բողոքականները այս տետրակիս դէմ Ա-Էփաֆեցի յատուկ յայտարարու-
 թիւնով մը իմացուցին որ Պ . Մատթէոսը նոյն իսկ Հայաստանեայց ե-
 կեղեցւոյ դաւանութիւնները չգիտեր : Պ . Մատթէոս՝ որ իրեն չինկած
 խօսքերուն մէջ իյնալ եւ կրօնական վէճ բանալը սիրելուն այս ան-
 գամօրինակը ցուցուց Պ . Նալբանդեանցին կողմէն փոխանորդաբար մեզի
 հետ վէճ բանալով , անիմանալի համբերութեամբ ասիկայ կըլլեց . պատաս-
 խան մը չտուաւ ո՛չ առանձին . եւ ո՛չ Մեղի կամ ուրիշ պարբերա-
 կանի մը միջոցաւ :

Թեան համար ըսուիլ սովորութիւն եղած չէ՛ եղեր, եւ իր խօսքը հասկըցունելու համար ինքը հնարեր է, այսինքն՝ Բնութեան մէկ բան մըն է եղեր նէ, նամակին սկիզբը ի՞նչ պիտի ըլլար ինծի ըսելը թէ կառավարութեանց միապետականի եւ սահմանադրականի մեծ բաժանումը աղէկ գիտես: Այս աշխարհային կառավարութիւններուն այդպէս բաժանում չգիտնալ, եւ պատճառն ալ՝ այդպէս բան մը չկենալն ըսի: Այնպէս կառավարութեան համար՝ ընաւ չէի կրնար գիտնալ. վասն զի առաջուց գործածուած բան չէ՛. նոր ստեղծուած է * Բայց հրամանքդ իմ գիտցածներս ու չգիտցածներս գուշակելով շատ կը սխալիս Կ. Մատթէոս. եւ մինչեւ հիմայ ալ մէկ շիտակ գուշակութիւնդ չտեսայ այս մասին: Եւ որ օրինակ, երբ գուշակեր էիր որ սահմանադրութեան սկզբունքին ոգուով չափ հակառակ եմ, ապացոյցներով հաստատելի որ հրամանքդ ես հակառակը. եւ քու վրադ եղածը կը կարծես թէ իմ վերաս ալ կայ:

Ասանկ գուշակութիւն մընալ այս հատուածոյս մէջ կընես. որպէս թէ քեզ խիստ աղէկ գիտեմ եղեր որ ընտրութեան տէր եղողը ամենուն ալ տէրն է: Այս ասոր հակառակը կը տեսնեմ: Ազգային երեսփոխանները ազգին հասարակութիւնը ընտրեց. բայց երեսփոխաններուն արտօնութիւնը չունին ազգին մէջէն ասոնցմէ զատ մարդիկ. նա՛ եւնոյնիսկ վարչութեան անդամներն անգամ, որոնք անշուշտ՝ երեսփոխաններ ընտրողներէն են: Տե՛ս «չքային սահմանադր. 12, 10 դուածին 1 եւ 4 հատուածները. ուր կը տեսնես թէ ինչ պարագայներու մէջ եւ ի՞նչ խնդիրներու մէջ վարչութեան անդամները քուէ չունին, այսինքն՝ քուէ ուէի տէր չեն. ահա՛ քեզի մէկ օրինակ մը ընտրութեան տէր եղողները ամենուն ալ տէր չկրնալ ըլլալուն. որուն համար դուն էիր ըսողը թէ ասելի բարեկարգութեամբ մը եւ ընդհանուր հանութեամբ հաստատուած է: Տե՛ս ՚ի վեր. հարստութ. Գ: Արեւելի է որ սահմանադրութեան սկզբանցը դեմ ՚ի ներքին երես ըսելիքներուդ մէկն ալ այս ըլլայ. որովհետեւ քու դրութիւնդ բոլորովին կը խանգարէ: Բայց թէ որ միտքդ այդպէս բան մը դրած ես նէ՛ միտքդ փոխելովդ շատ աղէկ կընես. որովհետեւ քու ըսածիդ եւ ուզածիդ պէս՝ ընտրութեան տէր եղողները ամէն բանի տէր ըլլան նէ՛ ամէն բան խառն ՚ի խուռն կերթայ. եւ ըրած ընտրութիւննին պարապ կըլլայ:

* Սահմանադրութիւն բառը բոլորովին ներահնար եւ Կ. Մատթէոսի շէնք չէ այս բառ խոյստեցուցած նշանակութիւնը նոր է. սուրբ Լուսաւորիչ գործածեր է ամէն մէկ առաքելոց սահմանուած պաւառը նշանակելու մտքով: «Սոցուն՚ի շնորհազարդ աբանիցն եւ ՚ի գործոցն յայտնի է իւրաքանչիւր սահմանադրութիւն հրամանաւ «հոգւոյն սրբոյ վեճակեալ» (Ագաթանգ. Էր. 516. ապ. վէճեալ.):

Դուք է ըսես որ ընտրութիւն ընելու իրաւունք ունեցողը՝ ընտրու-
 եալ մարդուն ունեցած կամ այն ընտրութիւնովն առած արտօնութեանը
 տէրն է, որու ուզէ նէ անոր կուտայ. եւ ուզէ նէ մարդու չտար, ին-
 քը գործ կածէ. յայց մէկին տալէն ետքն ալ սոյն գործոյն ընտրողը
 չխառնուիր: Այս ըսել կուզէ Պ. Մատթէոսը պիտի ըսես:

Իայց երբ արտօնութեան տէրն ուրիշ մը ըլլայ, եւ այն իմաց
 տայ ազդին որ այն ինչ արտօնութիւնը իրենց մէջէն մէկին շնորհելու
 միտք ունի, կուզէ որ անոր արժանաւոր անձ մը ընտրեն, այս ի՞նչպէս
 կը հասկըցուի Պ. Մատթէոսին սկզբունքովը. այն արտօնութիւնը ընտ-
 րողներունն է մի. եւ ուզեն նէ անխտիր ամենն ալ կրնա՞ն մի այն ար-
 տօնութիւնը առնուլ, տուողին կամացը դէմ: Ահա՛ ասոր վրայ է
 խնդիրը:

Եպիսկոպոսը աստուածային շնորհ պիտի մատակարարէ մէկուն,
 քահանայական ձեռնադրութիւն տալով: Ըսենք թէ ժողովրդեան իմա-
 ցուց եւ պատուիրեց որ իրենց համար քահանայացու մը ընտրեն որ
 ինքն ալ ձեռնադրէ: Մարդը ընտրելէն եւ անկէայ եպիսկոպոսին քա-
 հանայ ձեռնադրել տալէն ետքը քահանայութեան տէրը իրե՞նք եղած
 կըլլան. անանկ որ՝ եպիսկոպոսը անոնց ընտրածը քահանայ ձեռնադ-
 րելով ընտրողներն ալ մէկ տեղ ձեռնադրուած սեպուին:

Ըսանկ ըլլայ նէ՝ մէկ քաղաքի կամ գեղի մը մէջ միայն մէկ ան-
 գամ մը ժողովրդին ընտրութեամբ մէկը քահանայ ձեռնադրելը հե-
 րիք է. անկէց ետքը քահանայն ներկայ չգըտնուած տեղը ժողովուր-
 դէն մէկը ելլել պատարագ ընելու կարող պիտի ըլլայ. միայն թէ բուն
 պատարագին ընտրողը ինքը ըլլայ: Իսկ աշխարհական կառավարու-
 թեան: Քրանսըզ ազգը վեց միլիօն քուէով Առի՛ Ապուլէոնը իրենց
 կայսր ընտրեցին. ուրեմն կայսրութիւնը այն վեց միլեօն մարդունն ալ
 է. ուրեմն՝ անոնց ո՛րն որ ելլէ Առի՛ Ապուլէոնին ըսէ թէ՛ իմ ընտ-
 րութեամբս այսքան ժամանակ կայսրութիւն ընելդ բաւական է. որով-
 հետ եւ ընտրութեան դէր է՛, ամենամալ դէր է՛, կայսրութիւնդ ալ իմս է.
 ես հիմայ այն բանը որ իմս էր ու քեզի տուի նէ ետ կուզեմ, Առի՛
 Ապուլէոնի պէ՛տք է որ այսպէս ըսողին ձեռքը յանձնէ թագն ու գա-
 ազանը, եւ ինքը երթայ իր սննեակը նստի: Այ՛ մի որ կայսրէն այդ-
 պէս խնդիր մը ընողին համար ամէն մարդ կրէ թէ խե՛նդ է: Իայց
 այդ խենդութիւնն ալ Պ. Մատթէոսին գրութեանը հետեւանքն է:

Արնայ մէկը ըսել, հիմակուան բոլոր եւրոպացի կենցաղագէտնե-
 րուն եւ աշխարհավարութեան վրայ մատենագրողներուն միաբան վկա-
 օթութեամբը հաստատուած է թէ իշխանութիւնը ժողովրդեան իր ինչ-
 քը եւ իրաւունքն է. եւ ժողովուրդը իշխան ընտրածը իբրեւ երես-

իփոխան կընտրէ . իսկ իրաւունքին գործադրութիւնը անոր ձեռքը տալով . որն որ կրնայ ետ առնել երբ որ ուզէ : Բայց ժողովրդեան խրաքանչ-խր անհատ՝ այդ իրաւունքը չունի :

Եւ այդ ըսել է թէ՛ ընտրող խնդրութիւն ընելու իրաւունք չունի . որովհետեւ այդ կարողութիւնը ՚ի գործ դնելու մինակ ելլելը խնդրութիւն է : Բայց ապստամբութիւն հանելու իրաւունք ունի խնդրութիւն կընէ այդպէս բան մը առարկողը . ես ժողովուրդին ո՛չ խնդրութիւն ընելու իրաւունքը կը ճանչնամ , եւ ո՛չ ապստամբութիւն հանելու , եւ այս բանիս մէջ . եւրոպացի կենցաղագէտները եւ աշխարհավար մատենագիրները ո՛րքան իմաստուն որ կարծուին . թէ որ այդպէս իրաւունք մը կը ճանչնան նէ՛ ինծի առաջնորդ չեմ բռներ : Եւ ինծի անսխալ առաջնորդ ունիմ Եւստուածաշունչ պատգամը որ կըսէ .
 « ո՛չ ուստեք է իշխանութիւն , եթէ ո՛չ Եւստուծոյ . եւ որ ենն ,
 « Եւստուծոյ կարգիւն են : Եւստուծու եւ որ հակառակ կայ իշխանութեան ,
 « Եւստուծոյ հրամանին հակառակ կայ , » : (Հռոմ . Ժ՛Ի . 1. 2) : Եւ որ համար ո՛ր կառավարութեան իշխանութեանը տակը գտնուիմ նէ՛ անոր ամէն բանով հնազանդ գտնուելու կը նայիմ , չէ՛ թէ պատժողական զօրութենէն հարկադրելով , այլ խղճմտանքս ինծի այնպէս թելադրելուն համար : Եւ որ հակառակ ապստամբութեան ոգին Եւրոպա անցեալ դարուն վերջէն ՚ի վեր ի՞նչ կընէ կոր . ամէնուն ալ յայտնի է . եւ ասկէց աւելի խօսելուն տեղը չէ՛ այս տեղ :

Եւստուծոյն կը հասկըցուի որ՝ Պ . Մատթէոսին ըսածներուն հետեւութեամբ՝ աշխարհական կառավարութեան մէջ խնդրութիւն կամ ապստամբութիւն , իսկ եկեղեցականի մէջ խնդրութիւն եւ շփոթութիւն ելլելը անխորշելի է : Իմ խիստ աղէկ գիտցածս այս է , որն որ Պ . Մատթէոս ընդ հակառակն մարդարեացեր է : Իսկ թէ ժողովուրդը եկեղեցոյ պաշտօնեայ ընտրելու կամ կարգելու բնաւ իրաւունք ունի՞ կամ թէ չունի՞ , ետքը խօսելու կարգերնիս կուգայ . առ այժմ սա ըսեմ միայն՝ որ ընտրել ու կարգելը մէկ բան ըսել չէ ըստ սահմանադրութեան ալ . եւ անոր համար հոս Պ . Մատթէոսը ընտրելու կամ կարգելու ըսածը նախընտաց հատուածին մէջ անուանել կամ կարգել կը դնէ . որ անուանել եւ ընտրել եւ կարգել բառերուն ուժը մէկի պէս ցուցընելով այս կողմէն ալ սահմանադրութիւնը սուտ հանէ՛ եւ կարգացողները խարէ : Բայց մենք աշխարհի սահմանադրութեան մէջ , որուն աւելի բարեկարգութեամբ հաստատուած ըլլալը ինքը կը խոստովանի , ընտրելն ու անուանելը իրարմէ տարբեր կը գտնեմք : « Տեսեալական խորհուրդը կընտրէ « այս հոգաբարձուները . եւ . . . Պատրիարքը կանուանէ : (յօդ . 24) : Անտի ընտրելը ո՛չ անուանել է եւ ո՛չ կարգել :

Պ . ՄԱՏԹԷՈՍ

Այդ ո՛վ կընտրէ մինչեւ ցայսօր մեր եկեղեցական կառավարութեան ո՛ր
եւ իցէ պաշտօնեայները: Յայտնի է եւ ամէն հայ կը վկայէ թէ աս
կառավարութեան իրաւամբ տէրը եղող մեր բոլոր ժողովուրդը . որ է ե-
կեղեցին անխտիր:

Ասոր հաստատութեանը վկայ ունինք ինչպէս ըսինք վերը մեր ազգային
եկեղեցւոյ կանոնգիրքը . ազգային պատմութիւննիս . մաշտոցին մէջ ձեռ-
նադրութեան կերպը . բոլոր ուրիշ եկեղեցեաց հին եղանակը, եւ մինչեւ
ցայսօր միօրինակ շարունակուած ազգային աւանդութիւննիս եւ սովո-
րութիւննիս:

Պատուելի . գուցէ . յուսացածիւք համեմատ , փառասիրութեան ու տի-
րապետութեան ոգւով մոլելիք եւ քու այդ խօսքերէդ շնանալիք ո՛ր եւ
իցէ եկեղեցականն ալ, եւ նա՛ եւ այս քու նոր դրութեանդ , քու կար-
ծածիդ համեմատ , հաւանութիւն տալիք , եւ ըստ քու դրութեանդ
այսուհետեւ բոլոր եկեղեցական դասուն եւ եկեղեցւոյ բոլոր անդամնե-
րուն վրայ լիակատար , բացարձակ , անկախ եւ միահեծան իշխանու-
թիւն վարելիք կրօնական ժողովիդ անդամներն ալ, խիստ քննութիւննե-
քով եւ անաչաւ փորձութիւններով , իրենց իշխանը գտնուող ժողովուր-
դէն ընտրուած են . ժողովուրդին պատգամաւորներն , երեսփոխաններն ու
ներկայացուցիչներն են անանկ որ՝ եթէ ժողովուրդը չընտրէր եւ կամք չը-
նէր հիմայ եկեղեցական չպիտի ըլլային եւ կրօնական ժողովին մէջ չպի-
տի բազմէին : Ասոնց բոլոր տնօրէնութիւնները եւ տալիք վճիռները ի-
րենց կողմէն եւ յանձնէ չպիտի ըլլայ , եւ այնպէս ՚ի գործ չպիտի դը-
նեն . այլ ժողովուրդին կողմէն կամ յանուն ժողովրդեան կամ եկեղեցւոյ
հոս ձեռքերնին ունեցած օրէնքներուն . զի աւետարանի սահմանադրու-
թիւնը Քրիստոս եկեղեցիին տուաւ եւ եկեղեցին իր պաշտօնեիցը :

ՊԱՏԱՍԻԱՆ

Եւ խորնթաց հատուածոյն վերջը ըսինք թէ ընդէւը ուրիշ է . ան-
տանէւը եւ կարգէւը ուրիշ է : Քաջանայ ընելու մէկը պէտք ըլլայ եւ
եպիսկոպոսը ինքը ընտրած եւ ձանչցած մէկը չունենայ նէ՛ ժողովուր-
դէն կուղէ մէկ մը . որովհետեւ անոնք աւելի աղէկ գիտեն իրենց հայ-
րենակից մէկին բնաւորութիւնը եւ վարքը , և քաջանայութեան այժանա-
ւորութիւնը : Եւ այց քաջանայն ժողովուրդին սպասաւորը չէ՛ որ իր ծա-
ռայութեանը առած մարդոց հետ ըրածին պէս անոնց հետ ալ պայման
դնէ . եւ ըսէ . այս ինչ կամ այն ինչ գործս այս ու այն պայմաններով
գործելու համար քեզ ինծի պաշտօնեայ եւ սպասաւոր կընտրեմ . այլ
եկեղեցւոյ սպասաւոր է , եկեղեցւոյ տրուած շնորհքներուն մատակարարն

ե. եկեղեցւոյ մէջ շարունակուած աւանդութիւններուն աւանդապահն է, եկեղեցւոյ տգէտ անդամներուն ուսուցիչ, մոլի անդամներուն բարբը շիւկելու համար խրատիչ. եւ ուրիշ շատ մը պաշտօններ ունի. որոնք Պ. Մատթէոսը՝ որուն հետ է մասնաւորապէս խօսքերնիս՝ քրիստոնէական վարդապետութիւն սովորելու ատենը կը սովորի:

Այս ամէն պաշտօններուն անվրէպ եւ ըստ պատշաճի կատարումը կերպ կերպ պայմաններ ունի՝ որոնք եպիսկոպոսը եւ ուրիշ եկեղեցականները պիտեն. անոր համար ժողովուրդը մէլը քահանայութեան ընտրելուն պէս եպիսկոպոսը նոյնհետայն անոր կընակը քահանայական զգեստները հագցընելով եւ ձեռքերն ու ձակատը օծելով եւ սկիհը եւ մաղըզմայն ձեռքն աւանդելով քահանայ չընէր. այլ իրիկուրնէ ժողովուրդը եկեղեցին կը գումարէ. ժողովուրդին գիտնալու բաները. ինչպէս են ըստ աշխարհի քաղաքավարութիւնը, պարկեշտութիւնը, առաքինի կամ մոլի մարդու համբաւ ունենալը, ծնողացը հարազատ կամ անհարազատ զաւակ ըլլալուն վրայօք համբաւը, եւ այլն, ժողովուրդեան կը հարցընէ: Այլ որովհետեւ անոնք էին այն մարդը ընտրողը, եւ՛ի հարկէ այս բաներուս ալ վկայութիւն կ'ընային տալ, անոնց հարցընելու իրաւունք ունի:

Ատքը կը դառնայ վարուցը եւ բարուցը համար աւելի աղէկ անգեկութիւն կուզէ չէ՛ թէ ժողովուրդէն. (այս անգամ ժողովուրդը հանդիսատես կ'ըլլայ), այլ ընտրելոյն խոստովանահայրէն. որ ինչպէս յայտնի է՝ քահանայ մըն է. եւ հոս կըլըմնայ ժողովուրդին ընտրելը. անիկայ այս սահմանէն վեր բան չունի. Այս քննութենէս ետքը կուգայ հաւատքին դաւանութիւնը. որն որ կընէ չէ՛ թէ միայն Հայաստանեայց եկեղեցւոյ ուղղափառ դաւանութիւնը կարդալով, այլ եւ նոյն սուրբ եկեղեցւոյ ընդունածներն ընդունելով եւ մերժածները մերժելով:

Այպիսկոպոսը այս քննութիւններս ընելէն եւ եկեղեցւոյ կանոններուն համաձայն գտնելէն ետքը անիկայ կը ձեռնադրէ. եւ սրբոյն Պետրոսի առաքելոյ Աթուղիկեայց թղթէն ընթերցուած մը կարդալով, որուն մէջ կը պարունակէ սա խօսքը. «արածեցէ՛ք որ ՚ի ձեզ հօտդ է «Մատուծոյ», (Վ. Պետր. 1. 1.). ժողովուրդը անոր կը յանձնէ, ինչպէս որ ոչխարները հովիւին կը յանձնուին. Պարոն Մատթէոսին ըսածին նախելով այս նոր ձեռնադրուած հովիւին տէրը պիտի ըլլան ոչխարները. վասն զի անոնք ընտրած պիտի ըլլան ասիկայ: Այս ոչխարները բանական ըլլալով կընան իրենք ըստ պատշաճի աղէկ խնամող հօտ վիւ մը ընտրել. բայց միայն իրենց բաժնին ինկածին չափ: Թուէ որ ասանկ չէ՛ նէ՛ ինչո՞ւ համար ժողովուրդին ընտրութիւնը բաւական չափ տեսնելու եպիսկոպոսը. ինքն ալ ուրիշ պայմաններ կը բնորոշէ վրան. որով

կը ցուցընէ թէ այն պայմանները ընտրելոյն վրայ չկրնայ գտնուիլ նէ ինքը, մինակ մարդ մը, թայց եկեղեցւոյ մէջ գերագոյն իշխանութեան տէր, ժողովուրդեան չէ՝ թէ մեծագոյն մասին՝ այլ ամէնուն մէկէն անգամ միաբան ընտրութիւնը կրնայ ոչընչացընել։ Այն ատենը որ ժողովուրդը կրնայ բռնադատել եպիսկոպոսը թէ ընտրածս ձեռնադրէ։ Ասոր մինչեւ հիմայ օրինակ տեսնուած չէ. վասն զի քրիստոնեայք ամէն ատեն գիտէին, եւ հիմայ ալ գիտեն, որ իրենց ընտրութիւնը ոչինչ է՝ երբ ձեռնադրող եպիսկոպոսին ընտրութեանը հետ չհամաձայնի. ըսել է որ՝ ժողովուրդին իրենց պաշտօնեայնեքը անուանելու կամ կարգելու համար իրաւունք ունենալնին՝ ինչպէս որ Պ. Մատթէոս կը կարծէ թէ ունին, ուրիշ գիտցուլ չկայ, թայց եթէ ինք եւ իր ժողովակիցները, որ հիմակուց կրօնական ժողովքը բռնադատել կուզեն որ վանցի Պօղոս վարդապետը կարգէն լուծէ. որ մըն ալ Պատրիարքը պիտի ելլին բռնադատելու՝ որ Պ. Մատթէոսը քահանայ ձեռնադրէ. միայն իրենց վկայութիւնը բաւական սեպէ, եւ անկէց անդին քննութիւն չընէ։ Ս'վ գիտէ. գուցէ Պ. Մատթէոս ալ որ մէկ դիէն անոնց կը շընթէ՝ եկեղեցական կառավարութիւնը անոնցն է ըսելով, մէկ դիէն ալ զինքը ազգային եկեղեցւոյ կանոնգրքին եւ մաշտոցին եւ բոլոր եկեղեցեաց հին եղանակին հմուտ կը ցուցընէ. այդ ժողովակին քահանայ մը ըլլալ կուզէ. եւ անոր համար ասանկ իրեն վրայ չինկած եւ իր կարողութենէն վեր բաներ հրատարակելով ինչպէս են այս եկեղեցւոյ կառավարութեան վրայ աղճատաբանածը, եւ հայց եկեղեցի եւ մեղիցի եւ ուրիշ խորագրով վիժածը, իրեն նոր կազմուած եկեղեցիին ժողովուրդը շատցընէ։

Եկեղեցի բաւը որ յաճախ գործ կածէ Պ. Մատթէոս, եւ երբեմն ալ, ինչպէս հոս, մեր բոլոր ժողովուրդը բաւերով կը բացատրէ. կրնայ խել մը պարզամիտներու քար գալթակղութեան ըլլալ. անոր համար պէտք է որ այս տեղս կերպ կերպ բաժանումներուն մէկ հատը դնեմք, որ մեր այս տեղի առաջարկութեանը կարեւոր է. թէ որ ամէնն ալ խօսէինք նէ՝ իրենց ապացոյցներովը, (որովհետեւ եկեղեցւոյ վրայ աղէկ տեղեկութիւն չունեցողներուն հետ առանց ապացոյցի չխօսուիր), բաւական ընդարձակ բան մը կըլլար։

Եկեղեցւոյ այս ըսած բաժանումնիս է, ուսուցանող եկեղեցի, եւ ուսանող եկեղեցի. եւ այս բաժանումը սուրբ գրքէն կառնուի։ Տէրն մեր առաքեալներուն ըսաւ. « գնացէք աշակերտեցէ՛ք զամենայն հեթա-
 « նոսս » (Մ. Եւ. Ի. 19). եւ թէպէտ հարութենէն ետքը քառասուն օր շարունակ առաքելոց տեսնուելով Աստուծոյ արքայութեանը վրայ, այսինքն եկեղեցւոյ վրայ կը խօսէր. անշուշտ անիկայ կազմելու

Ակեղեցւոյ կառավարութեան աշխարհականաց ձեռքն անցնելուն քանի մի գէշ հետեւանքները հոս պատմեմ. որոնք Պ. Մատթէոս ալ կրնայ դիտցած ըլլալ, անգղերէնի հմուտ ըլլալով. եւ մեր ուրիշ ընթերցողներուն ալ զիտցընել կուզեմք :

Յայտնի է որ Անգղիայի եկեղեցական կառավարութիւնը՝ բողոքականութիւնը հոն տիրած ատենէն ՚ի վեր եկեղեցականներուն ձեռքէն ելած եւ աշխարհականներուն ձեռքն անցած է. հաւատոյ եւ եկեղեցւոյ վերաբերեալ բոլոր խնդիրները քարլաճէնդը կամ պետութեան ժողովը կը քննէ եւ կը վճռէ. եւ թէպէտ այն ժողովքին մէջ եպիսկոպոսներ ալ կան, բայց իրենք սակաւթիւ են, եւ քուէնին եկեղեցական գործոց նկատմամբն անպամ աւելի արժէք չունի, եւ զատ չհամարուիր որուն հակառակը կորոշէ մեր ազգային սահմանադրութիւնը, եկեղեցականներէ եւ աշխարհականներէ բաղկացեալ խառն ժողովներուն համար կարգադրելով որ « երկու ժողովները զատ զատ քուէարկութիւն չընեն : Արք երկուքին ալ մեծագոյն մասը մի եւ նոյն որոշումն ընած » ըլլայ, խնդիրը կը լուծվի. իսկ հակառակ դիպուածի մէջ անհամաձայնութիւն կը սեպուի երկու ժողովոց մէջ, (Ազգայ, սահմանադր. յօդ. 140) : Այլ Անգղիայի քարլաճէնդին մէջ աշխարհականները բազմաթիւ ըլլալով անոնց քուէն աւելի կը բանի :

1847 թուին՝ Աորհամ անուն օթոսակալ քահանայն Անգղիայի թագուհին աւագերէց ըրաւ մէկ եկեղեցիի մը, որ Աքսէզէրի Պիլքօթըս եպիսկոպոսին իշխանութեանը տակն էր : Այս եպիսկոպոսը թէպէտ բողոքական, բայց արիասիրտ եւ խղճմտանքաւոր մարդ, առանց քննութեան ասոր այս պաշտօնը հաւատալ չուզեց եւ քննութեան առաւ. տասն եւ հինգ օր քշեց քննութիւնը, եւ վերջապէս եպիսկոպոսը խմացուց որ անոր եղած կօթանասուն հարցումներուն շատին տուած պատասխանը քրիստոնէական հաւատոյ՝ եւ անգղիական եկեղեցւոյն երեսուն եւ ինն յօդուածին մէջ պարունակուած հաւատոյ հանգանակին գէմ է : Աորհամ եկեղեցական վերին ատենի մը բողոքեց. Պիլքօթս եպիսկոպոսը այն ատենին խմացուց Աորհամի մոլորութիւնը. որ կըսէր եւ մոլորութեամբ կը պնդէր թէ մկրտութեան խորհրդով հոգեւոր վերըստին ծնունդ չըլլար. եւ մանր տղայքը մկրտութիւնով Քրիստոսի անդամ եւ Աստուծոյ որդի չեն ըլլար : Աստի այս գերագոյն եկեղեցական ատենը Պիլքօթս եպիսկոպոսին վճիռը հաստատեց. եւ Աորհամը հերետիկոս ծանոյց. որ Անգղիայի թագուհին գիմեց. վասն զի այս է Անգղիայի եկեղեցւոյ գլուխը. ինչպէս Հայաստանեայց եկեղեցւոյն գլուխն է կաթուղիկոսը, եւ հոռմայեցւոց՝ պապը. եւ յունաց՝ պատրիարքը. թէպէտ թագուհին աշխարհական ըլլալէն զատ կին ալ է :

Թագուհուհայն հրամանովը պետութեան խորհրդականներով ժողովք մը
 եղաւ . որուն մէջ միայն երեք եպիսկոպոս գտնուեցան : Ժողովը Բու-
 ճախի մէջ որոշեց որ « մկրտութեան զօրութեան վրայ եղած խըն-
 « զիրը պատուաւոր կերպով աւանկ ալ անանկ ալ կրնայ մտածուիլ . (այ-
 « սինքն՝ մկրտութիւնը հոգեւոր ծնունդ է . եւ մանր տղայք մկրտուե-
 « լով Վրիստոսի մարմնոյն անգամ եւ Աստուծոյ որդի կըլլան ըսել ալ
 « կրնայ ըլլալ , ասոնց երկուքն ալ չէ՛ ըսել ալ կրնայ ըլլալ) , եւ Պ .
 « Աորհամին վարդապետութիւնը անգղիական եկեղեցւոյ վարդապետու-
 « թեանց հակառակ չըլլալով՝ Աքսէզէրի տէր եպիսկոպոսը առանց
 « պատճառի զըսցած է Պ . Աորհամը ժողովրդապետութեան մէջ հաս-
 « տատելու » : Ահա՛ քեզի եկեղեցական կառավարութիւնը աշխարհա-
 կաններուն ձեռքը անցնելուն պտուղներուն մէկը : Ասոր վրայ համառօտ
 տեղեկութիւնն մը տուած եմք մեր Հայաստան լրագրին մէջ (1850 . օգոս-
 տոս 26) :

1858ին Ռուս անուն անկլիքան քահանայն քանի մը խոստովանու-
 թիւն լսեր էր . վրան ամբաստանութիւն եղաւ որ անկլիքան եկեղեցւոյ
 մէջ Հռոմայ եկեղեցիին սովորութիւնները խօթել կուզէ : Ռանը Բուճ-
 ճախին քննութեանն ելաւ . եւ Ռուս թէպէտ Անգղիոյ եկեղեցիին դա-
 ւանութեան 39 յօդուածներուն մէջէն կը ցուցնէր որ ինքը խոստո-
 վանութիւն լսելու իշխանութիւն ունի , մտիկ չըլլուեցաւ . քահանայն
 պաշտօնէն արգիլուեցաւ : Այս ալ պատմած եմք Արեւիկին մէջ . Հարս
 Դ . էր . 122-124 :

Խոստովանութեան վրայ որ կը խօսիմք , ուրիշ մըն ալ համառօտ
 պատմենք : Իտալիայի Աօքօ վիճակին՝ որ Վօմօ քաղաքին կից է , ժո-
 ղովուրդը եպիսկոպոսին դատապարտած մէկ քահանայն նորէն քահանա-
 յութեան ընդունեց . եւ քաղաքական ժողովը վիճակի եպիսկոպոսէն
 վրէժ առնելու համար վճռեց որ խոստովանանք ըլլալու պատուէրը չը-
 կայ սուրբ գրոց մէջ . ուստի խափանելու է : Ասոր ալ պատմութիւնը
 Արեւիկին մէջ գրած եմք (Հարս . Ե . էր . 246-249) : Ասոնք գիտնա-
 լով ի՞նչ ապահովութիւն կրնամք ունենալ եկեղեցւոյ կառավարութիւնը
 անխափ թողոր ժողովրդեան ձեռքը տալէն : Պ . Մատթէոսը գո՞նէ իր
 ժողովակին վստահութիւն ունի՞ մի որ եկեղեցւոյ կառավարութիւնը ինչ-
 պէս որ էր նէ այնպէս կը պահէ , երբ կրօնական օրինաւոր ժողովին
 դէմ ինքը ապօրինաւոր եւ սահմանադրութեան դէմ ժողով կը կազմէ :
 Ասոնցմով կը հասկըցուի որ Պ . Մատթէոս եկեղեցիի վրայ ալ անոր
 կառավարութեանը վրայ ալ , եկեղեցական ընտրելու համար ժողովըրդ-
 եան ունեցած իրաւունքին սահմանին համար ալ շատ շփոթ եւ խառնի
 խառն տեղեկութիւն ունի :

Եսոնց հաստատութեան տեղեր կը ցուցընէ ազգային եկեղեցւոյ
կանոնգիրքը եւ ազգային պատմութիւնը եւ մաշտոցին մէջ ձեռնադրու-
թեան կերպը եւ բոլոր ուրիշ եկեղեցեաց հին եղանակը : Մենք սով-
րեցանք Պ . Մատթէոսին վկայները : Ար պատմաւի որ խուլ դատաւոր մը
կայ եղեր . դիմացը առնելիքի տալիքի դատով երկու հոգի ելեր են .
Տամազան ամսոյն ալ վերջին օրերն ըլլալով դատաւորը կարծեր է թէ
չէ վկայի լուսինը տեսեր են ու վկայելու եկեր են . ըսածնին առանց
բառ մը լսելու մտիկ ընելէն ետքը հրաման կընէ որ թնդանօդ նետեն
եւ յաջորդ օրը պայտճ ըլլայ : Մեր Պ . Մատթէոսն ալ իր վկայները
այս դատաւորին հասկըցածին պէս կը հասկընայ . այն կըսէ թէ առ-
նելիքս սա մարդը չտար կոր . դատաւորը կը հետեւցընէ թէ ուրեմն
վաղը պայտճ է . թնդանօդները նետուին : Արք փարենթաղիզով տեղը
ցուցուցած վկայները ասանկ դտանք նէ՝ տեղ չցուցըցած վկայներուն
ի՞նչ հաւատարմութիւն ընեմք թէ իր ըսածը կը հաստատեն : Բայց մենք
հոս երկու դիտողութիւն ունիմք ընելու :

Հոս ալ եկեղեցւոյ կառավարութեան սահմանադրական ըլլալուն
վկայ կը բերէ , առաջ ալ բերաւ . (տե՛ս հարցումք I) . բայց վկայներուն
մէջ տարբերութիւն կայ . հոն նոյն իսկ եկեղեցւոյ հեղինակը եւ հիմ-
նադիրքը , Քրիստոս եւ առաքեալք , եւ բոլոր սրբազան հարք , եւ յա-
ռաքելոց մինչեւ ցայսօր միօրինակ պահուած աւանդութիւննիս եւ բոլոր
հացոց ներքին համոզումը եւ զգացումը եւ դատողութիւնը կար՝ հոս գը-
րածներէն զատ : Ես տեղ այս առաջուց ցուցուցած վկայները պէտք
չեն եղեր : Պատճառն ի՞նչ է . իր ըսածը ո՛րքան շատ վկայ ունենայ նէ
այնքան աւելի հաստատուելիքը չգիտե՞ր մի . այդքան մեծամեծ վկայնե-
րը ինչո՞ւ դուրս կը ձգէ . որոց մէջէն միայն Քրիստոս եւ առաքեալներ-
ը եւ բոլոր սուրբ հայրապետները՝ իրեն բաւական էին դատը վաստըկ-
ցընելու : Հայտնի է որ մէկ մը ասոնք որքան որ յիշեց ալ նէ՝ ասոնց
վկայութեանը շատ վստահութիւն չունի . անոր համար ետ ձգեր է :
Բայց մենք երբ որ կրօնական բանի մը Քրիստոս եւ առաքեալները եւ
բոլոր սուրբ հարք եւ առաքեալներէն մինչեւ ցայսօր միօրինակ պահ-
ուած աւանդութիւնները վկայ չտեսնեմքնէ չեմք ընդունիր . անոնց վը-
կայութիւնն ալ չէ՝ թէ փարենթաղիզի մէջ , եւս առաւել՝ չէ՝ թէ ը-
սածնին եւ ըսած տեղերնին անյայտ թողլով , այլ բուն իրենց խօսքե-
րովը եւ տեղովը տեսնել կուզեմք . Պ . Մատթէոսին ըսելուն վըս-
տահ չեմք :

Արկորդ դիտողութիւննիս այս է : Եսկէց առաջ նամակին մէջ ը-
սեր էր թէ « եկեղեցական կառավարութեան ուրիշ ազգի մէջ ի՞նչ ըլ-
լալը պէտք չէ՝ մեղի հոս քննել » (տե՛ս ի վեր . հարցումք , 0) : Հիմայ

Ի՞նչ է տեսեր որ քննելու ելեր է . եւ քաջը «բիշ եկեղեցեաց հին եղանակը ի-
 րեն վկայ կը բերէ մեզնի դէմ: Թէ որ կըսէ որ առաջուց խօսածը ա-
 նոնց հիմակուան գործածութեանը վրայ էր . իսկ հոս վկայ բերածը
 անոնց հին եղանակին վրայ է , ատոր ալ չեմ հաւատար որ անոնց հը-
 նութեան այնքան հմուտ ըլլայ : Առաջ պէտք է ապացուցանել որ այն
 քաջը եկեղեցիները ըսածները ամէնն ալ իրենց հին եղանակը հիմայ փոխած
 են . այն ժամանակը կրնայ անոնց հիմակուան կերպը մէկ դի ձգել եւ
 հինը պահել : Բայց աղէկ թող մտածէ՛ որ քաջը եկեղեցիները ըսաւ .
 այսինքն՝ ամէն քրիստոնեայ եկեղեցիները : Ասոր տակէն այն կելլէ որ
 ասոնք ամէնը մէկէն՝ Քրիստոսի եւ առաքեալներուն եւ ամէն սուրբ
 հայրապետներուն դրած կարգաւորութիւնը փոխեր են : Ա՞րք եղեր է
 ատիկայ Պարո՛ն հնազէտ . եւ ամէնքը մէկէ՞ն փոխեր են թէ մէկը ա-
 ռաջ փոխեր է եւ միւսները անկէց օրինակ մի առեր են . եւ ի՞նչպէս
 եղեր է որ հայաստանեայց եկեղեցին միայն պահեր է սահմանադրական
 կառավարութիւնը՝ ինչպէս որ եղած կը կարծէ . եւ ուրիշ եկեղեցիներ-
 ուն միաբանութենէն զատուեր է . եւ ի՞նչպէս եղեր է որ այդ հա-
 յաստանեայց եկեղեցին ունի կարծած սահմանադրական կառավարու-
 թիւնը միշտ հիմայ նոյն սուրբ եկեղեցւոյն հայրապետներէն եւ վար-
 դապետներէն եւ քահանայներէն՝ եւ ժողովուրդէն անգամ զխոցող չկայ .
 որովհետեւ մինչեւ հիմայ՝ ըստ քո կարծեացդ , հայերը եկեղեցական
 բուն եւ խիստ լուծին տակը կը հեծէին եւ կը տառապէին առանց
 ձայն մը հանելու , եւ չէին ըսեր որ այդ կերպ կառավարութիւնը նորե-
 լուկ բան մըն է . Քրիստոսի եւ առաքելոց եւ հայրապետաց սահմա-
 նածին դէմ է . չեմք ընդունիր : Այս է մի բոլոր ազգին ներքին զգա-
 ցումը : Այլ որովհետեւ ասիկայ չկայ՝ աղէկ ըրիր որ վկայներդ այս երկ-
 րորդ անգամ ցուցուցած ատենդ այս ազգային ներքին զգացումն ալ
 դուրս ձգեցիր . բայց պէ՛տք էր որ դրածդ տպելու չտուած մէկ մը
 կարդայիր . եւ եօթներորդ հատուածին մէջէն ալ վերցընէիր չէ՛ թէ
 միայն այս , այլ եւ Քրիստոս եւ առաքեալները եւ հայրապետները եւ
 ուրիշներն ալ՝ որոնք երկրորդ անգամի վկայներուդ կարգէն դուրս ձգեր
 ես :

Բայց խօսքերնուդ կարգը՝ Պ . Մատթէոս , մէկ ուրիշ շփոթ
 դաղափար մըն ալ կը տեսնեմ : Հրամանքդ պիտի ապացուցանէիր որ ժո-
 ղովուրդն է մէկ մարդ մը քահանայ ընողը . որպէս զի անով հաստա-
 տէիր թէ նոյն ժողովուրդը կրնայ քահանայ ըրածը քահանայութենէն ալ
 զրկել . եւ ասով՝ Ալեքանդեանցիդ եւ Պոլսեցի լատինացիներն հայ անու-
 նով պարծենցող դռնամիջեան ժողովակիդ եւ Մեղարիդ հաճելի ըլլալ :
 Այս ապացոյցներուդ կարգը կը դնես կրօնական ժողովքին ընտրու-

Թիւնը: Բայց այս երկու ընտրութիւնը իրարմէ տարբեր ըլլալը հասկընալու համար տղայքն անգամ բաւական խելք ունին: Կրօնական ժողովը արդէն առաջուց քահանայ ձեռնադրուած մարդիկ կը բաղկացընեն, ժողովական ըլլալու համար նոր ձեռնադրութիւն մը չկայ, ինչպէս որ կայ դաւաղանը ձեռքն առնելով եկեղեցւոյ մէջ ժողովօրոց քարոզ տալու կամ եպիսկոպոս ըլլալու համար, եւ ասիկայ առաջին տարբերութիւնն է: Երկրորդ տարբերութիւն մը կայ որ մէկը քահանայ ձեռնադրուի նէ անիկայ մինչեւ՝ ի մահ քահանայ է. հաւատքը ուրանայ ալ նէ քահանայութեան անեղծանելի կնիքը վըայէն չվերնար. միայն քահանայագործութենէն կը դադարի: Իսկ կրօնական ժողովքին համար ընտրուածները մինչեւ ի մահ ժողովական չեն մնար. այլ ^{ասիականորոշեան} նայելով առաջին տարիէն զատ միւս տարիները միայն երկու տարի պայմանաժամ ունին, երկու տարիէն ետքը կրօնական ժողովէն կելլեն. բայց քահանայութիւննին վըանին կը մնայ. եւ անոր յատկացեալ ամէն պաշտօնն ալ կը կատարեն:

Բայց քու գաղափարդ երիցականութեան սկզբունքով բոլորովին տողորուած է. որ աշխարհականաց ժողովքով մէջերնուն մէկը երէց կընեն. ժամանակ մը անցնելէն ետքը իրենց հաւանութիւնը ետ կառնեն երէց ընողները, եւ այն առժամանակեայ երէցը կըլլայ հասարակ մարդ: Դուռն ալ կարծեր ես որ կրօնական ժողովքի համար ընտրուած անձերուն պայմանաժամը լեյուրի եւ էլլին նէ՝ աշխարհական կըլլան: Եսոնց փոխուելուն ժամանակն է. նայէ՛ որ կրօնական ժողովքէն ելլողները առանց փիլոնի ժողովօրեան կարգը կը կանգնին եկեղեցին, եթէ առաջնոյն նման դա՞սը կը կանգնին եւ քահանայագործութիւն կընեն. այս է գրածիդ սխալը հասկընալուն ճամբան:

Քահանայները ամէնն ալ դատաւորական իշխանութիւն ունին, եւ կը բանեցընեն իրենց ժողովուրդը խոստովանցուցած ժամանակնին. սակայն եկեղեցական խնդիրները դատելու համար ամէնն ալ մէկ տեղ բերելը դժուար եւ շատ ժամանակ անգործադրելի ըլլալով թուով մարդիկ կը գտնուին անոնց մէջէն. չէ՛ թէ աշխարհականաց մէջէն. եւ կրօնական խնդիրները անոնք կը դատեն: Թէ որ ամէնն ալ այս դատաստանը ընելու իրաւունք ունին նէ՝ քու կիսներուդ հետ միաբանէ՛. ազգային ընդհանուր կամ երեսփոխանից ժողովքին խօսք հասկըցո՛ւր որ կրօնական ժողովքէն վիճակաւ այս առաջին տարիս դուրս ելլողներուն տեղը աշխարհական ընտրեն. կամ գո՛նէ կէսը կարգաւոր կէսը աշխարհական ընեն: Թէ որ ասիկայ չյաջողէ նէ՛ կը հասկընաս որ քու վարդապետութիւնդ նոր ուսում մը եւ հայոց ազգին անընդունելի բան մըն է:

Տալիք վճիռնին յանձնէ պիտի չըլլայ կըսես . այդ գիտեմք . այլ որկէ՞ց պիտի ըլլայ : Ժողովուրդին կողմէն կամ յանուն ժողովրդեան կըսես նէ աղէկ գիտե՞ս այդպէս ըլլալը : Ա՞մէն հայ քրիստոնեայ աղէկ գիտէ որ ասոնց տուած վճռոյն հիմը կանոնգրքին մէջ արձանագրուած կանոններուն վրայ հիմնեալ պիտի ըլլայ . որոնք մինակ կարգաւորներով դումարուած ժողովներուն գրածներն են . այսինքն՝ «սուրբ եկեղեցւոյն» բանն է . «սուրբ եկեղեցին» ասոնց հնազանդելէն զատ բան մը չկրնար ընել՝ թէ որ եկեղեցիէն այսինքն հաւատացելոց ժողովէն դուրս նետուիլ չուզէ նէ : Դուն կարգացողներուդ աչքը մտխիռ փռելու համար հոս ալ եկեղեցի բառը կը շփոթես . եւ ո՛ւր որ «սուրբ եկեղեցին» վրայ պիտի հասկըցուի՝ խօսքդ այդպէս կը դարձընես որ ուսուցանող եկեղեցին դուրս կը մնայ . ուսանող եկեղեցին կըլլայ օրէնսդիր , միանգամայն եւ օրինաց հպատակ : Ա՞հա՛ քու հաւատարմութիւնդ ալ այս է :

ՀԱՏՈՒԱԾ ԺԵ .

Պ . ՄԱՏԹԷՈՍ

Թէ որ քիչ մ'ալ պնդեմ , գիտեմ ասոնց ամէնուն , մոլորական , հերձուածողական , բողոքական , եւ մինչեւ անգամ հեթանոսական եւ անհաւատական կըսես . դու Նալբանդեանցի առաքելական եկեղեցւոյ սպասաւորութեան պէտքը ամէն ատեն լեցունող աստուածային երկնաւոր շնորհքին այս ինչ անձը պաշտօնի կանչելու համար ժողովուրդին տալու վկայութեանը՝ վկայութիւն բերած «ըստ վկայութեան ամենայն ժողովրդեան» խօսքին «բերած վկայութեանդ խերը տե՛ս» , եւ «ձեռնագրութեան պաշտաման մէջ բոլոր եկեղեցւոյն ընտրութիւնը էական մասըն չէ՛ որսիր» . ատենով ինձի ալ քու համախոհներէդ մէկը նոյն խիտ կտորին համար ետքէն մտած եղծմունք մըն է Մաշտոցին մէջ ըսած էր պատուաւոր ժողովի մը մէջ :

ՊԱՏԱՍԻԱՆ

Այս տեղի ըրած գուշակութեանդ խօսք չունիմ . այս անգամ՝ առտ մարգարէ չես : Բաղաամ ալ երբեմն սուտ մարգարէութիւններ կընէր . բայց մէկ անգամ մըն ալ շիտակ մարգարէութիւն ըրաւ : Բայց այս մարգարէանալդ ալ այնպէս բան մըն է որ՝ դուն քու արժանդ կը գուշակես . քու խելքդ ալ կը կտրէ որ՝ խօսածներուդ մոլորական եւ հերձուածողական անուններէն զատ բան չվայլեր : Վիչ մըն ալ տարակուսեր ես թէ արդեօք հեթանոսական եւ անհաւատական ըսել ալ կը վայլէ՞ քու մոլորութեանդ , բայց ատիկա դիւրաւ կրնայիր գտնել եւ

տարակոյսդ փարատել, երբ մտածէիր որ հրեայներն ու հեթանոսներն
 ալ Վրիստոսի սուրբ արեան արդիւնքովը իրենց կրօնական պաշտօնեայ
 եւ սպասաւոր ընելու իրաւունքն ստացան ըսելդ այդ անուններուն անար-
 ժան չեն: (Կե'ս 'ի վեր • հասարակ ժԻՎ): Աստի քիչ մ'ալ պնդելդ՝ ա-
 նօգուտ բան է, մինչեւ հիմայ պնդածներդ բաւականէն ալ աւելի կու-
 զան քու վարդապետութիւնդ այդ անուններուն արժանի ընելու:

Իսկ ետքի խօսքերուդ վրայ արդէն խօսած եմք, թէ քահանայ
 մը ընտրելու համար ժողովուրդին մասնակցութիւնը ի՞նչ է, եպիսկո-
 պոսինը եւ քահանայինը ի՞նչ է, Մաշտոցին մէջ ալ՝ ըստ ընդհանր չէ՛,
 ըստ վիստիւսի է, եւ այս վկայութիւնը ընտրութենէն այնքան տարբեր
 է՝ որ նոյն իսկ ընտրելոյն վկայութիւնն ալ որ իր խիղճը իր անձինը
 վրայ այն աստիճանին անարժան ընելու պակասութիւն մը չտեսներ,
 անոր հետ կցուած եւ մէկ խօսք եղած է. «ըստ վկայութեան անձին»
 «իւրոյ եւ ամենայն ժողովրդեան», կըսէ: Այլբանդեանը եւ դուն՝ այս
 վկայութիւնը ընտրութիւն համարելով, ընտրողը ամենուն ալ տէրն է
 կըսէք. եւ քահանայութիւնը ամենուն ալ կուտար: Այստեղ բառէն
 ասանկ իմաստ մը չեւելուն համար՝ այդ վկայութեան խեղճը տես դուն
 ալ, «Այլբանդեանցն ալ, ուրիշ համախոհներդ ալ»:

Իայց թէ հասարակներու մէկը քեզի ըսերէ եղեր որ այս կտորը եւ
 քեզի ըսած խօսքս մըն է մաշտոցին մէջ, ի՞նչպէս կուզես որ հաւատամք քե-
 զի, որ գրքի անուն եւ տեղ ցուցուցածներովդ ալ սուտ ինկար, ինչպէս
 վերի փարենթազիզները բացինք նէ տեսանք: Սակայն ըսենք թէ այդ-
 պէս ըլլայ. ի՞նչ կեւլէ ատկէց. եւ երբ անոր այն ատեն խօսածը բու-
 կին փափուկ կրօնասիրութեանդ եւ մաշտոցի-իւր-իւրեանդ դպաւ նէ՝ ինչո՞ւ
 այն ատենը անոր հակառակ բան մը չգրեցիր եւ չտպեցիր Մ եղուիդ մէջ.
 որ դոնէ ասիկայ խօսուած այն պատուաւոր ժողովին մէջ գտնուող մար-
 դոց միտքը բժշկուէր. եւ թէ որ ես՝ «Այլբանդեանցիդ դէմ բան
 չգրէի նէ, այդ իմ համախոհս խօսքը ծածկեալ պիտի մնար, եւ անով
 (որ լոկ քննաբանական խօսք մըն է, հաւատքի ամենեւին դպչելիք չունի),
 շատ մարդիկ սարսափելի մոլորութեան վիճը ձգած պիտի ըլլար: Կու
 ալ դիտես, (որովհետեւ ուրիշ եկեղեցիներուն անգամ հին եղանակները
 զիտնալ կը պարծիս եւ քեզի վկայ կը բերես), որ մեր ազգին մէջ սուրբ
 Ղուսաւորչի ժամանակէն 'ի վեր քահանայական ձեռնադրութիւն կայ.
 եւ անոր որդիքը եւ թողութիւնը եւ անոնցմէ ետքը ուրիշներ ալ կան թէ՛
 մեր եւ թէ՛ օտար ազգէն, մինչեւ Յովհան որոտնեցին եւ Վրիդոր
 տաթեւացին, որ չորեքտասաներորդ դարուն մէջն են: Ասոնց անունը
 մաշտոցին մէջ երբէ՞ն է կը կարծես. Ղուսաւորչին ժամանակէն է թէ
 սուրբ Թարգմանիչները մի դրին, սուրբ Արքայի շնորհալի՞ն դրաւ՝ թէ

նոյն իսկ Վրիգոր տաթեւացի^օն մի դրաւ . որկէց ետքը ձեռնադրու-
 թեան մաշտոցի կարգաւորութեան ձեռք զսրնող չեմք զիտեր . եւ խել-
 քըդ կը վկայէ^օ որ Վրիգոր տաթեւացին այս խօսքը դնէ մաշտոցին մէջ .
 « աշակերտի^օ սրբոյն : Յովհաննու որոտնեցւոյ եւ սրբոյն Վրիգորի տա-
 թեւացւոյ » : Այս փաստը ահաւոր զէնքի մը պէս ձեռքդ ա՛ռ , գնա՛ այն
 իմ համախոհիս հետ մաքառէ՛ . հաստատէ՛ սա մարդուն որ մաշտոցին մէջ
 ետքէն ձեռք մտած չէ՛ . եւ խրատէ՛ որ մէկ մըն ալ այնպէս բաներ չը
 խօսի :

ՀԱՏՈՒՄԺ ԺԶ .

Պ . ՄԱՏԹԷՈՍ

Պիտեմ . թէ որ Վրիգորի , Ներսէսի , Սահակայ եւ այլոց , թէ մինչեւ ցայ-
 սօր եւ թէ այսօրուան օրս ունեցած վերին եւ ստորին ամէն եկեղե-
 ցականներնուս ընտրութիւններն ալ մէջ բերելու ըլլամ , հիներուն պատ-
 մութեանը սուտ , եւ նորերուն անխաւեր է պիտի ըսես :

Նոյնպէս թէ որ կանոնգրքէն եւ հայրապետներէն « առանց վկայութեան
 ժողովուրդեան եւ առանց քննութեանց մի՛ ոք ձեռնադրեսցի » եւ այլն
 խօսքերը եւ անոնց դրուածներէն ուրիշ քացատրութիւններ եւ հաստա-
 տութիւններ մէջ բերելու ըլլամ , դարձեալ էական պայման չէ ըսելով բան
 մըն ալ անոնց պիտի ըսես :

Բայց ես մաշտոցին եւ եկեղեցւոյ ամէն բաներու ալ աղբիւր եղող
 տեղէ վկայութիւն պիտի բերեմ . թէ որ անոնց ալ չհամոզուիս եւ անոնց
 ալ մէջ մէկ բան ըսես , ինձի ալ կը մնայ ա՛լ քեզի ի՛նչ ըսելիքս ըսել :

ՊԱՏԱՍԻԱՆ

Ինչպէս որ ասկէց առաջ ըսած եմք , (հաստատ . ԺԴ .) եկեղե-
 ցին երկու կերպ կիմացուի , եւ մեր Պ . Մ տաթէոսը այս երկու կերպը
 իրար խառնելով՝ իր դրութեանը վկայներ կերեւակայէ : Աւ ասկէց զատ .
 եպիսկոպոսներուն ընտրութեանը ատեն մը ժողովուրդն ալ վկայութիւն
 կուտար . բայց երբ ետքերը ասկէց անպատեհ բաներ ծագելու սկսան
 նէ՛ . Աւտղիկեայ ժողովքը որ մեր Հայաստանեայց եկեղեցին անոր կա-
 նոններն ալ ընդունած է , կարգադրեց որ անկէց ետքը մէկ քաղաքի մը
 եպիսկոպոս պէտք ըլլայ նէ՛ ընտրողներն ըլլան՝ գաւառին մետրապո-
 լիտը եւ նոյն գաւառին մէջ գտնուած ուրիշ եպիսկոպոսները . եւ այս է
 ժողովքին խօսքը : « Այսան եպիսկոպոսաց . զի կամօք եւ ընտրու-
 « թեամք՝ որ մայրաքաղաքաց եպիսկոպոսն է . եւ որ շուրջ զնովաւ ե-
 « պիսկոպոսք են , այսպէս զոր հաստատեսցեն յաստիճան քահանայու-

օթեան, իբրև իցնն որք հաստատեցին՝ վարժ և փորձք ՚ի գիտու-
 օթիւն բանի, ՚ի հաւատս և ՚ի վարս, : (Մատթ. 23, 13, 14) :
 Այս ասկէց կը տեսնուի որ ընտրութեան տէրը եպիսկոպոսներն են եղեր .
 որ ասեմ մը հաճեր են ընտրելիին համար ժողովուրդէն ալ հարցրնելու .
 ետքը երբ որ ժամանակին պարագայները պահանջեր են նէ՝ այն իրաւանց
 հարցորդութիւնը որ արտօնութիւն մըն էր՝ ետ ասեր են : Այն իրաւամբ
 կրնան այս իրաւանցս հարցող ընել ժողովուրդը, կամ չընել . եւ ասոր
 համար է որ կրսեմ թէ ասիկայ ձեռնադրութեան էական պայման չէ՝ .
 եւ այս բանիս մէջ քու արամարանէլը՝ ՚ի Գործնոց յարասանս ճակատեցողիւն
 ըստած խարեբայ կերպին կը նմանի : Գուցէ այս ուսումնական գրուց-
 ուածքէս բան մը հասկընաս . ուստի սո՛ւ ուսմական աւակը քեզի մի-
 շեցընեմ : Քահանայ մը եպիսկոպոսի մը հարցուցեր է թէ թանով
 պատարագ կըլլայ՝ եպիսկոպոսը պատասխաներ է թէ ամենեւին չկրնար
 ըլլալ . իսկ քահանայն անոր ըսեր է . ի՞նչպէս չըլլար . եւ ըսի . եղաւ :
 Ահա այս է ՚ի Գործնոց յարասանս ճակատեցողիւն : Գուն ալ այս տխմար
 քահանային պէս՝ տեսնելով որ եպիսկոպոսներու ընտրութեան երբեմն
 ժողովուրդը մասնակից եղած են, կրսեա . ըսի . եղաւ . սրեմն ասիկայ
 խորհրդոյն էական մասն է . միշտ այնպէս հարկ է ընել :

Այս կրնար ըսել թէ ի՞նչ անպատեհութիւն կելէ ասկէց . վա-
 րըն դի հայոց պատմութեան դուն քեզ տեղեակ կը ցուցընես նէ գո՛նէ
 աշտանս պիտի գիտնաս որ ասեմ մը հայոց սուրբ Սահակ պարթեւ
 հայրապետը նախարարներուն ազգակործան խորհուրդին հանեցաւ նէ՝
 ձգելին Աթուղիկոսութեան, եւ իրարու կտուէ երեք Աթուղիկոս
 ընտրելին . Սուրմակ Արղիսեանց եպիսկոպոսը, Աբրիշայ եւ Շմուկ .
 եւ այս կարծեցեալ իրաւունքնին բանեցընելիին ազգին ո՛րքան աղաքե-
 րելա իրենք ալ հասկընալով զըջացաւ եւ եկան սրբոյն Սահակայ ոտքը
 ինկան եւ թողութիւն խնդրեցին :

Ասիկայ չդիտես նէ՝ մեր օրերը եւ մեր աչքին առաջ եղածները
 չես կրնար չգիտնալ : Այն քահանայները՝ որոց համար դու և Մելքոն
 և Միսաքին և ըստ դոնամիջեան ժողովակիկի կը գանգատիք թէ տը-
 գեա են, կոշտ են, կոպիտ են, արծաթասէր են, եւ այն . ասոնք ո-
 րո՞ւ ընտրածներն են . մէջերնին քանի՞ հատ կրնար ցուցընել որ պատ-
 րեարքը կամ քաղաքին եպիսկոպոսը ազատօրէն ընտրեր եւ ձեռնադրեր
 է : Ամեն ալ մենք քահանայ ընտրելու իրաւունք ունիմք ըսողներուն
 ընտրածներն են : Գուն ալ չես մի ըսեր որ՝ ընտրութիւնը ասանկնե-
 րուն ձեռքը ձգելին շատ աղէկ է ասնուլը եւ աղէկ եւ ըստ պատշաճի
 ընտրողներուն յանձնելը :

Այդի դէմ մէկ հարց զէնք մըն ալ դուր ևս քու կարծեցողից :

կանոններուն եւ հայրապետներուն ըսածը թէ՛ « առանց վկայութեան
 « Ժողովրդեան եւ առանց քննութեանց մի՛ որ ձեռնադրեսցի » : Մայց
 Հայր-Նի-նը եւ ընդ-Նի-նը մի եւ նոյն բանը չեն . ինչպէս որ տեսանք
 վերը (հարստած յ՝Վ) . եւ դուն՝ որովհետեւ բերած վկայութիւնդ քու
 դրութեանդ չյարմարի նէ խարդախել ալ գիտես , թէ որ այս երկու
 բաներուն զատ զատ եւ իրարմէ տարբեր նշանակութիւն ունենալը գիտ-
 նայիր , եւ իմանայիր որ եպիսկոպոսը աղէկ մը քննելէն ետքը չընտրէ
 նէ Ժողովրդեան միաբան վկայութիւնն ալ խեր չընեն , գուցէ Ժողովրդեան
 բառը առանց քննութեանց բառերէն ետքը կառնէիր . բայց հիմայ եղածն
 եղած է : Վկայութիւնը Ժողովրդէն կուզեն հայրապետները եւ կա-
 նոնները . իսկ քննութիւնը ո՞վ կընէ . թէ որ քահանայի ձեռնադրու-
 թեան կոչումին գտնուեր ես նէ տեսած կըլլաս աչքովդ՝ որ եպիսկո-
 պոսը կընէ . չես տեսած նէ՛ տեսնողներէն ստուգէ :

Մի՛ « ձեռնադրեսցի ըսելն ալ այնպէս հասկընալու չէ՛՝ որպէս
 թէ Ժողովրդենէն վկայութիւն չունենալով ձեռնադրուածը անվաւեր
 է , եւ Ժողովուրդը վկայելէն ետքը նորէն ձեռնադրուելու է , այլ ըւ-
 լալիք անպատեհ բաներուն առաջն առնելու համար դրուած խօսք մըն է՝
 որ առաւել ձեռնադրողին կը վերաբերի՝ քան թէ ձեռնադրելոյն : Ասոր
 օրինակ տամ յայտնի մէկ բան մը՝ որուն վրայ մօտերս ազգային ընդ-
 հանուր Ժողովոյն մէջ ալ խնդիր յուզուեցաւ . եւ դուն ալ հոն ներկայ
 գտնուեցար . բայց ընդդէմ գիտողութիւն մը չընելով վերջին որոշումն
 ընդունած եղար : Այսուհետեւ տարիէն աւելի է որ սուրբ Աջմիածնի Աս-
 թուղիկոսութեան եւ Աոստանդնուպօլսի պատրիարքութեան մէջ հաս-
 տատուած պայման մը կայ որ առանց Աոստանդնուպօլսի պատրիարքէն
 վկայական ունենալու մարդ եպիսկոպոս չձեռնադրուի օսմանեան տէրու-
 թեան ո՛ր եւ է քաղաքին վրայ : Ատաճառով մը այս պայմանը յիշ-
 ուեցաւ ապրիլի 4ին ընդհանուր Ժողովքին մէջ : եւ հարցունող եղաւ
 թէ՛ թէ որ մէկը այդպէս ձեռնադրուի նէ անիկա՞ ի՞նչ աստիճանի
 մարդ սեպելու է . պարզ քահանայ թէ ճշմարտապէս եպիսկոպոս : Առ-
 ղովը միաբան ըսաւ թէ ճշմարիտ եպիսկոպոս է , եւ դուն բան մը
 չըսիր ասոր դէմ : Հապա որո՞ւ կը հաւտացընես ըսելդ թէ առանց
 վկայութեան Ժողովրդեան մի՛ որ ձեռնադրեսցի ըսելը՝ ձեռնադրու-
 թիւնը ոչինչ հրատարակել է . թէ որ այս բանիս վրայ սահմանադրա-
 կանօրէն քուէ կուզէիր նէ՛ ահա՛ այն ալ նոյն օրը քեզի դէմ դտար :
 Աւ չես կրնար ըսել թէ ասոնք ուրիշ բաներ են . վասն զի երկուքին
 մէջ ալ մի՛ յեռնադրեսցի բառերը նոյն են . եւ թէ որ ուժդ այս բա-
 ռերէն կառնես նէ՛ երկուքին մէջ ալ միօրինակ իմանալու է : Այս մէկ
 տարբերութիւն մը . առանց քննութեանց բառերը քու բերած կանոնիդ մէջ .

բայց որովհետեւ քննութիւնը եպիսկոպոսին ընելու բանն է յատկապէս, այս պարագայն բերած վկայութիւնդ բոլորովին բեզի դէմ կը դարձընէ: Ա՛հա՛ բան ճշմարտանոց ըսելիքս այս է. բան մըն ալ դուն ըսէ՛:

Ըսելիք ունիս. եւ այս ալ գ. սմ. Ռ. թ. մանչ. պիտի լըծէ՞ս. ասոնք ալ տեսնենք թէ ի՞նչ են:

ՀԱՏՈՒՍԺ Ժ:

Պ. ՄԱՏԹԷՈՍ

Անձ մը սուրբ աստիճանի հասնելու համար ըստ մեր եկեղեցւոյ չորս բան կայ հարկաւոր, որ ձեռնադրելու մը վրայ անպատճառ պէտք է կատարուին: Աստուածային կոչում կամ արժանաւորութիւն. եկեղեցւոյ ամէն անդամոց կողմէն վկայութիւն կամ ընտրութիւն. ձեռնադրողաց կողմէն անաչառ քննութիւն եւ հրապարակական ձեռնադրութիւն:

Իր աստուածային կոչումը երկու կերպով կը կատարէ Աստուած՝ իր, պսիսքն եկեղեցւոյ, պաշտօնէիցը վրայ, բացարձակ եւ ըստ կարգի:

Բացարձակ կամ ուղղակի կոչմամբ կը կանչէր, կը վկայէր եւ կը խորհէր Աստուած իր պաշտօնեայնէրը, մինչ եկեղեցին կատարելապէս կազմուած կամ հաստատուած չէր. ինչպէս են Աբրահամու, Մովսէսի, մարգարէից, առաքելոց, Պօղոսի եւ այլոց կոչմունքը եւ ընտրութիւնները:

Իսկ երբ ալ եկեղեցին կատարելապէս հաստատուեցաւ եւ Աստուած զեկեղեցին ամէն արտօնութեամբ զինեց (Բ. Կորնթ. Թ. 8) բացարձակ ուղղակի կամ անմիջական ընտրութիւնը դադարեցաւ. եւ ալ միջական կերպով կամ ըստ կարգի (Ա. Կորնթ. ԺԴ. 40) կը կատարէ Աստուած այս կոչումը իր ընտրելոցը վրայ եկեղեցւոյ ամէն անդամներուն ընտրութեամբ. « ըստ վկայութեան ամենայն ժողովրդեան » եւ այս՝ եկեղեցիին կամ ժողովուրդին աստուածատուր եւ անկապտելի իրաւունքը կամ արտօնութիւնն է. ուստի եւ հետեւապէս հական մասն ընծայելու մը ձեռնադրութեանը. « զի ո՛չ եթէ որ զանձն իւր ընծայեցուցանէ՛ նա է ընտրեալ (Բ. Կորնթ. ԺԱ. 18) »: Երկու հոգւոյ մէջ զիրար ընտրելը ինքնակոչութիւն, միապետութիւն, բռնակալութիւն կը լլայ, եկեղեցիին բազմութեան կամ քուէից առաւելութեան մէջն է միայն Աստուծոյ ձայնը:

ՊԱՏԱՍԻԱՆ

Ըսեր է կամ կարգացեր է Պ. Ս. ատթէոսը՝ որ խորհուրդներուն վաւերական ըլլալուն համար չորս բան պէտք է. եւ որոնք ըլլալը մոռնալով իր եկեղեցիին հարցունելով սուրբեր է որ ասոնք են երգեր. աստուածային կոչում կամ արժանաւորութիւն. եկեղեցւոյ ամէն անդամոց կողմէն վկայութիւն կամ ընտրութիւն. ձեռնադրողաց կողմէն անաչառ քննութիւն. եւ հրապարակական ձեռնադրութիւն: Իսկ աստ-

ուածարաններուն՝ որոց կը համաձայնի հակօր պատրիարք նախան, Է-
 թէ՛ Խորհրդոց գրքին մէջ, խորհուրդը վաւերական ըլլալու համար հար-
 կաւոր սեպած չորս բանն են նիւթ. կերպ, պաշտօնեայ, գիտաւորու-
 թիւն, Լսոնց կողմէն պակասութիւն մը ըլլայ նե՛ այն ժամանակը մի-
 այն խորհուրդը պակասաւոր եւ անվաւեր կը ըլլայ Կ'նոր համար կը խը-
 րատեմք Պ. Մ առթէոսին որ՝ քանի՛ որ իրեն եկեղեցիին վկայութիւն
 նը մէջ կը բերէ, սոսկ պարզապէս մէջ ըսելով շանցնի. գրածը հայե-
 րէն տեսնելով գուցէ կարծիք ընող ըլլայ որ մէջ ըսածը Հայաստան-
 եայց սուրբ եկեղեցին է. որովհետեւ ամենն ալ իրեն ո՛վ եւ ո՛ր եկե-
 ղեցիէն ըլլալը չգիտեն. ուստի հարկ է ասանկ պարագայներու մէջ աւելի
 բացայայտ հասկըցուելու համար ըսել. մէջ գործնական, կամ ճիշտակա-
 նիկեցիէն. կամ ասոնց նման ուրիշ բառ մը:

Խօսքին մնացածը տեսնենք, Լստուած իր աստուածային կոչումը
 երկու կերպով կը կատարէ եղեր՝ եկեղեցւոյ պաշտօնեայը վրայ. Կրթա-
 նոր գրածին մէջ կը տեսնենք թէ Լստուած եր՛ այսինքն եկեղեցւոյ պաշտօ-
 նեայը վրայ այս երկատեսակ կոչումը կը կատարէ, բնապէս հարցընել
 պէտք կը ըլլայ Պարուն Մ առթէոսին թէ Լստուած ըսելով ո՞վ կը հաս-
 կընայ. Պատասխանը նոյն խօսքին մէջն է. Ժողովուրդը կը հասկընայ եղեր
 Լսել է որ Ժողովուրդը Պ. Մ առթէոսին աստուածն է եղեր. Լսելն է
 խառը մեկնակուն է. այսինքն անսնկ բառ մըն է որ իրմէ առաջ գրուած
 բառին նշանակութիւնը եւ միտքը իրմէ ետքը գրուած բառովը կը հաս-
 կըցընէ. Կը երբ կըսուի Լստուած եր այսինքն եկեղեցւոյ պաշտօնեայ-
 ները, եր բառը նոյն տարած բառին կը վերաբերի. ինչպէս որ լոկ հա-
 յերէն աշխարհարար հասկըցող ամէն մարդ կը վկայէ. ուստի ամենուն վը-
 կայութեամբը՝ Պ. Մ առթէոսը ամենաստուած եան է. Ժողովուրդը ամէնը
 մէկէն մէկ Լստուած մը կը դառանի. Կը այս հաշուով՝ որովհետեւ Ժողով-
 վուրդին մէկն ալ ես եմ, անոր աստուածներուն մէկն ալ ես եղած կը ըլլամ.
 գուցէ այս մտքովս եր որ Մեղուն սէ ինծի համար կարծեր է թէ
 գովուելէն եւ հոշակուելէն զատ՝ պաշտօնիլ սէ կուղեմ. Կը Ժողով-
 վուրդեան աստուած ըլլալը չեմ ընդունիր որ ինծի համար ալ ասոր
 ըսածը ընդունիմ. Պ. Մ առթէոսին համար ըսելը աւելի վայելուչ
 կը ըլլայ:

Ուստի երկրորդ հարցում մըն ալ կուգայ Պ. Մ առթէոսին ընե-
 լիք. Լստուած քանի՞ է. Թէ որ Ժողովուրդը բաղկացընող ամէն մէկ
 անհատ՝ մէկ մէկ աստուած պիտի կարծէ նե՛ ճիշդ համբաւքը պիտի չը-
 ցիտնայ. աշխարհիս բոլոր բնակիչներուն թիւը 750 միլիոնէն մինչեւ
 1000 միլիոն հասցնող կայ. որոց մէջ խիստ շատեր, կամ ամէնը մէկէն
 իրենց աստուած ըլլալը չգիտնալով ուրիշ աստուած կը պաշտեն, կամ

Ճշմարիտ Աստուածը, որն որ մենք ալ կը պաշտուիք, կամ սուտ եւ շին-
 ծու աստուածներ: Ամենք ալ իրենց նման մարդոյն աստուած ըլլալը
 չեն գիտեր, եւ մարդակեր են, իրարու միս կուտեն: Աւ ասոնց կար-
 գըն են անոնք ալ որ մարդ կըսպանեն՝ բայց միտը չեն ուտեր. եւ աս-
 նոնք՝ որ մարդ կը պարսաւեն, կը զրպարտեն եւ կարհամարհեն: Առա-
 ջին կարգին մէջ չէ Պ. Մատթէոսը. վասն զի չեմք կարծեր թէ իր
 անձէն եւ իր ժողովուրդէն զատ ուրիշ աստուած մը պաշտէ. եւ աս որ
 համար կը կարծեմք սարսուռ ըսած ժողովուրդը ո՛չ ամբողջ մարդկային աղ-
 զը պիտի ըլլայ, ո՛չ քրիստոնէից բաղմութիւնը, ո՛չ առանձին հայոց
 ազգը. ալ միայն դոնամիջեան ժողովակին ժողովուրդը, որոց համ-
 բանքը կրնայ գիտնալ: Այլ չկրնար ըլլալ որ թէ՛ այդ եւ թէ՛ ուրիշ ո՛ր
 եւ իցէ ժողովուրդ՝ ամենը մէկէն մէկ աստուած ընէ. այն ատենն ժո-
 ղովուրդեան մէջի հակառակութիւնը որ անպակաս են՝ տեսնելով, հարկ
 պիտի ըլլայ ըսել իրեն՝ թէ իր աստուծոյն մէկ անդամը մէկալ անդա-
 մոյն հակառակ է. վասն զի այս հակառակութիւնը աշխարհի սկիզբէն
 ՚ի վեր ըլլալով մինչեւ, հիմայ այդ աստուածը ոչ ընչանալու էր:

Վուցէ ոմանց այնպէս կարծուի որ այդ կերպ գաւանութիւն ու-
 նեցող մարդ չկրնար ըլլալ, ասոր համար մենք ալ անհիմն ենթադրու-
 թեան վրայ խօսք կերկրնցընեմք: Բայց այնպէս չէ՛. իրենք զիրենք
 աստուածութեան մասն կարծողները աշխարհքի մէջ նոր չին. առաջին՝
 հնդիկներն են. եւ ասոնցմէ ելած է կէս հնդիկ կէս տաճիկ կարգի մը
 մարդոց քաջածանօթ հայհոյութիւնը, որ կըսեն թէ իրենք ալ աստ-
 ուած են. ինչպէս էին երբեմն պեդաշէ ըստուածները. որոնք հիմայ խա-
 փանեալ են: Ատքերը Ֆիլէմենկցի հրեայ մը Արիսօզա անուն՝ տասն եւ
 վեցերորդ դարուն մէջ, որ ատեն լուտերի շնորհիւր ամէն որ ամէն տեղ մէկ
 մէկ նոր աղանդ կը բուսնէին թունաւոր սունկի (մանթարի) պէս, հնդիկ-
 ներուն եւ պէքդաշիներուն աղանդը Աւրոպա խօթեց. չէ թէ միայն
 ժողովուրդը աստուած կամ Աստուծոյ մասն ընելով, այլ բոլոր արա-
 բածները. վասն զի ասիկայ քարն ալ՝ ծառն ալ՝ ջուրն ալ՝ մարդն ալ՝ գա-
 ղաններն ալ՝ եւ ամէն բան՝ աստուածութեան մասն կըսէր: Արկայ գա-
 րուս մէջ Վաղղիա եւ Անգղիա, բայց առաւելապէս Վերմանիա այս
 աղանդը շատ տարածուած է. եւ Ա իբթոր Վուզէն անուանի գաղ-
 ղիացիին գրքերէն առնելով շատ հեղինակներ կը ցուցընեն որ ասիկայ
 ալ Արիսօզայի հետեւողներէն է. Պ. Մատթէոսը գաղղիներէն գիտէ.
 անգղիներէն գիտէ. դատումն ալ անանկ սուր է որ՝ իր խօսածներն ան-
 գամ չկրնալ հասկընալուն նշաններ կը ցուցընէ իր գրածներուն մէջ.
 որոց օրինակը ներկայ հաստուածիս մէջ ալ պիտի տեսնուիք. ի՞նչ ան-
 հաստալի բան կայ երբ ըսենք թէ Արիսօզայի դրութիւնը իր խելքին

յարմար է եկեր . կամ մանաւանդ՝ իրեն ամբարտաւանութիւնը՝ գոհ ընելու գրութիւն մը ասիկայ է գտեր եւ ասոր է հետեւեր : Այլ իրաւունք չունի՞մք մի որ ինք զինքը Աստուծոյ տեղ դնող մէկը՝ մենք ալ խենդի տեղ դնելով պատասխան տալ չուզէինք : Բայց բարձրագոյն հրաման է ստիպուելով սկսած պատասխաննիս շարունակեմք :

Առաջ կըսէ . թէ աստուծոյն հաշմ եւ արժանաւորութիւն մէկ են . վասն զի՝ ինչպէս որ ուրիշ տեղ ալ ըսած եմք , կամ բառը այն կը ցուցընէ որ մի եւնոյն բանը այն շաղկապով կապուած երկու բառերովն ալ կը հասկըցուի : Այսպէս երբ քանի մը անգամ ըսաւ , եւ հոս ալ կըսէ՝ վկայութիւն կամ ընտրութիւն , կը հասկընամք որ այս երկու բառը իր մտքին մի եւ նոյն գաղափարը կուտան : Հոս ալ ՚ի հարկէ աստուծոյն հաշմ եւ արժանաւորութիւն բառերը կամ բառով կապելով՝ այս երկու բառով մի եւ նոյն գաղափար ունեցած պիտի ըլլայ միտքը : Աստի ինչպէս որ ինքը՝ ընտրութիւնն ու վկայութիւնը մէկ բան կարծելով՝ ժողովրդեան ընտրութեան իրաւունք ունենալը ցուցընելու համար ըստ վկայութեան բառերով գտած խօսքերը մէջ բերելովը մեզի իրաւունք տուեր է ըսելու որ այդպէս կամ բառով կապուած բառերուն մէկը մէկալին տեղ գործ կածուին . մենք ալ այս իրաւունքը գործածելով իր խօսքին մէկ կտորը դարձընեմք : « Իր արժանաւորութիւնը երկու կերպով կը կատարէ Աստուած , իր՝ այսինքն՝ եկեղեցւոյ պաշտօնէիցը վրայ . բացարձակ եւ ըստ կարգի » : Ի՞նչ հասկընամք Աստուծոյ արժանաւորութիւն ըսելով . ի՞նչ հասկընամք այս արժանաւորութիւնը պաշտօնէից վրայ կատարել ըսելով : Եւ ի՞նչ հասկընամք բացարձակ արժանաւորութիւն կամ ըստ կարգի արժանաւորութիւն ըսելով : Այն որ ասոնք երկուքը , աստուածային կոչումն ու արժանաւորութիւնը մի եւ նոյն բան են նէ՝ այս ըրած հարցումներս իրաւացի են . եւ բացատրութեան կը կարօտին : Այն որ իրարմէ տարբեր բաներ են նէ՝ երեք բան կը մնայ Պ . Սատթէոսին առաջարկելու . որոց մէկը հարկաւ ընդունելու է : Կամ աստուծոյն կոչումը աւելի է . կամ արժանաւորութիւնը եւ կամ ձեռնադրութեան հարկաւոր սեպած բաները շորս չեն , հիսօգ են . վասն զի առաջին սեպածին մէջ երկու հատ գտանք : Առաջինն ու երկրորդը չկրնար ըսել չէ՝ նէ իրեն հզօր ապաւէն բռնած վկայութիւնը , իր անձնապահ խարխուր (ճան գուրթարան տէմիրին) մէջ կը խաղայ . վասն զի այս է այն վկայութեան ամբողջ խօսքը . « աստուծոյն եւ « երկնաւոր շնորհ՝ որ միշտ ընու զպէտս սրբոյ սպասաւորութեան առ « ոսքեւական եկեղեցւոյ , հոն զԼ . Ս . սարկաւագս ՚ի քահանայութիւն , « ըստ վկայութեան անձին իւրոյ եւ ամենայն ժողովրդեան » : Ժողովուրդն ալ պիտի ըսէ . արժանի է : Ահա՛ աստուածային կոչում զատ ,

ընծայելոյն անձնական արժանաւորութիւնը զատ, որուն ժողովուրդն ալ կը վկայէ թէ արժանի է: Եւ ասոնց երկուքը մէկ սեպելու համար՝ Լստուած եւ ժողովուրդը մի եւ նոյն բան սեպելու է. այն ալ ըրաւ Պ. Մատթէոս. բայց քաջարձակ արժանաւորութիւնն ու ըստ կարգի արժանաւորութիւնը ի՞նչ ըլլալը իրմէն սովորելու կարօտ եւք: Ի՞նչ եւ իցէ. մենք Լստուածոյ բացարձակ կոչումը եւ ըստ կարգի կոչումը իրարմէ ինչով տարբերելնին տեսնենք:

Բացարձակ կոչում կրսէ այն՝ որ Լստուած իր պաշտօնեայնները կը նտրէր եւ կը խրկէր, մինչ եկեղեցին կատարեալ կազմուած կամ հաստատուած չէր. եւ այս կերպ կոչուածներն են եղեր Լււրահամ. Մովսէս. մարգարէները առաքեալները. Պօղոս եւ ուրիշները: Նախապէս թողութիւն կը խնդրեմք մեր Պ. Մատթէոսէն. որ իրեն իւրեք հոգիեր գնելուն տեղ մենք իւրեք գրինք. վասն զի իրեն կարծեօքը այս երկու բառերը մէկ ըսելեն. եւ մէկին տեղը միւսը գնելովս ապօրինաւոր բան մը ըրած չեմ ըլլար: Մէկ մըն ալ որ՝ Լստուած իր պաշտօնեայնները իւրեք հոգիեր զրուցուածքը մեզի խորթ եւ անսովոր երեւցաւ անոր համար այս փոփոխութիւնը ըրինք:

Բայց իրք կրսէ թէ այն ըսածներուն ժամանակը որ աստուածային բացարձակ կոչումով ընտրուած են, եկեղեցին տակաւին կազմուած եւ հաստատուած չէր, էկեղեցի ըսելով ի՞նչ կիմանայ, հրէական եկեղեցին թէ քրիստոնէականը: Մենք ըսածը երկուքին համար ալ սուտ կը գտնեմք: Հրէից եկեղեցին կազմուելու սկսաւ Սինայ լեռան տակը, երբ եգիպտոսի գերութենէն յիսուն օր ետքը օրինաց տախտակները տրուեցան իսրայելացւոց, եւ զոհերու եւ տօներու համար կարգադրութիւններ եւ օրէնքներ տրուեցան. եւ տապանակ ուխտին՝ եւ անոր դրուելու տեղ վկայութեան խորանը շինուեցաւ՝ որ հրէից կրօնական պաշտաման տեղ եղաւ: Եւ ետքը հաստատուեցաւ, երբ որ մասնաւոր նշանով Լհարոնի ցեղին յատկացաւ ծայրագոյն քահանայապետութիւնը. վասն զի Լստուած ըսաւ Լհարոնի. «դու եւ որդիք «քոյ եւ տուն նահապետութեան քոյ ընդ քեզ առնուցուք զմեզս սըրբութեանցն. (այսինքն՝ սրբազան իրաց պաշտօնը, երբ որ զանց ընեն նէ մեզք գործած ըլլալու պայմանով). եւ դու եւ որդիք քոյ «առնուցուք զմեզս քահանայութեան ձերոյ, Եւ զեւտսցիները այս քահանայապետական ցեղին սպասաւորութեանը յատկացրնելէն ետքը կրսէ. «եւ դու եւ որդիք քոյ ընդ քեզ պահեսջիք զքահանայութիւն «ձեր ըստ ամենայն պայմանի սեղանոյն. . եւ պաշտեսջիք զպաշտօն քահանայութեան ձերոյ. եւ այլազգին որ մերձենայցէ՝ մեզի» (Թիմ. 1-7): Եւ Լհարոն մեռնելէն ետքը անոր անդրանիկ տղան. ան-

կէց ետքը անոր անդրանիկը շարունակեցին յաջորդաբար: Ասոնց կարգը յաջորդութեամբ ըլլալով մեծէ՛ ՚ի մեծ նոր ընտրութիւն չէր ուզեր, ուստի ասոնց մէջ, այսինքն Ահարոնի ցեղին քահանայապետ ըլլալուն մէջ ո՛չ բացարձակ եւ ո՛չ ըստ կարգի կոչում չեմք տեսներ, ինչպէս որ Պ. Մատթէոս կը կարծէ. այլ լոկ յաջորդական ժառանգութիւն մը: Այս ըսածներէս զատ ի՞նչ նշան կուզէ Պ. Մատթէոս՝ որ հրէական եկեղեցին կազմուած եւ հաստատուած ըլլալը ճանչնայ:

Իայց ինքը իւր խոշոր իմաստութիւնովը կարծեր է թէ մարգարէները հրէական եկեղեցւոյ մէջ կարգաւորեալ պաշտօնեայններ են: Իայց այնպէս չէ՛, հրէական եկեղեցւոյ պաշտօնեայ՝ Ղեւեայ ցեղէն զատ մարդ չէր կրնար ըլլալ. թէ որ ուրիշ ցեղէ մէկը այս պաշտօնին մէջ մտնելու յանդգներ նէ՛ Մատուած անոր վճիռը արդէն տուած էր. անիկայ մահապարտ էր. « եւ այլապիսի որ մերձենայցէ՛ մեռցի », ըսաւ: Մատուած երբ որ իր ժողովրդեանը կամ մեղքին համար մէկ պատիժ մը պիտի սպառնար, կամ ուրիշ աւետիս մը պիտի մատուցանէր, կամ գէշութենէ պիտի զգուշացընէր. այն ատենը յատուկ մարդիկ կը խըրկէր անոնց, որոնց անձն ալ ինք կրնարէր. ըսելիքնին ալ ինք կը թելադրէր. բայց իսրայէլացիները ասոնք ո՛չ երբէք իրենց կրօնից պաշտօնեայ ճանչցան, թէպէտ եւ Մատուծոյ կողմէն խրկուած պատգամարեր կը ճանաչէին: Այլ Պ. Մատթէոս որկէ՞ց աւեր է ասոնք հրէական եկեղեցւոյ պաշտօնեայ ըսելը. հրէից եկեղեցիին պաշտօնեայնները ինքը հրեայներէն աղէ՛կ դիտէ արդեօք:

Իանք բացարձակ կոչումով առնուած միւս պաշտօնեայններուն: Առաքեալները եկեղեցւոյ կազմութենէն եւ հաստատութենէն առաջ կանչուեցան. վասն զի ասոնք քրիստոնէական եկեղեցւոյ զլխաւոր մասը պիտի կազմեցանէին: Իայց սուրբն Պօղոս առաքեալ ասոնց մէջ ի՞նչ բան ունի: Արդէն հողւոյն սրբոյ գալստեան օրէն կազմուած էր քրիստոնէական եկեղեցին. առաքեալները կային իբրեւ ուսուցանող եկեղեցի: Այլ նոյն օրը մկրտած քրիստոնէայններնին ալ՝ որ մեծ բազմութիւն էին այն ժամանակին նկատմամբ. որովհետեւ երեք հազար հոգի մէկ մը, հինգ հազար հոգի մէկ մը մկրտուեցան. ուսանող եկեղեցին կը կազմէր: Այկեղեցւոյ մէջ կառավարութեան կարգ մըն ալ կար՝ որուն դէմ յանցաւորը կը պատժուէր, ինչպէս եղան Անանիա եւ Վափիրա, որ իրենց ինչքերը ծախելով եւ ստակ ընելով բերին հաւասար հաւատացելոց սնուկը գրին. բայց մէկ մասը իրենց համար պահելով երբ սուս խօսեցան սրբոյն Պետրոսի առաջը ծախածներնուն գինը միայն այնքան եղած ցուցընելով, սուս խօսելուն համար պատժուեցան յանկարծահաս մահուամբ: Վիչ մը ետքը դանդաղ լսելով թէ հասարակաց

ընչից մատակարարու թեան մէջ յունաց ազգէն քրիստոնեայ եղող այրի-
ները բաժանողներուն անհոգութիւնովը զրկանք կը կրին, եօթն հոգի
ընտրեցին սարկաւազութեան որ անոնց վերակացութիւնը օրինաւոր կեր-
պով եւ արդարութեամբ ըլլայ: Արքայն Ստեփաննոսի եւ ընկերացն ընտ-
րութիւնը Պ. Մատթէոսը ըստ կարգի եղած կը ցուցընէ. այսինքն՝
բացարձակ կամ ուղղակի կոչմամբ չեղած: Այլ որովհետեւ այս ըստ
կարգի կոչման ժամանակ կը յատկացընէ. այսինքն՝ երբ Աստուած իւր
եկեղեցին ամէն արտօնութեամբ զինեց, եւ եկեղեցին ալ կատարելա-
պէս հաստատուեցաւ, ըսել կըլլայ որ արդէն սրբոյն Ստեփաննոսի եւ
ընկերներուն ընտրուած ժամանակը եկեղեցին հաստատուած եւ զինուո-
րած էր. (Թէպէտ արտօնութեամբ զինելը ինչ ըսել է՝ աղէկ մը հաս-
կըցած չեմ ո՛չ այս բառերով, եւ ո՛չ քովը նշանակուած եւ փարեն-
թագիզով ծածկուած վկայութիւնովը): Սակայն Պօղոս առաքելոյն կոչ-
ուիլը ո՛րն որ հասկընամք նէ՝ սրբոյն Ստեփաննոսի սարկաւազ ըլլալէն
ալ ետք է՝ քարկոծուելէն ալ եւ սրբոյն Պօղոսի քրիստոնեայ ըլլա-
լէն ետքը սարկաւազ եղաւ սուրբն Ստեփաննոս: Ար հակառակոր-
դին տարօինակ իմաստութենէն ամէն կերպ խելքէ դուրս բաներ
խօսիլը յուսալի է:

Արքայն Պօղոսի ո՛ր կոչումն է հոս նշանակածը՝ շատ յայտնի չէ՝
վասն զի երկու անգամ կոչուեցաւ. մէկ մը քահանայապետներուն նա-
մակովը՝ գտած քրիստոնեայները բռնելու եւ կապելու եւ Արուստակ
տանելու համար մինչեւ Պամակոս խրկուած ժամանակը. որ այն ա-
տենը քրիստոնեայ եղաւ: Արկրորդ՝ Անտիոք, երբ ըստ եկեղեցւոյն
մարգարէներ եւ վարդապետներ մէկ տեղ ժողովուած ատենը հոգին սուրբ
ըսաւ. « որոշեցէ՛ք ինձ զՆառնարաս եւ զՍաւղոս ՚ի գործ յոր կո-
չեցեալ է իմ զգոսա », (Պրք. Ժ. 2): Պամակոսի ճամբուն
վրայ եղած կոչումն ասոր չյարմարիր. վասն զի անով սուրբն Պօղոս
չէ՛ թէ եկեղեցւոյ պաշտօնեայ՝ այլ միայն անգամ եղաւ պարզապէս
մկրտուելով եւ քրիստոնէից կարգը մտնելով: Արկրորդը պիտի ըլլայ.
բայց այն ատենն ալ առաքեալները կային արդէն. մարգարէներ եւ վար-
դապետներ կենալն ալ կը վկայէ սուրբ գիրքը այս կոչումը պատմած
ատենը. « էին ոմանք յանտիւք ըստ եկեղեցւոյն », մարգարէք եւ վարդա-
պետք » (Արք. 1), եւ սուրբ առաքեալը եկեղեցւոյ կազմու-
թիւնը ասոնցմով եղած կը ցուցընէ. « նա ետ զոմանս առաքեալս, զո-
մանս մարգարէս, զոմանս . . վարդապետս ՚ի հաստատութիւն սրբոց »
(Արք. Գ. 11). ուրեմն եկեղեցւոյ կազմութենէն ետքն ալ այդ բա-
ցարձակ եւ ուղղակի կոչումը կըլլայ եղեր. որով Պ. Մատթէոսի
գրութիւնը իր խօսքովը սուտ կերէ: Ասոր պէս իմաստուն մըն ալ

տեսնուած է մի որ իր խօսքին այնպէս վկայութիւն մը բերէ, որով իր լրօածը կը սըտի :

Բայց իր խօսքովը իր գրութիւնը սուտ ելլելուն՝ տակաւին այս հատուածէս չհեռացած ուրիշ ապացոյց մըն ալ ունիմք : Այսին զի կըսէ . երբ եկեղեցին կազմուելով եւ հաստատուելով բացարձակ եւ ուղղակի կոչման հարկ եղաւ, անոր տեղը բռնեց ըստ կարգի կոչումը, եւ « կը կատարէ Կատուած այս կոչումը իր ընտրելոցը վրայ եկեղեցւոյ ամէն անդամներուն ընտրութեամբը » - ըստ վկայութեան ամենայն ժողովըրդ-եան » : Համառօտ մը սա՛ ծանուցանեմք որ, որովհետեւ Վկայութիւնը ընտրութիւն կը հասկընայ, եւ վարը մէկ վկայութիւն մը պիտի բերէ, որուն հետ պիտի չհամաձայնէին ո՞չին իւրոյ բառերը, որ վերը բերած վկայութեանը մէջ կան, անոր համար պէտք չեղածի պէս մէկ դիձգեր է : Պ . Մատթէոսը կարծուածին չափ տրխմար չէ՛. իր բանը գիտէ . իր ըսելիքին հակառակ գալու խօսքերը երբեմն կը վերցընէ ալ : Բայց բուն ըսելիքնիս այս չէ՛ր :

Հիմայ երբ եկեղեցին կազմուեցաւ եւ հաստատուեցաւ սաստառային բացարձակ իւրեւորութեամբ արժանաւորութիւնը վերցաւ . (այս որքան որ նորալուր կերեւի նէ . արժանաւորութիւնը վերնալը, Պ . Մատթէոսին գործածած բառն է հոս գրածս) . եւ անոր տեղը ըստ կարգի կոչումը յաջորդեց . այսինքն՝ եկեղեցւոյ ամէն անդամներուն ընտրութիւնը : Եւսել է որ՝ Պ . Մատթէոսեան կամ դռնամիջեան եկեղեցիին ձեռնադրութեան հարկաւոր սեպած չորս բաներուն մէկ տեսակը վերցաւ եւ միւս տեսակը մինակ մնաց նէ՛ տեսանք որ երկրորդին հետ մէկ է եղեր . այսինքն՝ ըստ կարգի կոչումը « եկեղեցւոյ ամէն անդամոց կողմէն վկայութեան կամ ընտրութեան », հետ նոյն է : Այլ այն մի՛ նայիր որ հոս կըսէ . թէ « կոչումը իր ընտրելոցը վրայ եկեղեցւոյ ամէն անդամներուն ընտրութեամբը », կը կատարէ . վասն զի երբ այս կոչումը ինչ ըլլալը իրեն հարցընեմք նէ՛ բացարձակ իւրեւորութեան զատ բան պիտի չկրնայ ցուցընել . բայց անիկայ եկեղեցւոյ հաստատուած ժամանակէն խափանեալ ենթադրուած է . իսկ կը կարգէ բառին նայինք նէ՛ նոյն իսկ քահանայական ձեռնադրութիւնը պիտի ըլլայ : Այլ ասով եկեղեցին կազմուելէն ետքը դռնամիջեաններուն կարծած չորս հարկաւոր բաներէն միայն երեքը կը մնան . մէկն է ըստ կարգի կոչում, որ է ընտրութիւնը կամ վկայութիւնը, (մի՛ մտնար որ ասոնք միացընողը ես չեմ, Պ . Մատթէոսն է) . երկրորդը ձեռնադրողաց կողմէն անաչառ քննութիւն . եւ երրորդը հրապարակաւ ձեռնադրութիւն : Արքան հետազօտես, որքան միտք հոգնեցընես, չես կրնար այս երեք համբանքը չորսի լրացընել . բայց քիչ մը շատկէկ խորհրդածելով երկուքի ալ կրնայ իջնալ : Այսին

զի ընտրութիւնը քննութիւն ենթադրելով երկուքը մէկ կըլլան . եւ ինչպէս որ առաջինը բացարձակ կոչումը վերցուելուն պէս երկրորդին հետ միացաւ , նոյնպէս երբ մտածեմք որ առանց քննութեան ընտրութիւնը ոչինչ է , եւ քննութիւնը ընտրութիւնը կրնայ աւրել թէ որ ընտրելոյն քովը պէտք եղած պայմանները չգտնուի . այս ալ կամ ընտրութիւնը բոլորովին կը ջրէ , կամ անոր հետ կը միանայ :

Այս խօսքիս մէջ երեք վկայութիւն բերած է Պ . Մատթէոսը . երկուքը փարենթազիզէ տուիի մէջ պահուած , եւ միւսը յայտնի : Մենք տուիները բանալէն առաջ յայտնի դրածը նայինք թէ ի՞նչ է . Ներած վկայութիւնը այս է . “ զի ո՛չ եթէ որ զանձն իւր ընծայեցուցանէ՛ նա է ընտրեալ ” (Ն . կրօն . յԵ . 18) . եւ այս վկայութիւնը բերելուն միտքը այն է՝ որ ընտրութիւնը եկեղեցիին կամ ժողովուրդին աստուածատուր եւ անկապտելի իրաւունքն է . եւ հետեւապէս՝ ընծայելոյ մը ձեռնադրութեան էակն մասն է ըսէ . Նայց բերած վկայութիւնը ինքնին կիսատ ըլլալով ասկէց ո՛չ այդ միտքը կը հասկըցուի , ո՛չ ատոր հակառակը : Արբ ըսուի թէ , ընտրուածը այն չէ՛ որ իր անձը կամ ինք զինքը առաջ կը նետէ , բնապէս կը հարցուի թէ հայա ո՞վ է ընտրեալը : Թէ որ սուրբ առաքեալը Պ . Մատթէոսին պէս խորհէր նէ՛ ըսելու էր . “ այլ զոր ժողովուրդն ընծայեցուցանէ ” . եւ ասանկ ըլլար նէ՛ Պ . Մատթէոս այս խօսքերը չէ՛ թէ մէլանով , այլ ոսկէջով կը գրէր , ոսկին ալ կոմս Ամմանուէլէն կառնէր : Գրեալ վկայութիւն մըն է Պ . Մատթէոսին համար որ խօսքին կէսը իր մտքին չյարմարելով ստիպուեցաւ ետ ձգել : Այլ մտածէ՛ որ խեղճը այս միջոցիս ի՞նչ նեղը ինկած էր : Նկերները կըսեն որ գրածներուն սուրբ գիրքէն վկայութիւն մը բերէ . ինք չկրնար գտնել . անոնք այս կը գրտնեն իրեն կը ցուցնեն . բայց ասիկայ իր բանին չէր գար . վասն զի ժողովրդեան վկայութիւնը (որ ընտրութեան հետ մէկ էր սեպեր) , խորհրդոյն էական մասն ըլլալուն վրայ մաշտոցէն գտած մէկ հատիկ վկայութեանը մէջ նուիրելոյն իր անձին վկայութիւնն ալ մէկ տեղ էր . որ Պողոս առաքելոյն ըսածին հետ միաբանելու համար վկայելը եւ ընդհանր իրարմէ տարբեր բան ըլլալը ճանչնալու էր . բայց ասանկ ալ ըլլար նէ՛ ըսածին վկայ չէր միար : Հարկ սեպեց հոս մաշտոցին մէջէն ըստ վկայութեան անին իւրոյ բառերը , եւ առաքելոյն խօսքէն “ յլ զի ” թէ ընծայեցուցանէ բառերը մէկ զի ձգել :

Նայց այս առաքելական խօսքը դուրս ձգել ալ նէ կըլլար , “ թէ ըսածը ժողովուրդը հասկընալով . վասն զի ինքը մէկ գիէն եկեղեցին ժողովուրդ կը հասկընայ . մէկ գիէն ալ նոյն իսկ Աստուած՝ եւ ժողովուրդը մի եւ նոյն կը կարծէ , ինչպէս որ վերը ըսինք : Նայց այս կողմ

մէն մեղադրելի չէ՛. կերելի որ ամենաստուած եան աղանդոյն մէջ նոր է տակաւին. Հիւսիսայն շատ կարգացած չէ՛. օտարազդի փիլիսոփաներուն ալ խորունկը չէ՛ հասած. ուստի իր նոր ընդունած աղանդոյն բոլոր զօրութիւնը դեռ աղէկ մը չգիտեր :

Գանք տուփերը բանալու : Առաջին տուփին մէջ Աստուած զեկեղեցին ամէն արտօնութեամբ զինելուն վկայութիւնը պիտի գտնեմք . եւ անոնք որ չեն հասկըցած, ինչպէս որ ես ալ, թէ արքանութիւնը եւ շինելը ի՞նչ հով փշեր է որ հոս եկեր իրարու քով ինկեր են, ամէնս մէկէն այս կասկածները պիտի հասկընամք : Տուփն է սա՛ փարենթազիզը . (Լ. Կրնի. Թ. 8). եւ բանալով մէջը սա խօսքը կը գտնեմք :
 « Այլ կարող է Աստուած զամենայն շնորհս առաւելուլ ՚ի ձեզ . զի յամենայնի յամենայն ժամ զամենայն բաւականութիւն ընկալեալ առաւելուլուցոք յամենայն գործս բարութեան » : Այս խօսքին մէջ արքանութիւնը եւ շինելու բառեր չգտնուելէն զատ՝ խօսքը վերէն վար եկեղեցականներու ընտրութեան կամ եկեղեցւոյ հաստատութեան հետ ընաւ յարաբերութիւն չունի : Սուրբ առաքեալը մակեդոնացիները բարի նախանձու գրգռելու համար կորնթացիները կը գովէ եղեր անոնց առաջը, որ կարօտեալ հաւատացելոց համար առատ տուրք կուտան : Այլ որովհետեւ կասկած ունէր որ այս անգամ Կորնթոս երթալուն մակեդոնացիներն ալ հետն ըլլան, իրմէ առաջ մարդ խորհեց, որպէս զի պատրաստ գրտնութիւն ձեռքերնուն եղածին չափ առատ ողորմութիւն տալու. եւ այս բանիս քաջալերելու համար Աստուծոյ անհուն առատութիւնը առաջնին կը դնէ, որ իրենց տուածէն շատ աւելի փոխարէնը կը հատուցանէ . եւ այս է մեր բանագէտ պարոնին՝ արտօնութեամբ զինելը ապացուցանելու համար ցուցուցած վկայութիւնը, որուն աշխարհաբարն է այս : « Այոց կարող է Աստուած բոլոր շնորհքները ձեզի եւելօք տալու . որ ամէն բանի մէջ ամէն ատեն բոլոր պէտք եղածնիդ առնելով ամէն բարի գործքերով առատանաք » : Սեր առաջուց չգիտցածը այս վկայութիւնով չկրնալ սովորելի միայն իրաւունք ունիմք կասկածելու որ նոյն իսկ Պ. Մատթէոսն ալ իր ըսածը չըդիտցած ըլլայ . կամ թէ արքանութեամբ շինել ըսածը՝ մէկ մարդ մը իրեն տուած ողորմութեան փոխարէնը բազմապատիկ Աստուծմէ առնել ըսել է . ո՛րն է նէ՛ տակէն անփա զրուցուածք մըն է ելելիքը :

Արկրորդ տուփը բանալք, որ է այս . (Լ. Կրնի. ԺԳ. 40) :
 Այլ ասոր մէջինն է այս : « Ամենայն ինչ ձեր պարկեշտութեամբ եւ ըստ կարգի լինիցի » : այսինքն՝ ձեր ամէն բանը պարկեշտութիւնով եւ կարգով ըլլայ : Այս խօսքս ալ միտոյն ըստ կարգի բառերուն խաթերը համար հոս մտած կերելի, խօսքը ամենեւին ընտրուելու կամ ընտրելու

հետ յարարերութիւն չունի: Ահեղիցւոյ պաշտօնեայնորուն մէջ այն ատենները երբեմն անկարգութիւններ կը լլային. զոր օրինակ՝ մէկը ժողովրդեան բան մը խօսած ատենը մէկ ուրիշը կեղծէր, ես ըսելիք ունիմ դուն լռէ՛ ըսելով առաջին քարոզչին ձայնը կտրել կուտար. երբեմն կնիկ մարդիկ ալ քարոզ տալու կեղծէին, կամ բան մը հարցընելով պատասխան կուզէին. որով քարոզիչը խօսքին թելը կը կորսնցընէր, եւ անկարգութիւններ կը լլային, սուրբ առաքեալը այս բաներս վերնալու կարեւոր հրահանգները տալէն ետքը այս խօսքով կը գոցէ ըսածները. թէ « ձեր ամէն բանը պարկեշտութիւնով եւ ըստ կարգի ըլլայ »:

Բայց Պ. Մ ատթէոս այսպէս անյարմար վկայութիւն ցուցընելով ուրիշ գէշութիւն մըն ալ կընէ. թէ որ ասոր տեղը սա վկայութիւններուն մէկը ցուցընէր. « դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին « Մեղքիսեզեղի », (Սուրբ. Նիք. 4). կամ « եւ եղեւ 'ի քահանայանալ նալ նորա ըստ կարգի աւուրցն հասանելոյ », (Սուրբ. Մ. 8). ասով ալ իր նայատակին աւելի մօտ կը հասնէր. վասն զի ասոնց մէջ ըստ կարգի բառերէն զատ՝ քահանայ եւ քահանայանալ ալ կան սուրբ առաքելոյն վերոյդրեալ խօսքը ցուցընելով՝ անիկայ բուն տեղէն գտնող կարգացողին միտքը կասկած մըն ալ կը ձգէ, որ այն բացարձակ ըսուած ասուածային կոչմանը հետ պարկեշտութիւն գէմ բաներ ալ եղած պիտի ըլլան, որ հոս ըստ կարգի ըլլալուն հետ պարկեշտութեամբ ըլլալ ալ կապուալընէ:

Այս իմաստունը որկէ՞ց կը գտնէ այս վկայութիւնները: Արծեմ ասիկայ վկայութիւն գտնելու գիւրին կերպը գտած է. Արքեմն վիճակարան նայածի պէս աւետարանը կը բանայ. աչքը կը գոցէ եւ մատը վրան կը կոխէ. մատին տակն ինկածն ամուր մը կը բռնէ աղէկ գիտնալով որ այն խօսքը իր կարծիքին հաստատութիւնն է. Արքեմն ալ իրեն հաստատել (կամ կըլլեցընել) ուզած բառը բառարանին մէջ կը բանայ. եւ ո՛ւր որ այն բառը գտնուիլը նշանակուած տեւնէնէ՛ ինքն ալ ըստ դիպաց անոնց մէկը առնելով կը նշանակէ. Այս խօսքիս մէջ երկու փարենթագիղներուն վկայութիւններուն առաջինը վիճակահան նայելու կերպով. իսկ երկրորդը բառարան նայելու կերպով գտած է, թէ որ բուն գտնողը ինքն է նէ:

Պ. Մ ատթէոսը գիտութեան յաղթանակ մը կանգնած է այս հաստուածիս վերջը. երբ իրաք ըտրող ելի՞ս հոգիի գործ՝ ինքնակոչութիւն եւ միապետութիւն եւ բռնակալութիւն կանուանէ: Հայերէն դիտացողները աւելի պատշաճ կը դատեն այս դիպուածիս հետեւեալ բառերը տալ. իրերակոչութիւն, երկապետութիւն, եւ իրաւախոհութիւն: Այս ալ հայերէնի մէջ ճարտարութեան մէկ վկայական մը ըլլայ մեր կողմէն:

Իսկ վարի ըսածը՝ թէ Տիւրքի քուէից առաւելութեան մէջն է Աստուծոյ ձայնը, առ այժմ սոսկմամբ կը մերժեմ իբրեւ հայհոյութիւն. պատճառըն որ՝ ամենաստուածեան աղանդոյն մէկ հետեւութիւնն է: Արժեքը իրաւունք ունենալու ապացոյցներս յայտնելու կարգը ետքը կուգայ: Այնինքն դէմ չես կրնար բերել « ձայն բաղմաց ձայն Աստուծոյ », խօսքը վասն զի իմ ալ չընդունածս նոյն իսկ այն խօսքն է. որուն ո՛չ ուր դըրսուած եւ ո՛չ որ տեղաց մեր ականջը հասած ըլլալը չեմ գիտեր. միայն սա գիտեմ որ ժողովուրդը աստուած է ըսողներուն բանին շատ աղէկ կուգայ ասիկայ. եւ մենք տեսանք որ Պ. Ատթէնսը այսպէս ըսաւ հատուածոյս սկիզբը:

ՀԱՏՈՒԱԾ ԵՆ .

Պ . ՄԱՏԹԷՆՍ

Քննելով բոլոր առաքելոց ժամանակը կատարուած ընտրութիւններուն մէջ երկու խիստ փառաւոր օրինակ կը գտնեմք ասոր . (Աստուծոյ ձայնը քուէից առաւելութեան կամ եկեղեցիին բաղմութեան մէջ ըլլալուն): Մէկը Մատթիայի ընտրութիւնը, եւ միւսը Սաեփաննոսի եւ ընկերացը ընտրութիւնը:

Մատթիայի ընտրութեան մասին կըսէ Ղուկաս, թէ Յուդայի տեղը մէկը ընտրել պէտք ըլլալով, այն ժամանակի բոլոր հաւատացեալ եղբարք մէկ տեղ եկան որ հարիւր քսան հոգի էին, եւ իրենց մէջէն միշտ առաքելոց հետ ըլլալով ամէն եղածներուն ականատես եւ տեղեակ մէկը ընտրելու առաջարկութիւնն եղաւ. եւ հարիւր քսանը մէկ տեղ հաւասար իրաւունքով (ըստ սահմանադրական սկզբանց)* վիճակարկութիւն կամ քուէարկութիւն ըրին, եւ մէջերնին երկու հոգի՝ այսինքն Յուստոս եւ Մատթիա հաւասար քուէ ունեցան. որ նոյնպէս (ըստ սահմանադրական սկզբանց)* դարձեալ երկուքին վրայ վիճակարկութիւն կամ քուէարկութիւն ըլլալով, մեծագոյն թիւը Մատթիային ելաւ. եւ այնպէս օրինաւորութեամբ մետասան առաքելոց կարգը սեպուեցաւ:

Յարուցեալ Պետրոս ՚ի մէջ եղբարցն՝ ասէ. եւ էր անդ բաղմութիւն անուանց իբրեւ հարիւր եւ. քսանից Արդ պարտ է յարանցս յայսցանէ՝ եկեղոցս ընդ մեզ յամենայն ժամանակի վկայ յարութեան նորա (Քրիստոսի)* ընդմեզ լինել միում ՚ի սոցանէ: Եւ կացուցին (ամենայն եղբարքն)* երկուս. զՅովսէփ՝ որում Բարսաբայն կոչէին որ անուանեցաւ Յուստոս. եւ զՄատթիա: Եւ ետուն (նոյնպէս դարձեալ ամենայն եղբարքն)* վիճակս նոցա (երկոցուն)* եւ ել վիճակն Մատթիայ, եւ համարեցաւ ընդ մետասան առաքեալսն» (Գործ. Ա . 13-26):

* Փարենթազիզները Պ. Մատթէոսին են:

Առաքելաբեւ ամէն հրեայք արդէն վիճակարկութիւնը կամ քուէարկութիւնը ինչ ըլլալը խիստ աղէկ գիտէին եւ իրենց վարդապետն ալ կառավարութեան եւ ընտրութեան այդ եղանակը աւելի աղէկ պարզած, բացատրած, սովորեցուցած ու խստիւ պատուիրած էր անոնց: (ՂԵՊ. Ժ. 2. 8: ՅԵՊ. ԺԴ. 6: ԳՊԳ. Ի. 9: Ա. Բագ. ԺԴ. 41: Ա. Բայ. ԻԴ. 5: ՆԷԷ. Ժ. 34):

Ուստի եւ նոյնպէս Ստեփաննոսի եւ վեց ընկերացը ընտրութեան համար կըսէ Ղուկաս. որ երբ հաւատացեալները բազմացան տրտունջ ըրին առաքելոց որ աւելի պաշտօնէի պէտք ունին. երկուսասան առաքելաբ ըստ Քրիստոսի տուած օրէնքին՝ բոլոր հաւատացելոց բազմութիւնը կանչեցին եւ ըստ սահմանադրական սկզբան ընտրական օրինացը, առաջարկեցին անոնց որ իրենց մէջէն եօթը հոգի ընտրեն իրենց աղաս կամօքը: Աճեմայն Բողոքոսն ալ անխտիր մէկ տեղ եկան եւ եօթը հոգի ընտրեցին (անտարակոյս քուէից առաւելութեամբ)* եւ առաքելոց մատուցին, եւ անոնք ալ աղօթք ընելով անոնց վրայ ձեռք դրին:

« Ի բազմանալ աշակերտացն եղեւ տրտունջ . . . : կոչեցին երկուսասանքն ըզբազմութիւն աշակերտացն եւ ասեն . . . : ընտրեցէք, եղբարք, վկայեալ ըստ ՚ի ձէնջ արս եօթն, լիս հոգւով սրբով եւ խմաստութեամբ . . . : Հաճոյ թուեցաւ բանն առաջի ամէնայն բազմութեանն. եւ ընտրեցին զՍտեփաննոսս. եւ այն: « Չորս կացուցեալ առաջի առաքելոցն, եւ աղօթս արարեալ եղին ՚ի վերայ նոցա զձեռսս: (ԳՊԺ. 2. 1-6):

ՊԱՏԱՍԻԱՆ

Առաքելոց բոլոր ժամանակն եղած ընտրութիւնները կը քննէ Պ. Մատթէոսը, եւ իր ուզածին պէս երկու ընտրութիւն կը գտնէ, որոնք անոր համար ինչ փառաւոր կանուանէ. ըսել ուզելով որ ուրիշ գտած ընտրութիւնները իրեն ուզածին պէս եղած չըլլալուն համար այնքան փառաւոր չէին: Ըսել է որ, երբ Արուսապէմ գտնուող առաքելները սամարացիներուն ալ աստուածային բանին քարոզութիւնը ընդունելն լսելով Պետրոս եւ Յովհաննէս սուրբ առաքելները հոն խրկելու ընտրեցին նէ՛ այնքան փառաւոր եղած չկարծեր. ինչու որ՝ ասոնք ընտրողները Սամարիայի հաւատացեալները չէին. այլ նոյն իսկ առաքելներն էին (ԳՊԺ. Բ. 14):

Բայց սրբոյն Մատթէոսի եւ սրբոյն Ստեփաննոսի եւ ընկերներուն ընտրութիւնը որքան փառաւոր ալ է նէ՛ Պ. Մատթէոսին համար ընդհակառակն է. որովհետեւ անոնք՝ ասոր խօսքին նայելով, եկեղեցին կազմուելէն եւ հաստատուելէն առաջ եղած պիտի ըլլան. ինչու որ՝ Պօղոս առաքելոյն կոչումէն առաջ էին. եւ Պօղոս առաքելոյն

* Փարենթազիզը Պ. Մատթէոսինն է:

կոչումն ալ՝ եկեղեցւոյ կազմութենէն եւ հաստատութենէն առաջ դրաւ . ուստի այս ընտրութիւնները՝ իր գրութեանը նայելով, աստուածային բացարձակ կամ ուղղակի կոչմանը վերաբերածներէն պիտի ըլլայ : Ղարձեալ նոյն գրութեան նայելով եկեղեցւոյ կազմութենէն եւ հաստատութենէն ետքը ընտրութեան հին կարգը փոխուած եւ խափանած պիտի ըլլայ . ինչո՞ւ համար հիմայ անանկ ընտրութիւն մը ինչո՞ւ փոխուած անուանելով մէջ կը բերէ եւ միշտ կը ցուցնէ . որ իրեն ասկէց առաջ ըսածին հաւատայինք նէ՝ խափանեալ եւ անգործադրելի պիտի ըսէինք : (ԳԷՍ Ի ՎԵՐ ԿԱՊԿԱՍԻՑ . ԺԼ) :

Նայց մենք այս ալ շնորհներ անոր . եւ ըսենք թէ Մատթիայի եւ եօթն սարկաւազաց ընտրութիւնները եկեղեցւոյ պաշտօնէից ընտրութիւններուն օրինակ ըլլալու են : Նայց մենք քուէից առաւելութեամբ ընտրուած պիտի գտնէինք , որ իբրեւ Մատուծոյ ձայն բըռնելով քուէից առաւելութիւնը՝ ընտրութիւնն ալ յարզի սեպէինք . եւ ո՞ր է այս ընտրութիւններուն մէջ քուէից առաւելութիւն կամ քուէ : Պ . Մատթէոս աղէկ մատակարար մըն է . նայեր է որ բերած խօսքերուն մէջ չկայ , եւ մենք պիտի ուզենք , իրենմէ գըրեր է որ մեզ գոհ ընէ : Մտով իրեն պարծանք մըն ալ կը վաստըլի իր գրածները հանողներուն առաջը . որ զինքը Ղուկաս աւետարանչի հաւաստր մէկը պիտի կարծեն , անոր գրածներուն մէջ բան աւելցընելուն համար , որով անոր պակասը լեցուցեր է գուշակողական ձիրքով : Ալ ի՞նչպէս չունենայ այս ձիրքը . որովհետեւ ինքն ալ ժողովուրդէն ըլլալով՝ իրեն ինքնահնար աստուածութենէն (որ ժողովուրդը Մատուած է ըսաւ . (ԿԱՊԿԱՍԻՑ . ԺԼ)) . ՚ի հարկէ մեծկակ բաժին մը պահած կըլլայ իրեն համար : Աղէկ ըրեր է որ իրմէ աւելցուցածները փարենթաշիղի մէջ առեր է . որով կարգացողը կիմանայ որ սուրբ գրքէն չէ՛ . եւ ազատ կը մնայ հաւատալու կամ չհաւատալու : Աւելի աղէկ կընէր որ բոլոր նամակին մէջ ո՞րքան անհիմն խօսքեր կան նէ ասէնն ալ փարենթազիղի մէջ առներ . բայց այն ատենը փարենթազիղին մէկ ծայրը նամակին խորագրին առաջին բառէն առաջ , միւս ծայրը նամակին վերջին բառէն ետքը գնելու էր :

Նայց կը հարցընեմք իրեն . ըսենք թէ այն երկու առաջին ընտրութիւնները քուէից առաւելութեամբ եղան . այն ատենէն միչեւ հիմայ Հայաստանեայց եկեղեցւոյ մեջ քուէով եկեղեցականի ընտրութիւն լըսե՞ր կամ տեսե՞ր է մի : Թէ որ այդպէս բան մը կայ նէ՝ տեղը թող ցուցնէ . որովհետեւ իր կարծիքին վկայ գտնելու համար հայոց պատմութիւնը բարակ մաղէ անցուցեր է . այդպէս բան մը կայ նէ՝ հարկաւ հրնայ գտնել : Թէ որ չկայ նէ՝ Հայաստանեայց եկեղեցին սուրբ Առ-

աւորիչէն քուէ չէ՛ սովորած եկեղեցական պաշտօնի համար . այն ալ
 ՚ի հարկէ ուրիշ քրիստոնէից քով տեսած չէր որ իր ազգին սովորեցը-
 նէր : Բսել է որ՝ Առաւորչէն առաջ քրիստոնէից մէջ այդպէս բան մը
 չկար : Աւրեմն բոլոր քրիստոնեայնեքը մէկէն ե՞րբ եւ ինչո՞ւ համար
 այդ քուէից առաւելութեամբ ընտրութիւնը խափանեցին կը կարծես .
 եւ թէ որ այնքան հին ժամանակէ ՚ի վեր խափանուած է նէ՛ դուն ի՞նչ
 հեղինակութեամբ նորոգելու կելլես : Պարոն , քեզնէ առաջ այսքան դա-
 րերու մէջ սուրբ գիրքը կարդացող չկա՞ր մի . սուրբ գիրք կարդալուն
 «Քրիստոնէի դո՞ւն մի ըսիր հայոց մէջ . կարդացողներ շաա կային անշուշտ .
 բայց քու տեսած քուէներդ հոն տեսնող չկար :

Պ . Մատթէոսը վիճակը եւ Կոնստանտինոպոլսի իրար կը շփոթէ . որով մէկ
 բանի մը վրայ վիճակ ձգելն ու Կոնստանտինոպոլսի տալը մի եւ նոյն բան կը կարծէ .
 եւ ունեցած մէծ պատրանքներուն մէկը այս է : Վրէ՛տ ձգողը ընտրու-
 թեան տէրն է . որովհետեւ իր ընտրածին անունը յայտնի կը դնէ . եւ
 կուզէ որ անիկայ ընտրուի : Ա՛յն ձգողը ձգած վիճակին տէրը չէ .
 օրինակի համար՝ մէկին վրայ «յո՛» եւ մէկին վրայ «չ» պիտի դնէ . այն ո-
 րի՛ համար է եւ «չ» որի՛ համար՝ ինքն ալ չգիտնալով . որով բուն
 ընտրութիւնը Աստուծոյ կը մնայ : Այս կերպ վիճակով ընտրութիւնը
 աղէկ գիտցած պիտի ըլլայ Պ . Մատթէոսը , որ Կոնստանտինոպոլսեան գո՛նէ
 ՚ի վերին երէս պաշտպան է . վասն զի ՚ի հարկէ այս սահմանադրութեան
 մէջ 125 յօդուածին ծանօթութիւնը կարդացած է . որ ժողովական-
 ներուն եւ խորհրդականներուն կէսին լուծվիլը վիճակով ըլլալ կըսէ մի-
 այն առաջին անգամին համար . իսկ ընտրութիւնները ամէն ատեն Կոնստանտինոպոլսի
 կըլլան : Ասոնց ինչպէս ըլլալուն ականատեսս վիշտ ալ գտնուեցաւ ինքը
 ապր . Կին ընդհանուր ժողովին մէջ : Աւստի այս երկուքը , վիճակն ու
 Կոնստանտինոպոլսի իրարու հետ շփոթելը բանը չգիտնալով չէ՛ . խարդախութիւն է .
 իր կարդացողներուն՝ վիճակի տեղ Կոնստանտինոպոլսի կըլլեցընել , եւ Աստուծոյ որոշ-
 մանը տեղ մարդկային դատման ծառայեցընել կուզէ :

Իսկ մըն ալ վկայութիւններու տեղեր կը ցուցընէ , որոց մէջէն
 պիտի սովորիմք եղեր որ առաքեալներն ու ամէն հրեայնեքը վիճակաբար-
 րեան կամ Կոնստանտինոպոլսեան Կոնստանտինոպոլսի էին . եւ իրենց վարդապետն ալ այս ե-
 ղանակը աւելի աղէկ պարզած եւ բացատրած եւ սովորեցուցած ըլլալէն
 զատ՝ խստիւ պատուիրեր ալ է որ այնպէս ընեն : Արո՞ց վարդապե-
 տը , առաքեալներո՞ւն թէ ամէն հրեայնեքուն . չէ՛ որոշած . բայց ա-
 ռաքեալներունը պիտի չըլլայ . ինչու որ՝ տեղը ցուցուցած վկայութիւն-
 ներուն կարգը նոր կտակարանէն տեղ նշանակուած չէ . մէկ մըն ալ որ՝
 թէ որ ասիկայ սովորեցուց նէ՛ ամէն հրեայնեքը խիստ աղէկ գիտէին
 ըսելուն չյարմարիր : Կարելի՛ է թէ Մովսէսի համար ըլլայ որ ամէն

հրեայներուն վարդապետն էր : Տեսնենք փարենթազիզին մէջ պահուած վկայութիւնները :

ՂԷ. Ժ. 8. Խօսքն է այս . « արկցէ Մհարոն 'ի վերայ երկուց նոխազացն վիճակս . վիճակ մի տեառն , եւ վիճակ մի արձակեւ » լոյ » : Մհարոն երկու նոխազներուն վրայ վիճակ ձգէ . մէկը Մստուծոյ , եւ մէկը թող տալու : Մսկէց Պ. Մատթէոս կիմանայ որ Մհարոն որ մինակ մէկ մարդ մըն է , Մստուծոյ զոհ ընելու կամ ազատ թող տալու նոխազը իրարմէ որոշելու համար քուէներ պիտի ձգէ . եւ քուէից աստուծոյ նայելով պիտի զոհէ կամ պիտի թողու : Ի այց կը հարցընէ մէկերէ քուէ ձգողը մինակ Մհարոն պիտի ըլլայ նէ՝ քուէները ո՞ր տեղ պիտի շատնան որ ետքը անոնք համրէ եւ առաւելութիւն գտնէ . Մհարոնի քուէտուփին մէջ քուէի ծա՞ն կար , կամ թէ մինակ ինքը շատ մը քուէ մը կը ձգէր որ քուէի առաւելութիւնը տեղի ունենայ : Մովսէս մարգարէին գրոցը մէջէն միայն այս գտած է իրեն համար վկայութիւն . բայց թէ որ Պ. Մատթէոսին հասկըցածին պէս է նէ այս վիճակարկութիւնը . այսինքն՝ թէ որ քուէարկութիւնն է նէ . անտարակոյս եմք որ ո՛չ Մովսէս , ո՛չ Մհարոն , եւ ո՛չ ո՛ եւ իցէ հրեայ կամ առաքեալ՝ այս կերպիս գործադրութիւնը չգիտէին որ մէկ մարդ մը քուէ ձգէ , եւ այն մէկ քուէէն քուէից առաւելութիւն բուսնի . ասանկ հրէշք մը՝ միայն Պ. Մատթէոսին հիւանդոտ երեւակայութիւնը կրնար ընել :

ՅԷ. ԺԿ. 6 . « Մենայն որ բնակեալ իցէ զլեռնակողմնն , 'ի Վիրաաննէ մինչեւ 'ի Մասերեփի (Թովթմայիմ , եւ զամենայն Սիդոնացիս , ե՛ս սատակեցից զնոսա յերեսաց որդւոցն իսրայէլի . բայց դու բաժանեա՛ զնոսա 'ի ժառանգութիւն իսրայէլի . որպէս պատուիրեցի « քեզ » : Վիրաաննէ մինչեւ Մասերեփի (Թովթմայիմ լերան կողմը բնակողները ամէնն ալ , ու ամէն սիդոնացիները եւ պիտի բնաջինջ ընեմ իսրայէլի որդւոցը առջեւէն . բայց դուն անոնք իսրայելացիներուն ժառանգութեան բաժնէ՛ , ինչպէս որ քեզի պատուէր տուի : Մստուծոյ խօսքիս մէջ ո՛չ քուէ կայ եւ ո՛չ վիճակ , եւ գետին բաժնելը քուէով ի՞նչպէս կը ըլլայ՝ խելքերնիս չհասնիր . իսկ վիճակաւ բաժնելը կը հասկըցուի : Ի այց այս երկու վկայութիւններն ալ եկեղեցւոյ պաշտօնեայ ընտրելու յարաբերութիւն չունին . Պ. Մատթէոս . դուն անոր վկայութիւն պիտի բերէիր , ասոնք հոս ի՞նչ բան ունին : Մեկալ վկայութիւններուն վրայ մէկիկ մէկիկ խորհրդածութիւն ընել չուզեր . բաւական է ընդհանրապէս յիշեցընելը որ՝ ինչպէս որ այս երկուքը , նմանապէս մնացածներն ալ եկեղեցւոյ պաշտօնեայ ընտրելու հետ՝ ամենեւին յարաբերութիւն չունին . ուստի մենք միայն ցուցուցած տեղերուն խօսքերը կը գրենք :

Դատ. Ի. Թ. « Եւ արդ այս բան է զոր արասցուք ընդ գա-
 « րաւ . ելցո՛ւք 'ի վերայ նորա վիճակաւ ,, ' Վարաայի ընելիքնիս այս
 է . վիճակով վրանին ելլենք . այսինքն՝ զօրաց ո՞ր խումբը գաբաացի-
 ներուն հետ պատերազմի պիտի ելլէ նէ վիճակով որոշենք :

Ե. Թատ. Ժ. Գ. 41 : « Եւ արկին վիճակս Յովնաթանու եւ
 « Սաւուղայ եւ Ժողովորդեանն . եւ ել Ժողովուրդն արտաքս . եւ ասէ
 « Սաւուղ . արկէք վիճակ ընդիս եւ ընդ Յովնաթան որդի յիմ . եւ որում
 « հանցէ տէր զվիճակն՝ մեռցի ,, Յովնաթանու եւ Սաւուղի եւ Ժողո-
 վուրդին վիճակ ձգեցին . եւ Ժողովուրդը դուրս ելաւ ու Սաւուղ ը-
 սաւ . ինծի ու Յովնաթան տղուս վիճակ ձգեցէք , եւ Լստուած վի-
 ճակը որի՛ հանէ նէ՛ մեռնի : Չգիտէին թէ յանցանքն որի՞նն է . եւ
 ի՞նչպէս կրնային Խեղձ ձգել . այլ Վիճակ ձգել կրնար ըլլալ :

Ե. Սուր. Ի. Գ. 5 : « Եւ զատոյց զնոսա ըստ վիճակին նո-
 « ցա . վասն զի էին նոքա իշխանք սրբութեանցն , եւ առաջնորդք 'ի
 « տանն տեառն ,, : Լնոնք իրենց վիճակին համեմատ որոշեց . ինչու որ
 սրբազան բաներու իշխան՝ եւ Լստուծոյ տանը մէջ առաջնորդ էին :
 Լստուած խօսքիս մէջ Վիճակ բառ մը կայ : բայց Պ . Մատթէոսին ու խե-
 լակիցներուն դժբաղդութիւն մըն է այն որ այս տեղ այս բառը Վիճակ
 չիլի . հետ ալ յարաբերութիւն չունի . միայն՝ իւրաքանչիւր մարդոց
 մարդկային ընկերութեան մէջ ունեցած աստիճանը կը ցուցընէ : Լստ
 զատած մարդերնին առաջուց սրբութեանց պաշտօնեայ եւ Լստուծոյ
 տան մէջ առաջնորդ էին . ըսել է որ՝ արդէն կրօնից պաշտօնեայէին եւ
 իրենք այս վիճակին մէջ գտնուելնուն համար հասարակ Ժողովորդեան
 հետ խառն կենալնին վայելուչ չտեսնուեցաւ , անոնցմէ զատուելնին
 պէտք եղաւ :

Նեե. Ժ. 34 : « Եւ վիճակս արկցուք վասն Ժառանգութեան
 « փայտիցն , որ երթայ քահանայիցն եւ ղեւտացւոցն ,, : Վահանայ-
 ներուն ու ղեւտացիներուն երթալու փայտերուն Ժառանգու-
 թեանը վրայ վիճակ ձգենք : Ինծի անանկ կերելի որ՝ այս վկայու-
 թիւնը ամենէն աւելի ծաղրականն է . գուցէ Պ . Մատթէոսի անանկ
 չէ՛ երեւցեր . եւ կարծեր է որ այն փայտերէն Խեղձի Խառնութեամբ փայտ
 ընտրեր են քահանայ եւ ղեւտացի ընելու համար :

Ինչպէս որ տեսար , այս վկայութիւններուն մէկն ալ Պ . Մատ-
 թէոսին ապացուցանել ուզածին չճառայեց . եւ մեկը չիլք հասկընար
 թէ , միտքը իր դրածը կարգացողները խաբել եւ աչքերնուն առաջը
 խրտուիլակ ցուցընել չէ՛ նէ՛ իր դրութեանը բնաւ մէկ կողմէն պատե-
 հութիւն չունեցող խօսքերուն տեղը նշանակելը ինչո՞ւ համար պիտի ըլլայ :

Պ . ՄԱՏԹԷՆՈՍ

Առաքելաբ, ընտրութիւնը՝ ձեռնադրութեան առաջին եւ կարեւոր մասը, եւ իրենց տիրոջմէն առած սահմանադրութիւննուն համեմատ անխտիր եկեղեցւոյ անկնայն քաղաքի հաւասարապէս իրաւունքը ըլսալուն անտարակոյս էին . անոր համար եկեղեցւոյ հաստատութեան առաջին օրէն իրենք այնպէս ըրին եւ այնպէս սորվեցուցին . ասոր ալնոր կրտակարանին մէջ գտնուած շատ վկայութիւններ կրնան բերուիլ . Տիտոսսի Տիմոթէոսի եւ այլոց բազմաց ընտրութիւններէն, եւ այս մասին տրուած պատուիրաններէն . զորս ուղէք նէ հրամանքնիդ ալ կրնաք գտնել :

ՊԱՏԱՍԻՍԱՆ

Տեսանք ասկէց առաջ թէ եկեղեցականաց ընտրութեան՝ ամենայն բազմութեան հաւատացելոց անխտիր իրաւունք ունենալուն վրայ առաքելներն ի՞նչ մտքի վրայ էին : Հոս՝ բեցած օրինակները աւելի աղէկ կապացուցանեն մեր ըսածը եւ ըսելիքը . եւ Պ . Մատթէոսին դրութիւնը ՚ի հիմանց կը խախտեն : Եւ այս վկայութիւնները Տիտոսսի եւ Տիմոթէոսի ընտրութիւններն են : Ես ալ ասոնք մէկ մը աչքէ անցընել այնքան յօժարութեամբ կուզեմ . որ մինչեւ հիմայ բռնուած վիճարանական ձեւէն յոգնած միտքերուն ըստ իմիք տարբեր եղանակով մէկ զբօսանք մը տրուած կըլլայ :

Տիտոսսի վրայ սուրբ գրոց մէջ գտածնիս այսքան է : 'Ի ծնէ հեթանոս ծնողաց զաւակ ըլլալուն համար թլիատուելու չստիպուեցաւ . "այլ եւ ո՛չ Տիտոս՝ որ ընդիս ՚ի հեթանոսաց էր , բռնադատեցաւ թըլ- " փատիլ " (Ղաղար . Բ . 3) . այլ սուրբ առաքելոյն քարոզութիւնովը քրիստոնեայ եղաւ . անոր համար առաքելը ասիկայ իրեն սիրելի որդի կանուանէ ըստ հասարակաց հասարոց (Տէր . Ը . 4) : Եւրբ օրինական խընդրոց համար սուրբն Պօղոս Երուսաղէմ գնաց, ասիկայ հետ տարաւ (Ղաղար . Բ . 1) . ետքը կորնթոս խրկեց պաղեստինու աղքատներուն համար տուրք ժողովելու իբրեւ նուիրակ (Բ . կրն . ԺԲ . 18) . որ հոն ամբժութեամբ վարուեցաւ : Կործը լմնցընելէն ետքը սուրբ առաքելոյն քովը դարձաւ (Ընդ . Բ . 6) . եւ կորնթացիներուն կամակատար հնազանդութիւնը պատմելով անոր մեծ միտքարութիւն եղաւ (Ընդ . 15) . Սէկ մըն ալ գնաց հոն առաջին գործով . (Ընդ . Բ . 6) , Եսոնց մէջ թէ որ ընտրութիւն մը կայ նէ՛ Պօղոս առաքելոյն է մինակ . վասն զի

Անբնականաբար ինքնին խրկեց անիկայ հոն : Աորընթոսի հաւատացեալները ընտրած եւ ընտրութիւններուն քուէհամարը սուրբ առաքելոյն խրկած չէին : Պաղեստինու աղքատաց համար տուրք ժողովելու պըտըտելուն հետ կցորդ էր սուրբ աւետարանի քարոզութիւնը . վասն զի երբ քանի մը հրէամիտ խտրութիւններու համար խնդիր եղաւ , Արուսաղէմի առաքելոց ժողովքը որոշեց որ Պօղոս եւ Բառնաբաս հեթանոսներուն քարոզչու երթան . ուրիշներն ալ հրեայներուն . միայն թէ՛ ո՛ւր որ երթան նէ աղքատները մտքէ չհանեն (Վարդապ. Բ. 9. 10) . եւ յայտնի է որ եկեղեցւոյ ամենայն բազմութիւնը չէր ասոնք այս պաշտօնիս յատկացընողը . սուրբ առաքեալն ալ ինչպէս որ իրեն տրուեցաւ , ինքն ալ նոյնպէս տուաւ այս պաշտօնը Տիտոսի , բնաւ կորնթացիներուն չհարցընելով :

Ասիկայ աւելի յայտնի կերեւի Տիտոսը Արեւտէ կղզւոյն եպիսկոպոս ընելէն . Վեղ Արեւտէ ձգեցի՝ կրսէ սուրբ առաքեալը անոր գրած նամակին մէջ , որպէս զի պակասին լեցունես , ծուռերնին շիտկես . եւ ամէն մէկ քաղաքին քահանայ դնես : « Ասան այնորիկ իսկ թողի զքեզ « ՚ի Արիտէ , զի որ ինչ միանգամ պակաս իցէ՝ ուղղեսցես , եւ կացուսցես քաղաքաց երիցունս , որպէս եւ ես քեզ պատուիրեցի » : (Տեո. Ե. 25) : Թէ որ քահանայ ընելու մարդիկը քաղաքացիներուն հարցընելէ՛ եւ անոնց ընտրութեանը յանձնել պէտք ըլլար նէ՛ ասիկայ յայտնի զրուցելէն զատ ուրիշ ապսպրելիք մը չունէր . բաւական էր ըսելը թէ քաղաքացւոց ընտրածը քահանայ ձեռնադրէ : Բայց սուրբ առաքեալը անանկ չընելէն զատ՝ քահանայի վրայ պէտք եղած յատկութիւնները կը ցուցընէ Տիտոսի . որով քահանայացուներուն ընտրութիւնը բոլորովին անոր կը ձգէ , քաղաքացւոց՝ բան մը չտալով :

Ատքը երբ Տիտոս իր քովը պէտք եղաւ . անոր տեղը փոխանորդ մը ձգելու էր կրետէ . սուրբ առաքեալը անոր ընտրութիւնն ալ կրետացիներուն չձգեց . ինքը պիտի խրկէր կամ Արթեմասը կամ Տիւքիկոսը . որ Տիտոս անոնց մէկը որն որ գայ նէ իր տեղը ձգէ , եւ ինքը սուրբ առաքելոյն քովն երթայ : (Տեո. Գ. 12) : Այս պատմածներնուս մէջ ո՛չ ամենայն բաղձաւորներն իրաւունք կայ , եւ ո՛չ ալ անոնց հարցընելու նշան մը . եւ չեմք գիտեր թէ Պ . Մատթէոս՝ Տիտոսի ընտրութեան ո՞ր պարագայէն իրեն նպաստ գտնել կը յուսայ :

Տիմոթէոսի վրայ աւելի շատկէկ տեղեկութիւն կուտայ սուրբ գիրքը . բայց մենք որքան որ մեր նպատակին եւ Պ . Մատթէոսին խօսածներուն ստոյգ կամ սուտ ըլլալը ցուցընելու բաւական է նէ՛ այնքանը քաղեմք՝ Ասիկայ Յիկոնիոն գաւառէն էր . մայրը հրեայ . բայց հայրը հեթանոս ըլլալուն համար տղան ալ թշխատուած չըլլալը բոլոր

այն տեղի հրեայները գիտէին . եւ որովհետեւ այն կողմերուն հաւատացեալները առ հասարակ ասոր վարուցը եւ բարուցը համար աղէկ վկայութիւն կուտային , սուրբ Պօղոս իր քովն առաւ . բայց առաջ հրեայներէն քրիստոնեայ եղողներուն գայթակղութիւն չտալու համար թըլփատել տուաւ : Մեր Պ. Մատթէոսը՝ որ իր բանին անանկ ձեռք տալուն համար միտքը դրեր է իր կարգացողներուն կըլլեցընելու որ վկայութիւն եւ ընտրութիւն մէկ բան ըսել են , Տիմոթէոսի համար շատերուն վկայելը կարգալով գործոց մէջ (Գործք. Ժ. Գ. 2) . ուրախութենէն ծափ կը զարնէ . նայեցէ՛ք կըսէ . Վիտորայի եւ Տիկոնացի եղբայները Տիմոթէոսը ընտրեցր են : Մէկն ալ չհարցընէր իրեն թէ ի՞նչ բանի : Ակայութիւնը առնելէն ետքը սուրբ Պօղոս Տիմոթէոսը քովն առաւ իբրեւ փոքրաւոր . բայց առաքեալի մը քով փոքրաւոր ըլլալը եկեղեցական աստիճան չէ՛ . եւ (անկարելի ենթադրութեամբ) վկայութիւնը ընտրութիւն ըսել ըլլայ ալ նէ՛ Տիմոթէոսի համար տուած աղէկ վկայութիւննին անիկայ քահանայութեան կամ եպիսկոպոսութեան ընտրել չէր :

Քահանայ եւ եպիսկոպոս ձեռնադրուիլը երբ ըլլալը սուրբ գրոց մէջ նշանակուած չէ՛ . ուստի ընտրութիւնը ի՞նչ կերպով ըլլալուն վրայ գրաւոր տեղեկութիւն մը չկայ : Այսքանս գիտեմք որ Ափեսոսի եպիսկոպոս ըլլալը Ափեսացի հաւատացեալներուն ընտրութեամբը չէր . վարն զի սուրբ առաքեալը ասիկայ Ափեսոսի եպիսկոպոսութեան համար հոն ձգած ժամանակէն ետքը՝ նամակ խրկելով կըսէ . « պատուէր տա՛ « ջիր զայդ եւ ուսուցանիջի՛ր , զի մի՛ ոք զքո՛ մանկութիւնդ արհամարհիցէ » (Ա. Տիմոթ. Գ. 11) : Թէ որ Ափեսոսի ժողովուրդը ասիկայ ընտրած ըլլար նէ՛ ի հարկէ մանկական հասակն ալ կը անսնէր . եւ այն հասակին մէջ անիկայ ընտրելէն եւ անոր իբրեւ իրենց հոգեւոր հովուի հնազանդութիւն խոստանալէն ետքը սրբոյն Պօղոսի պատճառ մը չէր մնար կասկած ընելու թէ անոր տղայութիւնը կարհամա հեն : Այսպիսի խրատ անանկ մարդոց կը տրուի՝ որ իրենց բարքը երբ բնաւորութիւնը գիտցող չգտնուած տեղեր կերթան :

Տեսանք որ ո՛չ Տիտոսի եւ ո՛չ Տիմոթէոսի ընտրութիւնները Պ. Մատթէոսին գրութեանը համեմատ չեն : Այլ թէ որ համեմատ էին , կամ գոնէ քաջ քըշուքով մօտեցընելու մէկ կէտ մը տեսած էր նէ՛ ի՞նչու համար սրբոյն Մատթիայի եւ եօթն սուրբ սարկաւազներուն ընտրութիւնը պատմելուն պէս ասոնցն ալ չըրաւ . առաջ մէկ մը աշխարհաբարը՝ մէջը քանի մի փարէնթաչիզ աւելցընելով եւ անոնք ալ քուէով լեցընելով , ետքն ալ գրաբարը գնելով չպատմեց , եւ խիստ փառաւոր ընտրութիւններուն կարգը չըգրաւ Մատթիայի եւ եօթն սարկաւազաց ընտրութեանը հետ : (տե՛ս հոգոսած . ԺԲ .) : Յայտնի է որ ասոնց

ընտրութիւնը անոնց ընտրութեանը չափ ալ իր խելքին մօտ չէ՛ եկեր որ այդ բաները չէ՛ ըրեր :

Հապա ի՞նչ կուզէ ինձմէ, որ կըսէ : « ուզէք նէ հրամանքնիդ ալ « կրնաք գտնել » : Այս ուզեցի . բնտրուեցի ալ, եւ չկրցայ գտնել . իրեն գտայ կարծածները քննեցի եւ անոնց մէջ ալ բան չգտայ : Թէ որ իր գտածներուն պէս անյարմար օրինակներ եւ ծիծաղաշարժ վկայութիւններ կրնալ գտնելուս կը վկայէ նէ՛ այդ ուրիշ բան . այդպիսի բաներ իրմէ աղէկ՝ սուրդ Փրկչի յիմարանոցը կապուածները կրնան գտնել . ես չեմ կրնար :

ՀԱՏՈՒԱԾ. Ի .

Պ. ՄԱՏԹԷՈՍ

Բայց ո՛չ այսչափ միայն :

Ըստ օրինի եկեղեցւոյ պաշտօնեայ մը քուէից առաւելութեամբ բոլոր ժողովուրդէն ընտրուելէն ետեւ, չըլլայ ընտրելոյն կողմէն խարդախութիւն եւ ընտրողաց կողմէն վրիպում եղած ըլլալով եկեղեցւոյն վնաս մը չհասնելու համար, Պօղոս՝ ձեռնադրելէն կամ հաստատելէն առաջ, ընտրողներուն կամ վկայողներուն, այսինքն բոլոր ժողովուրդեան ներկայութեամբը հրապարակաւ ալ լաւ մը փորձել եւ քննել եւ այնպէս պաշտօնի մատուցանելը եւ մէկու մը վրայ վաղվաղակի ձեռք չդնել, չհաստատել եւ ուրիշ անհամար ըզգուշութիւններ կը պատուիրէ խստիւ . (Ա. ՏԻՏ. Գ. 10. Ե. 8) . եւ այս քուերայներէն չանցած եւ աղէկ մը չփորձուած մէկը պաշտօնի չմատչիլ կը պատուիրէ . եւ եպիսկոպոսներուն՝ եկեղեցիին ամէն մէկ անդամին ընտրութեան քուէն կամ վկայութիւնը ունենալէն զատ, եկեղեցիէն չեղողներուն, կամ ըստ այժմեան ժամանակիս մինչեւ անգամ տաճկըներուն եւ հրեայներուն ալ վկայութիւնը պէտք է ունենալ կըսէ . « պարտ է նմա վկայութիւն բարի եւ յարտաքնոցն ունել . Ա. ՏԻՏ. Գ. 7 » : Իսկ դուք ասոր հակառակը կըսէք, թէ « ժողովուրդին ընտրութիւնը կամ վկայութիւնը ձեռնադրութեան պաշտաման մէջ էական պայման չէ » . ու եւ թէ « երբ մէկ եպիսկոպոս մը մէկը առանց ժողովուրդեան հարցընելու քահանայ ձեռնադրէ նէ՛ Պ. Նալբանդեանցը անիկայ քահանայ պիտի ընդունի՞ թէ չէ » : Զարմանալի՛ հակասութիւն :

Ասոնք տեսնելէդ ետեւ, ա՛լ կարծեմ թէ կը համոզուիս . թէ եկեղեցւոյ կառավարութիւնը սահմանադրական է, եւ անոր սահմանադրութիւնը կամ օրինադիրքն ալ աւետարանը . եւ թէ եկեղեցւոյ կառավարութիւնը սահմանադրական ճանչնալը հաւատոյ էական մասն է . եւ չճանչնալը կամ միապետականի փոխելը կամ փոխողներուն իրաւունք տալ եւ համախոհ գտնուիլն ալ մոլորութիւն :

Առաքեալք ասիկայ ո՛չ յանձնէ ինչ սահմանեցին . եւ ՚ի գործ դրին, այլ զէ՛ ՚ի Բրիտոսէ առ ինչ :

Յիրաւի չէ՛ թէ միայն Պօղոս առաքեալ, այլ եւ ամէն առաքեալ եւ հայրապետ՝ նուիրելոյն վրայ հարկ եղած քննութիւնը կարեւոր կը սեպեն. բայց Պ. Մատթէոսին ըսած ընտրութիւնէն առաջ մի ե՞տքը մի, ասիկայ մինչեւ հոս ապացոյց մը չունեցաւ. եւ հոս ասիթ կունենամք նորէն ըսելու թէ աշխարհականաց ըրածը ընտրութիւն չէ՛ լոկ մէկուն վարուց եւ բարուցը վրայօք վկայութիւն մըն է: Ընտրութիւն ըլլար նէ՛ բանը կը մնար միայն ձեռնադրելու եւ կարգ տալու. իսկ եպիսկոպոսին ընելու քննութիւնը՝ որ առաքեալը կը պատուիրէ, առաջուց եղած վկայութիւնը կախ կը թողու. եւ թէ որ ընտրութիւն էր անիկայ նէ՛ քննութենէն առաջ ըլլալուն համար ո՛չ ինչ կըլլայ. բուն ընտրութիւնը եպիսկոպոսին քննութենէն ետքը ըրածն է. եւ ասկէց առաջ ալ ըսինք թէ ժողովուրդին արժանի վկայած մարդը այս քննութեամբ քահանայութեան արժանի կըլլայ. եւ թէ որ անարժան գրտնուի նէ ժողովրդեան վկայութիւնը պարապը կերթայ: Այլ ասիկայ կը ցուցընէ սուրբ առաքելոյն առ Տիմոթէոս պատուիրելի թէ՛ « ձեռս վաղ- « վաղակի յուրուք վերայ մի՛ դնիցես, եւ մի՛ կցորդ լինիցիս մեղաց « օտարաց » (Ը. Տեմ. 17. 22). Թէ որ ընտրութիւնը ժողովրդեանն է նէ՛ անարժան ընտրութեան մեղքը անոնց ճիտն է. ձեռնադրողին ի՞նչ, որ սուրբ առաքեալը կըսէ թէ շուտ մը մէկին վրայ ձեռք չդնես, եւ ուրիշներուն մեղքին հաղորդ չըլլաս: Պ. Մատթէոս կարծեմ այս ըսածիս ուժը հասկըցած է, որ տյս վկայութիւնը չտեսնելու կուգայ. եւ երբ փարենթազիղներուն մէջ թուանշանով կըլեցընէ, առաջին Տիմոթէոսի այս գլխահամարն ու տնահամարը տեղի չեն ունեցեր:

Ընտրելոյն բարուցը վկայութիւնը աւելի հաստատուն եւ անբամբաս ըլլալու համար հեթանոսներուն կամ եկեղեցիէ դուրս եղողներուն ալ վկայութիւնը պէ՛տք է կըսէ. բայց խորհրդոյն էական մասը չէ՛ ո՛չ ասոնց եւ ո՛չ ալ ուրիշներուն վկայութիւնը: Ը՛յս էր սուրբ գրոց մէջ Պ. Մատթէոսին ցուցընելիքը. մեզի ա՛յս պիտի հաստատէր՝ թէ ժողովրդեան կողմէն վկայութիւն չեղած, (որ ինքը ընտրութիւն կանուանէ), ձեռնադրութիւնը անվա՛ւեր ըլլայ՝ եւ ձեռնադրուածը աշխարհական սեպուի: Այսն զի խորհրդոյն էական մասն ըսելը այս ըսել է: Թէ որ ժողովուրդէն վկայութիւն չառած մարդը ձեռնադրելը արեւնա՛ւոր է ըսէր նէ՛ ատոր ես ալ կը համաձայնէի: Ը՛յդ կերպով ձեռնադրողը մեղք կը գործէ. բայց ըրած ձեռնադրութիւնը ճշմարիտ է. եւ ասով կի՛տայուի որ խորհրդոյն ճշմարիտ ըլլալուն համար պէտք եղած էական

մասէն պակաս բան չկայ : Այս թէ ո՛չ եպիսկոպոսին հետ մէկ տեղ
չէ՛ թէ միայն ձեռնադրեալին վկայութիւն տուող հաւատացեալները ,
այլ եւ տաճկըներն ալ հրեայներն ալ խորհրդոյն պաշտօնեայ կը լլային :

Մեր ասանկ ըսելը հակասութիւն կանուանէ Պ . Մատթէոս . այն
ալ զարմանալի . վրայի երկարն ալ հետը : Որ խօսքէս հակասութիւն
գտեր է ասիկայ : Արքէք մտքէս ալ անցած չէ՛ ըսածիս հակառակը
ըսել թէ ժողովուրդին ընտրութիւնը կամ վկայութիւնը ձեռնադրու-
թեան հսկան պայման է . որ հոս չէ ըսելովս հակասութիւն ըսած ըլլամ .
վասն զի հակասութիւն կը լլայ մի եւ նոյն բանին մէկ մը է՛ եւ մէկ մը չէ՛
ըսելը : Անբաժ վկայութիւններուն մէջ ալ ըսածիս դէմ բան մը չգտայ որ
գո՛նէ անոնց ըսածին հակասութիւնն ըլլար իմ ըսածս , որ այն ատենը ո՛չ
թէ հակասութիւն կըսուէր , այլ ընդդիմութիւն : Զուցուցած վկայու-
թիւնները տեսանք որ ոմանք իրեն գէմ են . ոմանք խնդիրէն բոլորո-
վին դուրս՝ զո՛հ ընելու նոխաղին կամ քահանայներուն եւ զեւտացի-
ներուն վառելու փայտին եւ ուրիշ ասոնց պէսերուն եւ ընտրութեանը
վրայ են : Ո՛ր կը մնայ այն զարմանալի հակասութիւնը : Աչքին է երեւցեր .
կամ խելքին է եկեր :

Այս բաներս այսպէս ըլլալով ինչէ՞ն հասկըցեր ես Պ . Մատ-
թէոս որ ես ասոնք տեսնելէս ետքը կը համոզուիմ եղեր եկեղեցիին
կառավարութիւնը սահմանադրական ըլլալուն , երբ այս սահմանադրական ըլ-
լալը ժողովուրդը կարգաւոր ընտրող եւ անկէց վեր եւ անոր գերա-
գոյն տէր ըլլալու կը կապես : Ակեղեցւոյ օրինաց գիրքը Աւետարանն է
կրսես . քանի՞ վկայութիւն բերիր աւետարանէն՝ ըսածդ հաստատելու :
Ակեղեցւոյ կառավարութիւնը սահմանադրական չճանչնալը մոլորութիւն
կանուանես . ո՛ր ժողովքին վճիռն է այդ . եւ վճռող ժողովքը տիե-
զերակա՞ն է թէ ազգայի՞ն . գաւառակա՞ն թէ թաղակա՞ն : Այդ վը-
ճիռը տուող ժողովքը գիտեմ , եւ ես անոր դանամիջեան ժողովակ կը-
սեմ . որուն նախադասն է մէջուխէշանը . եւ այդ ժողովքը իմ վրաս
ազգեցութիւն չունի . դուն նայէ՛ որ անոր վճիռէն դուրս բան չընես .
չէ նէ՛ ասկէց ակնկալութիւն ըրած ամէն աղէկութիւններէդ կը զօրա-
կուիս :

Արեսս թէ եկեղեցւոյ կառավարութիւնը միապետականի փոխելը
կամ փոխողներուն իրաւունք տալը եւ համախոհ գտնուիլն ալ մոլորու-
թիւն է : Խեղճ կրօնագէտ . ոչ խօսածդ գիտես , եւ ո՛չ ի՞նչ մոլո-
րութեան մէջ ինչպէ՞ս ըլլալդ : Միապետ ըսելը՝ մէկ պետ կամ իշխան
կամ բարոյական գլուխ ունեցող ըսել է : Ըսելք թէ դուն Հայաստան-
եայց եկեղեցիին երեւելի գլուխ սուրբ Աջմիածնի կաթողիկոսն ըլլա-
լը չես ընդունիր . նմանապէն յունաց եւ հռոմայեցւոց կամ արեւմտեան

եկեղեցւոյ գլուխներն ալ չես ճանչնար . գո՛նէ ա՛յն ալ մի չես գիտեր որ եկեղեցին մէկ աներեւոյթ գլուխ մը ունի , որ է Վրիստոս : Վրիստոսդ բանի՞ հատ է Պարո՛ն , որ եկեղեցիին միապետական ըլլալը , այսինքն՝ միայն մէկ հատիկ գլուխ ունենալը չես ճանչնար : Բայց ես ի՞նչ կըսեմ կոր . քու դրութեանդ հակառակը քեզի ըսել տալու կաշխատիմ : Վրիստոսիդ մէջէն գտանք որ ժողովուրդը աստուած է եղեր . ըսել կըլլայ որ՝ ո՛րքան ժողովուրդ կայ նէ՛ եկեղեցին ալ այնքան գլուխ ունեցած կըլլայ . եւ այն ատենը այդ քու երազած եկեղեցիդ կըլլայ հրէշ մը . ձեռքի տեղ գլուխ , ոտքի տեղ գլուխ , փորի տեղ գլուխ . եւ նոյն իսկ գլխուն վրայ ալ ականջի տեղ գլուխ , աչքի տեղ գլուխ , բերնի տեղ գլուխ , եւ այլն : Հիմայ մենք քու եկեղեցիդ գլուխը հարցընելուն տեղը այդքան գլուխներուն մարմինը պիտի հարցընեմք թէ ո՞ր է : Այսէ քեզի ինչե՞ր ըսել կուտայ մէկ անմիտ դրութեանդ հետեւանքը :

Աուզե՞ս հասկընալ թէ ըսածներուդ ի՞նչպէս վկայութիւններ ալ բերել կուտայ , որ ամէնուն ծիծաղը կը շարժեն . երկու գոց փարենթազիզները բանօնք :

Ը . ՏԻՏ . Գ . 10 . « Այնպէս եւ զսարկաւագունս պարկեշտս , « մի՛ երկբանս , մի՛ գինէսէրս , մի՛ զօշաքաշս . այլ ունիցին զխորհուրդս « դրս հաւատոցն սուրբ մտօք . ինքեանք նախ փորձեսցին , եւ ապա ՚ի « պաշտօնն մատ՛ցեն . զի անարատք իցեն , » : Հոս Պ . Մատթէոսին բանին գալու միայն քեզիցէ՛ք բար կը տեսնեմք . թէ որ այս չէ՛նէ՛ ուրիշ չկայ : Բայց այս ալ որոշիչ բան մը չնշանակելուն՝ եւ Պ . Մատթէոսին ուրիշ ըսածին քիչ մը դէմ գալուն համար չյարմարիր : Հայտնի խօսքով չիմացընէր թէ փորձողը կամ քննութեան անողը ո՞վ պիտի ըլլայ . եպիսկոպո՞սը թէ ժողովուրդը . բայց խօսքը առ Տիմոթէոս ըլլալով կը հասկըցուի թէ նոյն իսկ եպիսկոպոսը պիտի ըլլայ , Պ . Մատթէոսին ըսածին ալ դէմ է . վասն զի ասիկայ ըսաւ որ պաշտօնեայ մը քուէից առաւելութեամբ ընտրուելէն ետք փորձուելու է . իսկ սուրբ առաքեալը՝ նախ փորձեսցի կըսէ . եւ ասիկայ Պ . Մատթէոսին ըսածէն աւելի խելքի մօտ է . վասն զի առաջ ընտրել եւ ետքը քննելը աղէկ չգար : Ի՞նչպէս որ ըլլայ ալ նէ՛ այս վկայութիւնը Պ . Մատթէոսին մտքին բնաւ չյարմարիր եւ դէմ ալ է :

Ը . ՏԻՄ . Ե . 5 : « Իսկ որ ճշմարիտ այրին իցէ եւ մենացեալ յուսացեալ յ՛ստուած , եւ կանխեալ յաղօթս եւ ՚ի խնդրուածս զցայգ եւ « գցելեկ » : Բայց ճշմարիտ այրին առանձնացած ու աստուծոյ յուսացած , ու գիշեր ցերեկ աղօթքի եւ խնդրուածքի հետ կըլլայ : Եյս խօսքիս Պ . Մատթէոսին դրութեանը հետ ինչ յարմարութիւն ունենալը շատ մը-

տածեցինք եւ չկրցանք գուշակել: Փարենթազիզէն անմիջապէս առաջ կըսէր. « մէկու մը վրայ վաղվայակի ձեռք չդնել, չհաստատել. եւ ուրիշ « անհամար զգո՛շութիւններ կը պատուիրէ խոտիւ ,, . եւ անմիջապէս ետ- քընէ. « եւ այս քուրայներէն չանցած եւ շաղէկ մը չը փորձուած մէկը « պաշտօնի չմատչել կը պատուիրէ ,, . Հիմայ սուրբ առաքելոյն խօս- քին մէջ ի՞նչ խիստ պատուէր եւ ի՞նչ փորձի եւ քննութեան քուրայ կայ. կամ փորձուիլ ուզած եկեղեցւոյ պաշտօնեայն ո՞վ է. Ո՛չմարիա այրի կնոջ նշան կաւանդէ սուրբ առաքեալը. եւ այս համարին մէջ ան- կէց աւելի բան չկայ: Թէ որ վիճակահան նայելու ճամբով գտնուած վկայութիւններէն մէկը չէ նէ ասիկայ՝ ուրիշ ի՞նչ կրնայ ըլլալ. աչքը գոցեր գիրքը բացեր եւ մատը կոխեր է. մատին տակը այս խօսքն է ե- կեր եւ այս է զրեր:

ՀԱՏՈՒԱԾ ԻԱ.

Պ. ՄԱՏԹԷՈՍ

Եկեղեցական կառավարութեան սահմանադրութիւնը հաստատեց Քրիս- տոս, երբ ըսաւ:

Թէ. - Եթէ մեղիցէ քեզ եղբայր քո, երթ յանդիմանեա վնա՝ յորժամ դու եւ նա միայն իցէք. եթէ լուիցէ քեզ շահեցար զեղբայր քո - ե- պիսկոպոսին, քահանային եւ այն պաշտօնը: Ապա թէ ո՛չ լուիցէ քեզ, ա՛ռ ընդ քեզ միւս եւս երկուս. զի ՚ի բերանոց երկուց եւ երից վը- կայից հաստատեցի ամենայն բան. կրօնական ժողովին պաշտօնը: Իսկ եթէ նոցա ո՛չ լուիցէ եղիցի քեզ իբրեւ զհեթանոսն եւ զմաքսաւորն - ընդհանուր ժողովին պաշտօնը անխտիր յամենայն հաւատացելոց:

Մատթ. ԺԸ. 15-17:

Եւ թէ. - իշխանք ազգաց տիրեն նոցա. եւ մեծամեծքն իշխեն նոցա. ո՛չ այնպէս իցէ ՚ի ձերում միջի. այլ որ կամիցի ՚ի ձէնջ մեծ լի- նել՝ եղիցի ձեր պաշտօնեայ. եւ որ կամիցի ՚ի ձէնջ առաջին լինել՝ ե- ղիցի ձեր ծառայ: (Մատթ. Ի. 23. 27): Թագաւորք ազգաց տիրեն նոցա. եւ որ իշխենն նոցա բարերարք կոչին, այլ դուք ո՛չ այնպէս. այլ որ մեծն է ՚ի ձեզ՝ եղիցի իբրեւ զկրտսերն, եւ առաջնորդն իբրեւ զսպասաւորն. ո՞վ է մեծ, բազմեա՞ն՝ եթէ սպասաւորն. ո՛չ ապաքէն բազեալն: (Ղուկ. ԻԲ. 25-27):

Չասոնք հաստատել ու հասկընալու համար, անհամար վկայութիւններ կրնաս գտնել. բայց առ այժմ մասնաւորապէս կարդա՛ ու բաղ- դատէ՛ սահեռեւեալները: Դործ. Ա. 15-26: Զ 1-6: ԺԶ. 1-3: Զուհ. Բ. 23-29: Գ. 1: ԺԲ. 1-3: Ա. Կորնթ. Գ. Ե. 9-13: ԺԲ. ԺԳ. ԺԴ. Բ. Կորնթ. Դ. 5: Ը. Ժ. 13: Գողոթ. Դ. 27-29: Բ. Թեոսղ. Գ. 6-14 Ա Տիմոթ. Գ. Ե. ԵՔԲ ԺԱ: Ա Պետր. Ե. 3. եւ այլն, եւ այլն. եւ այլն: Կրնա՞ս այս վկայութիւններուն հաստատած դրութեանն համար ալ ըսել թէ ռուսոյին դրութիւնն է, եւ կամ թէ սօսիալիստներուն, կամ

կարմիր հասարակապետականներուն, կամ գոմիւնիսթներուն սկզբունքն է, որ տասն ու ինը դար յառաջ բոլոր հրէաստան տակն ու վրայ ըրաւ եւ վերջապէս այն ժամանակի քահանայապետներուն այնչափ շարաշար 'ի գործ դրած եւ այնչափ նուաստութեան հասցուցած իշխանութիւնը կործանեց եւ այլն:

ՊԱՏԱՍԻԱՆ

Եյս հատուածիս մէջ բերած վկայութիւններովդ հաստատել կուզես թէ Վրիստոս եկեղեցւոյ կառավարութիւնը սահմանադրական ըրաւ. այսինքն՝ անխտիր ամենայն հաւատացելոց ձեռքը տուաւ: Բայց բերած վկայութիւններուդ երեքն ալ խրատ են. սահմանադրութիւն չեն: Եւ առաջինը մասնաւոր մարդ մը մէկէն գանգատ ունենայնէ ի՞նչ ընելու է՝ այն կը զրուցէ: Արկրորդը եւ երրորդը յայտնապէս կենթադրեն որ մեծ մը պիտի լլլայ եկեղեցւոյ մէջ. եւ այն մեծին վարուելու կերպը կը սովորեցընեն. եւ այս կողմէն սուրբ Պետրոս առաքելոյն ըսածին մտքովն են. « զերիցունս այսուհետեւ աշաչեմ իբրեւ զերիցակից . . . արածեցէ՛ք որ 'ի ձեզ հօտդ է Լ'ստուծոյ . . . մի՛ իբրեւ տիրելով վիճակաւ » (Լ. Պետր. Ե. 1-3): Եւ այս խօսքէն չհասկըցուիր թէ եկեղեցւոյ մէջ երէց չկայ. կամ թէ երէցին ու հօտին իշխանութիւնը հաւասար են՝ եւ երէցը հօտին վրայ իշխանութիւն չունի. կամ թէ հօտը երէցին տէրն է. չէ՛ թէ երէցը հօտին: Եյսպէս ըլլալու էր թէ որ Պ. Մատթէոսին ըսածը շիտակ ըլլար: Եւ սոր նման է նա՛ եւ տեառն մերոյ ըսածը որ՝ թէ որ մէկերնիդ մեծ ըլլալ կուզէ նէ՛ ձեզի պաշտօնեայ ըլլալու է. եւ թէ՛ ձեր մէջի մեծը պղտիկին պէս ըլլալու է: Եւսել չէ՛ որ ձեր մէջը մեծ գտնուելու չէ՛. ամէնքդ ալ պղտիկ ըլլալու էք: Եկեղեցւոյ գլուխը եւ մեծը Վրիստոս ինքն է. բայց « ո՞վ է մեծ, բաղմեա՞լն եթէ սպասաւորն, ո՞չ ապա « քէն բազմեալն » ըսելէն անմիջապէս ետքը կըսէ. « բայց ես եմ 'ի « միջի ձերում իբրեւ սպասաւոր »: Հաւատացելոց մէջ մեծ չկայ, ամենն ալ հաւասար են ըսելուն վերոյգրեալ խօսքէն հաստատութիւն ուղեւուն տակէն՝ Վրիստոսի ալ եկեղեցւոյ մէջ մեծ ըլլալը ուրանալ կելլէ. եւ կերեւի թէ Պ. Մատթէոս ալ այսպէս հասկըցած է. չէ՛ նէ ինչո՞ւ համար այս մէկ քանի բառերս ալ չէր դրեր իր խօսքին կարգը. որ բաւական երկար վկայութիւններ կը բերէ: Մատթէոսի աւետարանէն բ. բ. խօսքին վերջն ալ հեռեւեալը կը գտնեմք. « որպէս որդի « մարդոյ ո՞չ եկն պաշտօն առնուլ, այլ պաշտել. եւ տալ զանձն իբ « ՚ի կանս փոխանակ բաղմաց »: Եւկէց չհետեւիր թէ տէրն մեր եկեղեցւոյ մէջ ժողովուրդէն վար է աստիճանաւ, որ ժողովրդեան սպա-

սառնելու եկայ կըսէ : Ինչպէս որ թագաւորը՝ որ ժողովորդեան հան-
գըստութիւնը եւ խաղաղութիւնը պահպանելու համար թագաւոր ըլլա-
լով գործը հասարակութեան ծառայութիւն ընել մըն է . աստիճանաւ եւ
պատուով եւ իշխանութեամբ ժողովուրդէն վար չէ՛ :

Իսկ առաջին վկայութիւնը՝ որ է մէկ գանգատաւոր մարդու մը
ընելիքին վրայօք տեւուն մերոյ տուած խրատը , խօսքերէն յայտնի կե-
րելի որ Ռեշտիմալճեան հռչակաւոր Արիգոր վարժապետին Առա-
ջա-իշ անուն գրքէն է առած , մէջէն քանի մի բառ պակսեցընելով կամ
աւելցընելով . բայց միտքը բոլորովին խանգարելով եւ հակառակին տա-
նելով . անոր համար առած տեղն ալ նշանակելու չէ՛ համարձակեր :

« Յայտ է ՚ի բանիցն՝ Արիստոսի , եւ ՚ի սովորութենէ եկեղեցւոյ ,
« նախ՝ որպէս ՚ի հին օրէնս պատուիրեաց Աստուած , զի ամենայն
« հակառակութիւնք կրօնի բացորոշեացին յեկեղեցւոյ . ըստ այնմ .
« — երթայցե՛ առ քահանայս եւ ղեւտացիս . . . եւ քննեալ
« պատմեացն քեզ զգատաստանն , եւ արասցես ըստ հրամանին զոր
« պատմեացն քեզ » (Ռ . () րէն . ԺԼ ; . 9) : Այս խօսքէս կերելի
որ Արիգոր վարժապետը եկեղեցի ըսելով չէ՛ թէ անխտիր ամենայն
հաւատացիլոց բազմութիւնը կը հասկընայ , այլ միայն ուսուցանող ե-
կեղեցին . վասն զի երկրորդ օրինաց խօսքը ըսածին վկայ կը բերէ ,
որ դատը քահանայներուն եւ ղեւտացիներուն հանել կը պատուիրէ , եւ
չէ՛ թէ բոլոր իսրայէլացւոց . վասն զի հին եկեղեցւոյ ալ ուսուցանող
մասը կամ պաշտօնեայններն ասոնք էին :

Վարժապետը խօսքը կը շարունակէ ըսելով . « սոյնպէս եւ ՚ի նոր
« օրէնս պատուիրեաց տէրն մեր՝ ասելով այսպէս . — եթէ քեզ մեղիցէ
« եղբայր քո . ե՛րթ յանդիմանեա՛ զնա , յորժամ դու եւ նա միայն իցէք
« (Մ . Կ . ԺԲ . 15) : Այսու եցոյց զառանձին իշխանութիւն եպիսկոպո-
« սին , զոր ունի ՚ի վերայ միոյ բաղաքի՝ կամ թեմի » : Պ . Մատ-
թէոսը այս խօսքիս տեղը դրել է . « եպիսկոպոսին , քահանային եւ
« այլն պաշտօնը » : Այնպէն տակը ո՛վ եւ ո՛վ կը պարունակին՝ չեմք
զիտեր . որովհետեւ եկեղեցւոյ մէջ գատաւորական իշխանութիւն ունե-
ցող քահանայէն վար աստիճանաւոր չեմք զիտեր . եւ քահանայն ալ՝ թէ
որ եպիսկոպոսին հրամանովը յայտնի իր գատաղ որական պաշտօնը վա-
րելու հրաման առած չէ՛ նէ՛ իր այս պաշտօնին սահմանը կը ըլլայ խոս-
տովանութեան գաղտնի ատեանը . անոր համար վարժապետը միայն ե-
պիսկոպոս կը յիշէ հոս . եւ քահանայ չգնելու : Պ . Մատթէոսին քահանայ
բառը աւելցընելը աւելորդ է . իսկ է- այն բառերը բոլորովին անտեղի :

Վերոյդրեալ խօսքերուն անմիջապէս սա՛ կը յարէ վարժապետը .
 « ապա եթէ ո՛չ լուիցէ քեզ, ա՛ն ընդ քեզ միւս եւս կամ երկուս .
 « (Մատ. ԺԲ. 17) : Եւսու եցոյց զբացարձակ իշխանութիւն պատ-
 « րիարքին, կամ կաթուղիկոսին, կամ արքեպիսկոպոսին, զոր ունի ՚ի
 « վերայ սեպհական վիճակին կամ ազգին իւրոյ ,, : Եւսալ Պ. Մատ-
 « թէոսը փոխեր եւ ըրեր է, « կրօնական ժողովին պաշտօնը ,, : Հան-
 « գուցեալ վարժապետին ժամանակը որ այս գիրքը գրեց՝ տակաւին կրօն-
 « ան կամ էկեղեցական կամ սրբաւնութեան ժողով չկար . անոր համար կրնայ
 « ըսել Պ. Մատթէոս թէ ես հիմակուան պարագայներուն յարմարցուցի :
 « Եւսոյ պատրիարքին կամ կաթուղիկոսին կամ արքեպիսկոպոսին կարգը
 « ե՞րբ պիտի գայ այս դատողական աստիճաններուն մեջ . կամ թէ կրօ-
 « նական ժողովը հաստատուեցաւ նէ ասոնք իրենց պաշտօնէն ինկա՞ն մի .
 « երբ սահմանադրութիւնն ալ կըսէ թէ կրօնական՝ եւ համագումար ժո-
 « ղովներուն չկտրած դատը Երարատեան մայր աթոռոյն կամ կաթուղի-
 « կոսին ձգուի : Պ. Մատթէոսին պէտք էր կրօնական ժողովքին հա-
 « մար ուրիշ ատեան բանսլ . կամ պատրիարքին եւ կաթուղիկոսին եւ արքե-
 « պիսկոպոսին ուրիշ տեղ ցուցընել :

Վարժապետին խօսքին մնացածը տեսնենք . « Իսկ եթէ նոցա ո՛չ
 « լուիցէ, ասասջի՛ր յեկեղեցւոջ : (Մատ. ԺԲ. 17) : Եւսու եցոյց ըզ-
 « գերագոյն իշխանութիւն տիեզերական ժողովոյն, զոր ունի ՚ի վերայ
 « ամենայն ազգաց քրիստոնէից . վասն որոյ տայ անդէն զվերջին բացորո-
 « շութիւնն ասելով . « ապա թէ եւ եկեղեցւոյն ո՛չ լուիցէ . եղիցի քեզ
 « իբրեւ գհեթանոսն եւ զմաքաւոր ,, (Մատ. ԺԲ. 17) ,, : (Լատինացի
 « Երեմ. 150 . 151) : Պ. Մատթէոսը հոս երկու կերպ փոփոխութիւն է
 « ըրեր . մէկ մը՝ ասսջի՛ր յեկեղեցւոջ խօսքը վերջըն՝ լով, որ վարժապետը
 « դրած է . եւ անոր տեղը՝ եղիցի՛ +եւ եթէ՝ զհիմնոսն եւ զմաքաւոր խօսքը
 « գնելով, որ դատաստանական վճռոյն բացայայտութիւնն է, ընելու
 « երկրորդ եւ աւելի ծանր փոփոխութեան դուռ կը բանայ . որովհետեւ
 « եպիսկոպոսը եւ կրօնական ժողովը իբրեւ լսկ հաշտարար - ուղե՛ն - կը
 « բըռնէ . իսկ վերջին վճիռը տալը՝ որ է եկեղեցական իշխանութեան գե-
 « րագոյն պաշտօնը, առաւելագոյն մասամբ աշխարհականներուն կուտայ .
 « ասիկայ է « ընդհանուր ժողովին պաշտօնը (կըսէ), անխտիր յամե-
 « նայն հաւատացելոց ,, : Եւսա՛ այս է իրեն ապացուցանելիքը, թէ
 « անխտիր ամենայն հաւատացեալներէ գումարուած ժողով մը եկեղեցա-
 « կան կամ կրօնական դատի մէջ վերջին վճիռ տալու գերագոյն իշխանու-
 « թիւնը ու ՚ի մի . եւ ինքը Պ. Մատթէոս՝ այս կէտը միշտ իբրեւ անջրելի
 « ապացոյցներով հաստատուած կը սեպէ . եւ ինքը ասոր հաստատութեա-
 « նը հոգ չընել : Իսկ Եւստիմալձեան վարժապետին ըսած Երեմիայի

Ժողովը բողոքովին պատրիարքներէ՛ եւ արքեպիսկոպոսներէ եւ եպիսկոպոսներէ՛ բաղկացած կըլլար . որուն մէջ քահանայն անգամ թէ որ եպիսկոպոսին կողմէն իբրեւ նուիրակ կամ փոխանորդ գացած չէր նէ՛ նստելու հրաման չունէր . ինչպէս որ եկեղեցական հին կանոններուն մէջ գրուած է . եւ որոշիչ վճիռը տալն անշուշտ այս ժողովին կը վերաբերէր : Աստի կըսեմք Պ . Սատթէոսին որ այս վկայութիւններուն ալ թող խերը տեսնէ . որովհետեւ իրեն հաստատել ուզածներուն ապացոյցները չեն :

Մոյնպէս՝ բերած բազմաթիւ թուանշաններովն ալ՝ որոցմով ուրիշ վկայութիւններու տեղ կը ցուցընէ , բան չհասկըցուիր իր ըսածին հաստատութիւն : Էիմայ այս վկայութիւնները տեսնենք :

Գործ . Ը . 15-26 , Սատթէոսի վիճակաւ ընտրուելուն պատմութիւնն է . եւ մենք վերը տեսանք որ այս կերպ ընտրութեան տէրը ժողովուրդը չէ՛ . Ըստուած է . (Գ՛ս ՚ի վեր հարստ ժԻ՛) :

Գործ . Օ . 1-16 . Եթեմն սարկաւազաց ընտրութեան պատմութիւնն է . որուն վրայ ալ վերոյիշեայ հատուածին մէջ խօսեցանք .

Գործ . Ժ . Օ . 1-3 . Արքայն Տիմոթէոսի համար լիւստրացիներուն եւ յիկոնիացիներուն համար տուած բարի վկայութեանը վրայ է . որ ընտրութիւն չէր . եւ ասոր վրայ ալ խօսած եմք . (Գ՛ս ՚ի վեր . հարստ . ժԻԺ) :

Շարժ . Բ . 25-29 . Գ . 1 . Ըյս վկայութիւնը քիչ մը ուշ միտքը եկեր է . ուրիշի մը՝ որ այս նիւթոյս վրայ խօսելու ձեռք զարնէր , ամենեւին միտքը գալու բան չէր : Տեսնենք թէ ի՞նչ է . եւ աշխարհաբար գրենք . որպէս զի գրաբարն աղէկ մը չհասկըցողները չը կարծեն թէ Պ . Սատթէոսին ըսածին ուժ տալու բան մը կայ եւ մենք կը ծածկեմք : Սուրբ առաքեալը կըսէ . « Թլփատութիւնը շահ « կունենայ՝ թէ որ օրէնքը պահես . հապա թէ որ օրէնքին դէմ յան « ցաւոր ես նէ՛ թլփատութիւնդ անթլփատութիւն եղաւ : Ասկ թէ որ « անթլփատութիւնը օրէնքին իրաւունքը պահէ , չէ՞ մի որ անոր անթլ « փատութիւնը թլփատութիւն պիտի սեպուի : Աւ լնիկ անթլփատութիւն « եղողը օրէնքը կատարելով պիտի դատի քեզ՝ որ գրով ու թլփատութիւն « նով հանդերձ օրէնքի դէմ յանցանքի տէր ես : Ասանզի չէ՛ թէ յատնի հըր « եայն , եւ ո՛չ յայտնի մարմնով թլփատութիւնը . այլ ծածուկ հրեայն , եւ չէ՛ « թէ գրով՝ ալ հոգւով սրտի թլփատութիւնն է . որուն գովութիւնը « մարդսյով չէ . Ըստուծ մէ է : Արեմն հրեային աւելի ի՞նչ կայ . կամ « այն թլփատութիւնէն ի՞նչ շահ » : Մենք ալ կըսեմք , թէ առաքելոյն այս խօսքերէն Պ . Սատթէոսին ի՞նչ շահ , իր երազած սահմանադրական եկեղեցին Քրիստոս հաստատեց ըսելու : Ըյս վկայութիւնս ալ շինակարան նայելու կերպով գտնուած վկայութիւններէն է :

« նախանձ կայ . չէ՞ մի որ մարմնաւոր էք ու մարդկօրէն կերթաք » :
 Պ . Մատթէոսը եկեղեցւոյ մէջ տէր եւ իշխան եւ վճռատու ժողո-
 վուրդն ընելու համար Պօղոս առաքելոյն այնպէս մէկ խօսքէն վկա-
 յութիւն կը բերէ , որ առաքեալը կրսէ թէ ժողովուրդը տակաւին կաթ-
 ուտելու է որ սնանի . հաց ալ չկրնար ուտել : Երդեօք առաքելոյն կ-
 ըսածը Պ . Մատթէոս եկեղեցւոյ կառավարութիւնն ըսել հասկըցաւ :
 ո՞վ գիտէ : Ինչաւ մարդ մը այնպէս չհասկընալուն վստահ եմ . ըսյց
 Պ . Մատթէոսին այնպէս չհասկընալուն վստահ չեմ :

Լ . Կրնի . Ե . 9-13 : Կորնթոսի մէջ մէկը ծանր մեղք մը գոր-
 ծեր էր . որ ամէնուն յայտնի ալ էր նէ՛ անիկայ իրենց մէջէն հանած
 չէին՝ անոր հետ հաղորդակցութիւն եւ ընտանութիւն կրնէին : Սուրբ
 առաքեալը անոնք յանդիմանելուն կարգը կրսէ Պ . Մատթէոսին ցու-
 ցուցած խօսքերը : « ձեզի այդ թուղթին մէջ գրեցի որ պոռնիկներուն
 « հետ չխառնուիք : Զ : Թէ այս աշխարհիս պոռնիկներուն կամ ա-
 « գահներուն կամ յափշտակողներուն կամ կռապաշտներուն հետ . չէ՛ նէ՛
 « աշխարհքէս ալ ելլել պէտք էր : Իսայց հիմայ ձեզի գրեցի որ չխառ-
 « նուիք : Թէ որ եղբայր ըսուած մէկը կամ պոռնիկ ըլլայ կամ կռապաշտ
 « կամ ագահ կամ բամբասող կամ զիսով կամ յափշտակող , անոր հետ
 « հաց ալ մի՛ ուտէք . Գուրսիները դատել ինչի՞ս պէտք է . չէ՞ մի որ
 « դուք ներսիները պիտի դատէք . գուրսիներն ալ Եստուած պիտի
 « դատէ . չարը մէջերնուդ վերցուցէ՛ք » : Եսոր մէջ քիչ մը Պ . Մատ-
 թէոսին մտքին մօտ կարծուելու բան կերեւի , որ ներսիները , այսինքն
 հաւատացեալները դատելը սուրբ առաքեալը հաւատացելոց կուտայ :
 Իսայց սա՛ մտածելու է որ՝ բանը ամէնուն յայտնի էր եւ անուրանալի
 եղած է . անոր համար ճշգիւ խօսելով՝ դատաստանի տակ ի՞նչալու բան
 չկար . ամէնն ալ գիտէին որ ասանկները ամբողջընելով շիտակ ձամբու
 բերելու եւ գէշութենէն ետ քաշելու էր . եւ ասիկայ կըլլայ անոր ե-
 րես չտալով , որով անոր պէսերուն համար տրուած ընդհանուր վճիռը
 'ի գործ դնելն է սուրբ առաքելոյն դատել ըսածը : Եսպէս՝ երբ մարդ
 մը՝ որուն գողութիւնը ամէնուն ծանօթ է , տունս կամ սենեակս չըն-
 դունիմ նէ՛ ասով անոր դատաւորն եղած չեմ ըլլար : Արբ ըորոտի մը
 պատահիմ եւ անոր գպչելէն կամ հաց կերած եւ ջուր խմած ամանէն
 զգուշանամ նէ՛ անոր բժիշկը կամ դատաւորն եղած չեմ ըլլար : Եւ ը-
 սածներուս ապացոյցն այն է որ՝ երբ Կորնթացին այդ կերպով իր ամ-
 մէն քաղաքակիցներէն մերժուեցաւ , ըրածին զղջաց եւ ապաշխարեց .
 ըսյց կորնթացիները որ անոր ապաշխարելը տեսած էին , չկրցան իրենք
 իրենց անոր վրան դրուած պատիժը վերցընել , եւ նորէն անոր հետ
 հաղորդակց ըլլալ . ասոր համար սուրբ առաքելոյն իշխանութիւնը եւ

վճիռը պէտք էր. ուստի անոր իմացուցին. եւ այն ալ տուած պատաս-
խանովը մեղուցելոյն վրայէն գատապարտութեան վճիռը վերցուց, եւ
գրեց. « շատերէն եղած պատիժը անանկ մարդուն հերիք է. ասկէց եւ-
« տեւ մանաւանդ ասոր հակառակ՝ անոր ներել եւ մխիթարել անիկայ,
« որ առաւել տրտմութենէն չընկղմի: Անոր համար սէրը անոր վրայ
« հաստատել կաղաչեմ: Ասոր համար ալ գրեցի որ ամէն բանի հնա-
« զանդ ըլլալնուդ չափը առնեմ: Ասան զի երբ դուք մէկին կը ներէք՝
« ե՛ս ալ. վասն զի ե՛ս ալ ներեմ՝ նէ՛ ներելս ձեզի համար է Վրիստո-
« սի կողմէն » (Բ. Կորնթ. Բ. 6-10): « Այլէ՛. ներելը թէպէտ կորըն-
թացիներուն համար, բայց Վրիստոսի կողմէն, « ՚ի դէմս Վրիստոսի »
կըսէ. չէ՛ թէ կորնթացիներուն կողմէն. ուստի այս վկայութենէս ալ
Պ. Մատթէոսին օգուտ չկայ, որովհետեւ կապելոյ կամ արձակելոյ
վճիռը սուրբ առաքեալը իրեն կը պահէ, եւ Վրիստոսի կողմէն կը ներ-
րէ. իսկ ժողովրդեան թողածը միայն վճռոյն գործադրութիւնն է: Իսկ
քահանայացուներու կամ եկեղեցիի պաշտօնեայնելու ընտրութեան վը-
րայ, որ Պ. Մատթէոսին գլխաւոր նպատակն է, ամենեւին խօսք չկայ:

Ե. Կորնթ. ԺԲ. ԺԳ. ԺԴ.: Մեր ընթերցողները մեզի ներ-
քեն այս երեք գլուխն ամբողջ շթարգմանելնուս. մինակ իմաստը հա-
մառօտեմք: ԺԲ. գլուխին մէջ կըսէ. թէպէտ եկեղեցւոյ մէջ շատ տե-
սակ շնորհքներ կան, բայց տուողը մի եւ նոյն սուրբ հոգին է: Տուած
շնորհքները կը համրէ. ոմանց իմաստութիւն, ոմանց բժշկութիւն ընե-
լու շնորհք. ոմանց այլ եւ այլ լեզու խօսելու կամ թարգմանելու չը-
նորհք. եւ այլն: Ատքը եկեղեցին մարդկային մարմնոյն կը նմանեցը-
նէ, եւ ասկէց սկսելով մինչեւ գլխոյն վերջը թարգմանած՝ եւ պէտք
եղած խորհրդածութիւններն ըրած եմք ասկէ առաջ. (տե՛ս ՚ի վեր հարստած
ԺԲ): Հոս միայն այն ըսենք որ այս ալ եկեղեցւոյ մէջ այլ եւ այլ
պաշտօնատերէր յատկացընելով, եւ անոնց մէկն ալ վերելը գնելով՝
կառավարութիւնը անխտիր ամէն հաւատացելոց շտար: ԺԳ. գլուխին
պարունակածը սիրոյ վրայ է ամբողջ. մէկ մարդ մը ո՛րքան շնորհք ա-
ռած ըլլայ Աստուծմէ, եւ ո՛րքան առաքիւնութիւն ըրած ըլլայ՝ սէր չու-
նենայ նէ ոչինչ է կըսէ. պատճառն որ՝ անոնք ամէնն ալ ժամանակա-
ւոր են. նոյն իսկ հաւատքն ու յոյսն ալ ժամանակաւոր են. միայն սէ-
րը յաւիտեան կը մնայ: Տղայութեան ատեն. տղու պէս կը խօսէի կը-
սէ. մեծցայ նէ տղայութիւնը իր բոլոր բաներովը ետ ձգեցի: Աւա-
սիկայ օրինակ կը բերէ՝ այս աշխարհիս ամէն բաներուն խափանուելուն,
եւ միայն սէրը մնալուն: Չգիտեմ թէ Պ. Մատթէոսի դրութեանը
նպատաւոր ի՞նչ կելլէ ասկէց: ԺԴ. գլուխին մէջ՝ հաւատացելոց
տրուած ձիրքերուն իրարմէ զերազանցութեանը վրայ կը խօսի. ժողո-

վերդեան հասկըցած լեզուովը խօսելը օտար լեզու խօսելէն վեր կը դասէ . ես ալ օտար լեզու կը խօսիմ կըսէ . բայց եկեղեցւոյ մէջ ժողովուրդը խրատելն աւելի կը սիրեմ : Այսքը կարգ կանոն կաւանգէ այս շնորհքները ունեցողներուն . մէկը օտար լեզուով խօսի նէ՝ մէկայն ալ թարգմանելու է որ ժողովուրդը իրեն շահաւոր բան մը սովորի . մարգարէ մը , այսինքն՝ քարոզիչ մը խօսի , ուրիշները մտիկ ընեն ու ըսածը իրենք իրենց քննեն . եւ թէ որ մէկ ուրիշի մը բան մը յայտնուի եւ խօսելու ըլլայ նէ՝ առաջինը ձայնը կտրէ ու խաղաղութիւն ըլլայ եկեղեցւոյ մէջ . վասն զի Մատուած չէ՝ թէ խռովութեան , այլ խաղաղութեան Մատուած է : Այլ գլուխը կը վերջացընէ ըսելով . « ամենայն « ինչ ձեր պարկեշտութեամբ եւ ըստ կարգի լինիցի » : Մատուածը Պ . Մատթէոս նշանակեր էր . (Գ . 13) . եւ մենք հոն ասոր արժանի դատողութիւնն ըրինք : Այլ հիմա սա՛ կըսեմք որ հոս ալ եկեղեցւոյ պաշտօնէից որոշում կայ . ամենայն բազմութիւն անխտիր մէկ սեպուած չեն . իսկ ժողովուրդեան ընտրութեան իրաւունք ունենալուն խօսքը բնաւ չկայ :

Բ . Կրօն . Գ . 5 . Սուրբ առաքելոյն խօսքն է այս : « Ընդ « եթէ զանձինս քարոզեմք , այլ զՔրիստոս Յիսուս զտէր . եւ ըզ- « մեզ ծառայս ձեզ վասն Քրիստոսի » : Եսկէց Պ . Մատթէոս հետեւցընել կուզէ՝ թէ ուրեմն կորնթացիներն ալ Քրիստոսի համար սուրբ առաքելոյն տէրն էին : Ենանկ է նէ սուրբ առաքելալը է՛փ աղէկ յանդգնութիւն ունեցած ըլլալու է որ իրեն տէրերը կը յանդիմաներ այնպէս բանի մը համար՝ որ իրեն ինկած պիտի չըլլար : Իրեն տէրերուն մէկը պոռնիկ է եղեր , առաքելոյն ի՞նչ , որ իրեն միւս տէրերը չէ՛ թէ խրատելու , այլ յանդիմանելու անգամ կելլէ : Ուրիշ տեղ մըն ալ իրեն տէր կարծուածներուն սա խօսքերը կըսէ . « որպէս թէ ձեզի « գալու եղած չըլլամ . ոմանք հպարտացան . այլ ես թէ որ Մատուած « կամենայ՝ մօտերս ձեզի պիտի գամ , եւ այն հպարտացածներուն չէ՛ « թէ խօսքը՝ այլ զօրութիւննին պիտի հասկընամ : Վասն զի Մատուածոյ « արքայութիւնը խօսքով չէ՛ զօրութիւնով է : Հիմայ ի՞նչպէս կուզէք . « ձեզի գաւազանով գամ , թէ հեղութեան եւ արդարութեան եւ խո- « նարհութեան հոգւոյն սիրովը մի » : (Բ . Կրօն . Գ . 18-21) : Մատուած է մի որ ծառայ մը իրեն տէրերուն ասանկ լեզու բանեցընէ : Բայց առաքելալը Պ . Մատթէոսին հասկըցածներուն պէս ծառայ չէր . ինչպէս որ թագաւոր մը իր հպատակներուն օգտին ծառայելով՝ ըստ իմիք անոնց ծառայ կըսուի . ասիկայ ալ կորնթացիներուն հոգեւոր օգտին կը ծառայէր : Պ . Մատթէոսը կարծեմ սուրբ առաքելոյն ժամանակն ըլլար , եւ անոր բերնէն այս խօսքը լսեր նէ՝ իր սենեակը ասոր

ախլելը պիտի տար : Այն ալ կընէր սուրբը . բայց ըսած ծառայութիւնը այն չէր :

Բ . Արեւի . Բ . Այս գլուխին ալ միայն իմաստը առնեմք համառօտ : Մակեդոնացիները իրենց ծանր աղքատութեանը շնայելով՝ սրազեւստինու աղքատներուն համար տուած տուրքերին առաքելայն կաղաչէին որ առնու . եւ առաքելալը կը յաւելու թէ՛ չէ՛ թէ միայն տուրքերնին , այլ եւ իրենց անձերնին անգամ նախ Աստուծոյ եւ ետքը Աստուծոյ կամքովը մեզի կուտային . չէ՛ թէ առաքելներուն վրայ տիրելու համար . ինչպէս որ Պ . Մատթէոս պիտի կարծէ . այլ Տիտոսի աղաչելու որ սկսած շնորհը առաջ տանի : Ասոնք օրինակ ցուցընելով սուրբ առաքելալը՝ կորընթացիներն ալ կը յարդորէ որ այն աղքատներուն համար տալու տուրքերնին առանց դանդաղելու տան : Մէկ եղբայր մը կը յիշէ . որուն գովութիւնը աւետարանին մէջն է կըսէ . եւ ետքը կը յաւելու . « եւ ո՛չ այնչափ միայն , այլ եւ ձեռն ազրեալ յեկեղեցեաց անտի՝ նշգեհակից մեր եղեւ ՚ի շնորհս յայտոսիկ , որ ՚ի մենջ զ՚ի փառս տեառն եւ ՚ի մեր յօծ արութիւն » (Բ . Արեւի . Բ . 19) : Այս քիչ մը ետքը Տիտոսի եւ առաքելոց համար կըսէ . « բայց վասն Տիտոսի ինչ բանք են , իմ հաւասար է , եւ ձեր գործակից . եւ եթէ երկուքը մեր առաքելալքն եկեղեցւոյ , եւ փառք Վրիստոսի » (Անդ . 23) : Այս գլուխիս մէջ ահա՛ այս երկու տունն բանն է որ Պ Մատթէոս կրնայ իր միտքին նպաստաւոր կարծել . ասոնց միտքը տեսնենք :

Նախ եւ առաջ վերջին խօսքը մե՛ն եմք . որովհետեւ դիտու հասկնալու բան մըն է : Ինքը Պ . Մատթէոս ալ դիտնալու էր սուրբն ինչո՞ւ յատուկ շնորհիւ անմիջ սպէս Աստուծմէ ընտրուեցաւ ինչպէս որ ինքը կըսէ . « Պօղոս առաքելալ ո՛չ ՚ի մարդկանէ , եւ ո՛չ ՚ի ձեռն մարդոյ , այլ ՚ի ձեռն Հիսուսի Վրիստոսի եւ Աստուծոյ հօր՝ որ յապարտոյց զնա ՚ի մեռելոց » (Իսղաթ . Ա . 1) : Արեւմն սուրբն Տիտոս ալ ինքը Պօղոս առաքելոյն հաւատար առաքելալ էր . ուրեմն ասոր ընտրութիւնը յատուկ աստուածային կոչումը էր : Ասոնց վրայ տարակոյս չը կրնար ըլլալ : Իսկ եպիսկոպոս ընտրուելուն վրայ խօսած եմք ասկէց առաջ : (Գրքն ՚ի վեր . հարտաւ . Ժ . Թ . 1) :

Վոյութիւնը աւետարանին մէջ եղող եղբօրը գանք : Չեանագրովը ի՞նչ պաշտօն առած ըլլալը իմանամք նէ՛ յեռնագրութիւնն ըսածն ինչ ըլլալը կիմացուի . եւ վերը տեսանք թէ բանը եկեղեցիներէն , ինչնքն հաւատացեալներէն պաղեստինու աղքատներուն համար տուրք տալովելու վրայ էր : Այս պաշտօնիս համար քահանայ կամ սարկաւազ ըլլալ պէտք չէր . եւ թէ որ այս եղբայր ըսածը Վուկաս աւետարանիչն էր նէ՛ անկէց առաջ քահանայ ձեռնադրուած պիտի ըլլայ : Բայց մենք այդ

ենթադրութեանը չեմք վստահիր. եւ կըսեմք թէ հոս յեւնացիք ըստ-
 ծը սուրբ առաքելոյն յեւն հասանութեան տալ ըսածին պէս է. (Գաղատ.
 Բ. 9), այսինքն՝ մէկ լոկ հաճութիւն մըն է որ այն եղբայրը տուրքե-
 րը ժողովէ. որ անոր հաւատարիմ ըլլալուն վկայութիւն տալ ըսել կըլ-
 լայ: Թէ որ Պ. Մատթէոս այս բացատրութիւնս չընդունի նէ՝ իր
 հասկըցած մտքովը ուրիշ հասկըցողներ կուզեմք հին հայրերուն մէջէն.
 վասն զի սուրբ գրքին մէկ մութ խօսքին ճշմարիտ եւ հարազատ իմաս-
 տը եկեղեցւոյ աւանդութիւնը կը սովորեցընէ. որուն աւանդապահ են
 սուրբ հայրապետները: Մենք այժմէն իրեն ըսենք, որ եկեղեցւոյ
 հաստատութենէն մինչեւ լութերի ազանդը ծագած ատենը բնաւ լըս-
 ուած չէր որ ամէն ժողովրդեան բազմա թիւնը մէկ տեղ դայ եւ մէկը
 սարկաւազ կամ քահանայ ձեռնադրէ: Ասոր հսկանակը ցուցունելու հա-
 մար՝ Ալաբանդեանցը մաշտոցին մէջէն սա՛ խօսքը գտեր էր որ եպիս-
 կոսոսը կըսէ. « ես դնեմ զձեռս ՚ի վերայ սորա, եւ դուք ամենեք-
 « եան աղօթս արարէք », բայց մենք Ալեքսիին ՏԴԹ ուոյն մէջ ցուցու-
 ցինք որ այդ վկայութենէն օգուտ չկրնար քաղել. որովհետեւ ժողո-
 վուրդը չհրաւիրեր որ քահանայացոյին վրայ իրեն հետ ձեռք դնէ. այլ
 միայն աղօթքնին կը խնդրէ: Թէ որ առաքելալը յեւնացիք յիշեցնայն
 ըսեր նէ՝ քիչ մը ջուր կը վերցընէր խօսքը. բայց որովհետեւ ձեռ-
 նադրութիւնը մէկ անգամ մը միայն կըլլայ. եւ մէկ ձեռնադրեալ
 մարդ մը՝ ո՛ւր որ երթայ նէ նորէն այն տեղի ժողովուրդէն մէկ մըն
 ալ չձեռնադրուիր. ուստի հոս յիշեցնեաց յոգնական բառը մեր տուած
 մեկնութեան հաստատութեանը վկայ եւ ապացոյց մըն է:

Բ. Արմ. Ժ. 18: « Օ, ի ո՛չ եթէ որ զանձն իւր ընծայեցուցա-
 « նէ՛ նա՛ է ընտրեալ, այլ զոր տէրն ընծայեցուցանէ », Այս խօսքիս
 կէսը միայն ասկէց առաջ վկայութեան բերած էր (հաստատ. ԺԿ):
 մենք հոն լմանը դրինք եւ պէտք եղած բացատրութիւնը տուինք:

Գաղատ. Գ. 27-29: « Արք միանգամ ՚ի Վրիստոս մկրտեցա-
 « րուք, զՎրիստոս զգեցեալ էք, չիք խտիր ո՛չ հրէի եւ ո՛չ հեթա-
 « նոսի. ո՛չ ծառայի եւ ո՛չ աղատի. ո՛չ արուի եւ ո՛չ իգի. զի ա-
 « մենեքեան դուք մի էք ՚ի Վրիստոս հիսուս: Ապա եթէ դուք Վը-
 « րիստոսի էք, ուրեմն Աբրահամու զաւակք էք. ըստ աւետեացն ժա-
 « ուանդք », Այս տեղը ասկէց առաջ ալ փարենթազիզի մէջ ցուցուցեր
 էր. (հաստատ. ԺԿ) մենք ալ ըսելիքնիս հոն ըսինք.

Բ. Թեոսաղ. Գ. 6-14: Աշխարհաբարը դնեմք՝ քիչ մը երկան-
 կէկ ըլլալուն համար: « Մեր տէր հիսուս Վրիստոսին անունովը
 « ձեզի սրտուէր կուտամ ե՛ղբայրներ. մեզնէ առած աւանդութիւններ-
 « նուդ չհամաձայնելով ստահակութեան ճամբայ ընտղ ամէն եղբայրէ

« ետ քաշուեցէ՛ք: Այսն զի դուք ձեզնէ զիտէք թէ ի՞նչպէս պէտք
 « է մեզի նման ըլլալ, որ ձեզի դէմ բնաւ ստահակութիւն չըրինք. եւ
 « մէկին ալ հացը ձրի չկերանք. այլ ձեր մէկին ալ բեռ չըլլալու համար
 « ջանքով ու աշխատանքով զիշեր ցերեկ կը լւանէինք. չէ՛ թէ իշխա-
 « նութիւն չունէինք, այլ անոր համար որ մեր անձը ձեզի օրինակ
 « տանք, որ մեզի պէս ըլլաք: Այսն զի ձեր քովն եղած ատեննիս
 « ալ ձեզի այս պատուէրը կուտայինք որ չբանողը չուտէ՛ ալ: Հիմայ
 « ձեզնէ ոմանց համար կը լսեմք որ ստահակութիւնով կերթան. բան
 « մը չեն բանիր. այլ ծուլութեամբ հետաքրքիր եղած կը պտրտին: Այ-
 « նանկներուն պատուէր կուտամք ու տէր Հիսուս Վրիստոսով կաղա-
 « չեմք որ հանդարտութիւնով բանին ու իրենց հացը ուտեն. բայց
 « դուք ե՛ղբայրներ՝ բարիք գործելէն մի՛ ձանձրանաք: Բայց թէ որ մե-
 « կը մեր այդ թղթովը խօսքերնուս չհնազանդի՝ նշան դրէք անոր, ու
 « հետը մի՛ ընտանութիւն ընէք, որ ամբնայ: Ասոր մէջ ալ Պ.
 « Սատթէոսին ուղածին պէս բան մը չկայ: Այս այն ստահակութեամբ
 « գայողը Պօղոս առաքելոյն խօսքին չհնազանդի նէ՛ Պօղոս առաքելալը
 « անիկայ կը դատապարտէ. ըսել է որ անոնցմէ կուզէ որ հնազանդութիւն
 « ընեն: Այս զրուցուածքը ծառայի բերան վայլելու զրուցուածք չէ՛. որ-
 « կէց կը հասկըցուի որ առաքելալը անոնց հրամայելու իշխանութիւն ու-
 « նէր: Հանցաւորին վճիռն ալ կուտայ, թեսաղոնիկեցիներուն չձգեր. իր
 « տուած վճռոյն գործադրութիւնն է միայն՝ որ անոնցմէ կուզէ:

Ա. ՏԻՏ. Վ. Ասիս զիտնալ պէտք է որ այս նամակս սրբոյն
 Տիմոթէոսի կը գրէ, որ Ափեսոսի եպիսկոպոս էր. ըսել է որ մէկ ե-
 « պիսկոպոսի մը ուղղած են ասոր խօսքերը. եւ ի՞նչ բան որ կապսպը-
 « րէ նէ՛ անոնք ըսելը կամ գրածին պէս ըլլալուն փոյթ տանիլը եպիս-
 « կոպոսի կը յանձնէ. աշխարհականի վերաբերեալ բան չկայ: Բայց
 « մենք համառօտելով տեսնենք թէ Ա. Տիմոթէոսի թղթոյն Վ. զլիսոյն
 « մէջ ի՞նչ կայ: Ասիս պատուէրներ կան թէ եպիսկոպոսները ի՞նչպէս
 « պիտի ըլլան. եւ եկեղեցւոյ մէջ վերակացու ըլլալն ալ ասոնց պաշտօնն
 « ըլլալուն՝ կը պատուիրէ որ առաջ իրենց տանը աղէկ վերակացութիւն
 « ըրած ըլլալին՝ Աստուծոյ տանն ալ վերակացու ըլլալու բաւականու-
 « թիւն ունենալուն նշան բռնուի. եւ այս կէտը Պ. Սատթէոսին ու-
 « զածը չէ՛: Սարկաւագներուն ալ պատուէր տալէն ետքը անոնց ամուս-
 « սիններուն ալ զատ պատուէրներ կը գրէ որ պարկեշտ եւ հաւատարիմ
 « եւ հեզ ըլլան. շարախօսութիւն չընեն: Արդեօք Պ. Սատթէոս աս-
 « կէց պիտի հետեւցընէ՞ որ սարկաւագներուն կնիկներն ալ այն ատենը ե-
 « կեղեցւոյ մէջ պաշտօն ունէին: Այսպէս բան մը ըսէ նէ՛ հայոց մեջ ծաղ-
 « րական բան մը ըսած կըլլայ. մեր ազգին ականջին բողոքովին նորալո՛ւր

է այդ : Ատքը կըսէ : քեզի ասո՞նք կը գրեմ որ պիտնաս թէ Աստուծոյ
 եկեղեցւոյ մէջը ի՞նչպէս պէտք է որ շրջես . այս եկեղեցին կենդանի
 Աստուծոյ եկեղեցի եւ ճշմարտութեան սիւն եւ հաստատութիւն կըսէ .
 վասն զի քրիստոնէական հաւատքը որ է նոյն իսկ ճշմարտութիւնը՝ այս
 եկեղեցւոյս մէջ անպակաս մնալովն է որ աշխարհի վրայ հաստատ կը կե-
 նայ . ուսուցանող եկեղեցին իր սովորներն իր կը շարունակէ : եւ ու-
 սանող եկեղեցին հնազանդութեամբ մտիկ կընէ ու կը հաւատայ , եւ
 այն հաւատքը անխախտ պահելու համար մեռնիլն անգամ աչք կառնէ :
 Թէ որ լոկ ուսանող եկեղեցիին մնայ բանը , կամ ուսանող եկեղեցին
 քան զուսուցանողը նախապատիւ եւ աւելի իշխանութեան տէր սեպուի՝
 ճշմարտութեան հաստատութիւնը ո՞ւր կը մնայ :

Ը . ՏԷՏ . Ե : Ասիւնթաց գլխոյն վրայ տուած ընդհանուր տե-
 ղեկութիւննիս յիշեցընելէն ետքը՝ մասնաւորապէս այս գլխոյս վրայ
 դալով մտքին համառօտ բովանդակութիւնն է այս : Արբոյն Տիմոթէ-
 ոսի եպիսկոպոսին կը պատուիրէ որ մարդ չպատժէ . այլ ամէնուն հետ
 ալ՝ իրենց աստիճանին համեմատ՝ քաղցրութեամբ վարուի , որով կեն-
 թադրէ որ դատողական իշխանութիւն ունի եպիսկոպոսը : Այրինքուն
 համար կանոններ կաւանդէ թէ ասոնցմէ որո՞նք եկեղեցւոյ ստակովը
 ապրելու են . եւ որո՞նք իրենց վաստակովը կամ իրենց զաւկըններուն
 վաստակովն ապրելու են : Այս ընտրութիւնս անգամ եպիսկոպոսին վը-
 րայ կը ձգէ : Ժողովրդեան շքտար : Այկեղեցւոյ վերակայութիւնը երէց-
 ներուն կամ քահանայներուն ձեռքն եղած կենթադրէ , երբ կըսէ . ա-
 դէկ վերակայու եղող երէցները կրկին պատուոյ արժանի կըլլան : Քա-
 հանայները դատելու իշխանութիւնը նոյնպէս եպիսկոպոսներուն ձեռքն
 եղած ենթադրելով՝ անոնց համար եղած ամբաստանութիւնը առանց
 երկու կամ երեք վկայի մտիկ չընել կը պատուիրէ . չըսեր որ անխախտ
 ամէն հաւատացեալներէն գումարուած ընդհանուր ժողովին ձգէ՝ ինչպէս
 որ Պ . Մատթէոս մեկնեց տեառն մերոյ խօսքը . այլ կըսէ թէ յան-
 ցանքի տէր եղողը ամէնուն առաջը յանդիմանէ՝ որ ուրիշներն վախնան .
 եւ թէ՛ որ այս ամէնուն առաջը ըսածը ընդհանուր ժողովին առաջը ըսել
 հասկընայ նէ՛ այնքան մեծ վնաս չունի . կրնայ օգուտ ալ ընել , երբ
 ընդհանուր ժողովոյ անդամները եպիսկոպոսական իշխանութենէ վախնան
 եւ ակնածութիւն ընեն : Չեռնադրութիւնը շուտով չընել կը պատուի-
 րէ . որպէս զի ուրիշի մեղքի հազորդ չըլլայ . որով կը ցուցընէ որ ձեռ-
 նադրելոյն ընտրութիւնը եպիսկոպոսին ձեռքն է . եւ անարժան մը ընտ-
 րէ նէ մեղքի տէր կըլլայ : Ատքը առանձին Արբոյն Տիմոթէոսի առող-
 ջութիւնը պահպանելու խրատ կուտայ . լոկ ջուր մի՛ խմեր , քիչ մըն
 ալ հետը գինի խառնէ կըսէ : Ահա՛ ասո՞նք են այս գլխոյս մէջի խը-

բատներն ալ թէ որ Վրիտոս սահմանադրական եկեղեցի հիմնած ըլլա-
լար նէ՛ սուրբ առաքելալը այսքան երկար բարակ բաներ գրելու չէր
սրբոյն Տիմոթէոսի . այլ միայն այսքանս բաւական էր ըսել . թէ որովհետեւ
եկեղեցւոյն կառավարութիւնը սահմանադրական է . եւ դուն անոր սահ-
մանադրական եպիսկոպոսն ես , նայէ որ դուն քու գլխուդ բան չընես .
ի՛նչ ընելու ըլլաս նէ ժողովքիդ հարցո՛ւր . եւ ժողովք՝ միայն քաղա-
քականը ճանչցիր . որովհետեւ կրօնական ժողովդ « բոլոր եկեղեցա-
կան դասուն եւ եկեղեցւոյ բոլոր անդամներուն վրայ լիակատար ,
« բացարձակ , անկախ եւ միահեծան իշխանութիւն վարելիք » որով եւ
բռնաւորական ժողովք մըն է . (այս խօսքերը Պ . Մատթէոսինն են .
Կորն . 12 . հարստ . 13 . 14) . ուստի երբ որ լոկ եկեղեցականի վերա-
բերեալ դատ մը գալու ըլլայ նէ՛ բոլորովին անոնց մի՛ հաւատար . կամ
վերջին վճիռը տալը քաղաքական ժողովքին ձգէ՛ . կամ թէ որ այս ը-
նելը դժուար ըլլայ նէ՛ քաղաքականէ եւ եկեղեցականէ յաղկացեալ
խառն ժողովք մը ըրէ . եւ վերջապէս՝ կրօնական դատերը առանց քա-
ղաքականին միջամտութեանը մի՛ ընեն : Ահա՛ այս՝ եւ ասոր պէս խրատ-
ներ տալու էր Տիմոթէոսի սուրբն Պօղոս , թէ որ եկեղեցւոյ կառա-
վարութիւնը Պ . Մատթէոսին հասկըցածին պէս հասկընար նէ : Այս
գոհութիւն Աստուծոյ . հիմա՛յ ալ անոր պէս հասկըցողները քիչ են
եւ երկու դրան մէջ մնացած են . իսկ աղքատն սահմանադրու-
թիւնը՝ կրօնական
բաներու վերաբերեալ դատաստանը մինակ կրօնական ժողովին , եկե-
ղեցականներուն համագումար ժողովքին , եւ Արարատեան մայր աթո-
ռոյն ձգեր է . իրեն քաղաքական մասին բնաւ բան մը չպահելով : (Տե՛ս
աղքատ . սահմանադր . 1 : 17 . 22) :

Եւր . ԺԸ . Ա՛յս գլուխս 40 համար կը պարունակէ . եւ հաւատոյ
գերազանցութիւնը օրինակներով կը ցուցընէ . Արէլ հաւատքով էր կը-
սէ որ կայնէն ալէկ զոհ կընէր Աստուծոյ . Անովք հաւատքով աշ-
խարհքէս փոխուեցաւ որ չմեռնի . Այս հաւատքով շինեց տապանը եւ
իր ընտանիքովը չօհեղեղէն ապրեցաւ . եւ այսպէս խել մը շարունակե-
լէն ետքը հին օրինաց սուրբերուն ըրածնին եւ քաջածնին կը պատմէ :
Աստիք ամենքն ալ հաւատքէն վկայութիւն առած են . յայց աւետիսը
տախաին ընդունած չեն կրսէ . Աստուած մեզի համար աւելի աղէկ սե-
պեց որ անոնք առանց մեզի կատարելութեան չհասնին : Ա՛նչ կայ ա-
ստնց մէջ Պ . Մատթէոսին ըսածին հաստատութիւն . թէ Վրիտոսի
եկեղեցւոյն կառավարութիւնը սահմանադրական է . հմայող (Ք . 22) կու-
զէ որ հմայելով գտնէ : Պ . Մատթէոս այս վկայութիւնս ալ վի-
ճակահան նայելու կերպով գտած է . որ հմայելուն մէկ տեսակն է :

Ե . Պետր . Ե . 3 : « Մի՛ իրբեւ տիրելով վիճակացն . այլ լի-

« Եւ զօրինակ հօտին », : Աուրք առաքեալը երէցներուն կամ եկեղեցա-
 կան մեծերուն կը խրատէ որ հօտին՝ այսինքն Վրիստոսի բանաւոր ոչ-
 խարներուն վրայ տըրեւու պէս չվարուին, այլ անոնց օրինակ ըլլան :
 « Պօղոս առաքեալն ալ այնպէս կընէր. ինչպէս որ ինքը կըսէ. « ո՛չ
 « ելձէ չունէաք իշխանութիւն. այլ զանձնս օրինակ արասցուք ձեզ
 « յամանողս լինել մեզ », (Բ. Թիմոթ. Գ. 9) : Աւրեմն սուրբ Պօղոս
 առաքեալին ըսածին նայելով սուրբ Պետրոս առաքեալին խօսքէն չհե-
 տեւիր որ երէցները ժողովուրդին վրայ իշխանութիւն չունին. միայն
 այնքանի է պատուէրը՝ որ իր իշխանութիւննին բռնականի չգարձընեն :
 Եւսքան են ահա՛ այն վկայութեանց կուտակութիւնը՝ որոցմով
 Պ. Աստիճոս ապացուցանել կուզէր թէ եկեղեցւոյ կառավարութիւ-
 նը սահմանադրական ըրաւ Վրիստոս : Արեք ալ եւսյն դրած է. բայց
 անոնց արժէքը ո՛չ ի՛նչ է. թէ որ Լեբոնիցաց ժ.Ը. գլուխին մէջ գը-
 տածին չափ բան մըն ալ ուրիշ տեղ գտներ նէ՛ այն ալ գլխահամարո-
 վը տընահամարովը կը նշանակէր անշուշտ. եւ որովհետեւ Լեբոնիցաց
 յիշեալ գլուխին մեջ գտածը իր նպատակին նկատմամբ ոչինչ է՝ ինչպէս
 տեսանք, եւսններուն ալ երէքին մէկէն արժէքին գումարը ոչինչէն
 պակաս կը մնայ :

Ա՛նք բերած վկայութիւններուն մէջէն իրեն հաւտացընել ու-
 զածին հակառակը գտանք. ամեն կողմ մի սղետական կառավարութեան
 նշան : Պօղոս առաքեալը՝ միութիւնը քակտողներուն եւ հերձուած
 տածողներուն գաւազան կը ցուցընէ՝ որ ամէնը իրեն հնազանդեցընէ՛-
 բուր Արետէ կղզին մինակ մէկ Տիտոսի ձեռք կը յանձնէ որ պակաս-
 ները շիտկէ եւ ամէն տեղ եպիսկոպոս եւ քահանայ դնէ. եւ անոնց
 արժանի եղողները գտնելու համար խրատներ կաւանդէ. անոր պէս խը-
 բատներ Տիմոթէոսի ալ կուտայ. եւ եկեղեցւոյ ստակովը ապրելու ար-
 ժանի եղող այրիներուն ընտրութիւնն անգամ ժողովուրդին չհաւատար,
 Տիմոթէոսի կը յանձնէ. սորք Վրիստոս առաքեալը ժողովուրդեան վրայ
 իշխանութիւն ունեցող երէցներուն կը պատուիրէ որ ժողովուրդեան վրայ
 բռնական տիրապետութիւն չբանեցընեն : այլ անոնք « բռնեցէ՛ + կըսէ.
 որով ժողովուրդը ոչխարի կը նմանցընէ. եւ այս նմանութենէս բնաւ
 չհետեւիր որ եկեղեցական գլուխները ժողովուրդեան վրայ իշխանութիւն
 չունենալէն զատ՝ ժողովուրդը անոնց վրայ իշխանութիւն ունի : Եւն
 ատենը, սուրբ առաքելոյն ցուցուցած նմանութիւնը բռնելով ըսելու
 կըլլար թէ ո՛չխարները իրենց հովիւներուն վրայ իշխանութիւն ունին.
 եւ հովիւներուն մէջ դատ մը եւ վէճ մը պատահելու ըլլայ նէ՛ այն
 վէճին դատաստանը ոչխարներուն ատենը պիտի տեսնէ եւ վճռէ. որ
 վերջին ծայր անտեղութիւն մըն է : Եւ ասոնք մեզ ուրիշ վկայութիւն-

ներու կարօտ չընելով՝ բաւական կը ցուցընեն թէ եկեղեցւոյ կառավարութիւնը ճիշդ միապետականի կ'ըլլայ ունի:

Սուրբ գրքէն առնելով սուրբ Վուսաւորիչ հայրն մեր ալ՝ եկեղեցւոյ կառավարութիւնը միայն եկեղեցականաց ձեռքը կը ծանշնայ երբ կըսէ. « զաւետարանին գործակիցսն զքահանայս սուրբս եւ զպաշտօն-
« եայս եկեղեցւոյ որք սպասաւորք են սրբութեանցն հրեշտակային
« կարգաւորութեամբն, ո՛չ վարկպարազի համարեսցուք. այլ որպէս
« Մատուծոյ կարգեալք 'ի փրկութիւն հաւատացեալ ժողովրդեանն
« Մատուծոյ, » (Հոմ. Ի. Էբ, 254. րդ. կոմ. 1824):
Ուրիշ տեղ մըն ալ ասոնց աստիճանը կը նշանակէ, որով կարգաւորարմէ վեր են. եւ ամենէն վերն է ժամանակին հայրապետը. եւ ամենն ալ իշխանութիւննին անկէց ունին. « Չեզ հովիւ եւ վարդապետ 'ի տու-
« շութենէ բարերարութեանն Մատուծոյ՝ երեւեսցին ձեզ առաջնորդք,
« քահանայապետք տեսուչք. եպիսկոպոսք՝ իրիցամբք, եկեղեցակարգք Լու-
« սաւորութեանց սիրոյն Մատուծոյ, եւ այդ ամենայն երթիցէ 'ի սպաս
« փառաւորընկալ սեղանոյն 'ի յիւն Կաթողիկոսի կացելոյ, » (Մատուծ. Էբ. ԸՊ. Էբ. 568, 569):

Մտնք տեսնելով ի՞նչպէս ըսեմք թէ ասոնց դրութիւնը ռուսօ-
յինն է կամ սօսիալիսդներուն կամ կարմիր հասարակապետականներուն կամ քոմիւնիսդներուն, երբ լաւ գիտեմք որ աստուածահաստատ միապետական դրութիւն է. եւ բուն հեղինակն է տէրն մեր՝ որ ըսաւ.
« ձայնի իմում լուիցեն, եւ եղիցին թի հօր եւ թի հօշի, » (Ես. Ժ. 16):
Պուն հօտը մէկ կը ճանաչես. հովիւները կը շատցընես. մանաւանդ թէ նոյն իսկ հօտին ոչխարները հօտին հովիւ կընես: Մտր կը վայելէ այն ըսած անուններդ. «...» ի զրոհիւն. կորիւր հասարակապետական. եւ այլն:

Մէկ բառ մը մոռցեր էիր ըսելու. այն ալ ես միտքդ ձգեմ:
Ըս քու դրութեանդ անհասարակութիւնն պիտի ըսեմ. որովհետեւ դուն ժողովուրդը աստուած կը կարծես. (Գե. 'ի վեր. հասարակ. Ժ. 13):
Եւ կըսես թէ քուէից առաւելութեան մէջն է միայն Մատուծոյ ձայնը (Գե. Մ. 7):
Մենք գիտեմք որ Մատուած իր կամքը մարդարէներուն յայտնեց եւ անոնց բերնովը խօսեցաւ. հիմայ մարդարէ չկենալուն համար կը կարծես թէ այդ գերբնական շնորհքը քուէներու առաւելութեան տրուեցաւ:
Մէկը Մատուծոյ կողմէն բան մը խօսելու ըլլար նէ անկէց հրաշք կուզէին որ ըսածըն հաւատան: Հրեայները՝ որոց համար ըսիր թէ Կաթողիկոսիւնը ինչ ըլլաւ ինչպէս գիտէին (Գե. 'ի վեր. հասարակ. Ժ. 13):
Երբ Վրիստոս անոնց խելքէն վեր բաներ կը զրուցէր նէ՛ չէին ըսեր. քանի՛ քուէ վաստըկած ես որ քեզի հաւատամք. այլ կըսէին. « Ղի՞նչ

« նշան առնիցես, զի տեսցուք եւ հաւատացուք » (Յ-է. Օ. 30) .
 Արք Մատուած Ս՝ ովսէսը Փ սրաւոնի խրկեց, եւ Ս՝ ովսէս անոր ը-
 սաւ. թէ որ չհաւատայ փարաւոն թէ քու կողմէդ կերթամ, անոր
 ի՞նչպէս հաւատացնեմ. չըսաւ թէ իսրայէլացիներէն քուէ ժողովէ՛ եւ ա-
 նոնց քուէից առաւելութեամբը ատիկայ հաւտացուր, այլ հրաշք գործե-
 լու կարողութիւն տուաւ : Այլ հրամանքդ ի՞նչ կըսես Պ՝ : Ս՝ ատթէ-
 լոս. երբ քահանայապետները եւ փարիսեցիները ամէնը մէկէն Վրիս-
 տոսի համար Պիղատոսին գացին մոլորեցուցիչ է ըսիննէ՛ աղէկ գիտե՛ս
 թէ բանը քուէի ձգելով քուէից առաւելութիւն չէին վաստըկեր. եւ այս
 առաւելութիւնը վաստըկելին զիտնաս նէ գուն ալ անոնց ձայնակից
 պիտի ըլլաս : Ի՛այց յայտնի է որ հրէից շատ եւ անթիւ բազմութիւն՝
 Վրիստոսի համար մոլորեցուցիչ է կըսէին : Սուրբ Պ. զոս առաքեալը
 Մթէնք քարոզած ատենը բանի մի հոգի միայն հաւատքի եկան կըսէ
 սուրբն Պ. ուկաս. (Վորժ+ . Ժ. 1; . 34) . դուն ասոնց մէջ քուէից առա-
 ւելութիւնը չհաւատայողներուն կողմը տեսնելով սրբոյն քարոզութեա-
 նը ինչի՞ ձայն պիտի ըսէիր. երբ քուէից առաւելութեան մէջ Մատու-
 ձոյ ձայն կը ճանչնաս : Ս՝ արդոց բազմութեան ձայնը Մատուծոյ ձայն
 ճանչնալը՝ այն բազմութիւնն ալ Մատուած ճանչնալ է. եւ ահա այս
 է ամենաստուածեան հայհոյութիւնը որ քու վրայդ կը տեսնեմք. եւ աս-
 կէ առաջ ալ ակնարկիցի՛ք (Գե.՝ Է. վեր. հարստ. Ժ. 1) :

Ս՝ ենք քուէներուն բազմութիւնը՝ ժողովրդեան մեծագոյն մասին
 հաճութեան կամ տհաճութեան նշան կը ճանչնամք. եւ սահմանադրու-
 թիւնը քուէներու վրայ ո՛րքան ուժ ենթադրեր է նէ՛ անկէց աւելի
 բան չեմք գիտեր : Սահմանադրութիւնը քուէից մեծ առաւելութեամբ
 ընդունուած ըլլալուն համար ազգովին ընդունուեցաւ ըսուելու իրաւունք
 կայ : Թէ որ քուէից առաւելութիւնը Մատուծոյ ձայն ըլլար նէ՛ ատի-
 կայ Մատուծոյ մեծարարբաւ ձայնը ըլլալու էր. բայց Պ. Ս՝ ատթէս
 մեր Մատուածը շտապիր, որ խօսքը վերաքննութեան եւ փոխելու կա-
 րօտ ըլլայ. քուկինդ ի՞նչպէս աստուած է որ քուէարկութեամբ յայտ-
 նած կամքը՝ յայտնելէն երէք օտարի ետքը քննութեան տակ ձգելու
 պիտի ելլես. Ա՛հա՛ ասոնց համար է որ դուն եւ քու քուէական ան-
 ճոռնի դրութիւնդ՝ անունը տուած աղանդներէդ զատ միաստուածիւնն
 ալ կը պարունակէ :

Ի՛այց հատուածին վերջը գրիր էիր մէկին համար որ տասնութներ
 դար յառաջ բոլոր հրէաստան տակնուվրայ ըրաւ. եւ քահանայապետ-
 ներուն չարաչար ի՛ գործ դրած եւ նուաստացուցած իշխանութիւնը կոր-
 ծանեց : Ս՛վ է այն. խօսքիդ կարգէն կերեւի որ բովանդակներուն դը-
 րութիւնն է. բայց ասոնք որքան հին ալ ենթադրուին նէ՛ շրէաստանի

հետ բան չունին։ Արիշ կարծիք մը կրնամք ունենալ, բայց քու պատ-
 ոյդ համար կը փափաքիմք որ սուտ ըլլայ այս կարծիքնիս։ Կրնայ ըլլար
 որ այս ետքի կտորը առաջինին հետ կցուի, եւ ըսելիէ բառէն մինչեւ
 «կէք»-ընէ է բառը փարենթազիզի մէջ առնուածի պէս հասկըցուի. այն
 ատենը այդ բառը հրէասարան ասին ու ըստ ըստ կը ըլլայ նոյն ինքն Տէրն
 մեր. եւ քուէ մըն ալ դուն տուած կը ըլլաս հրեայ քահանայապետներուն
 եւ դպիւններուն եւ փարիսեցիներուն, որ Վրիստոսի համար Պիղատոսի
 քսին. «խռովէ՛ զժողովուրդս. ուսուցանէ՛ ընդ ամենայն հրէաստան.
 «սկսեալ ՚ի Վալիլէէ մինչեւ ցայսօր», (Ղ. Գ. Ի. Ե. 5.) Թէ որ այն
 ատենն ըլլայիր նէ՛ Վրիստոսի ամբաստանողներուն մէկն ալ դո՛ւն պի-
 տի ըլլայիր, որ ասոնցմէ տասն եւ ինն՞ դար ետքը ել՛ր անոնց ըսած
 կը կրկնես։ Միտքդ այս ըլլալուն քիչ մը աւելի նշան կուտայ հետեւ
 եալ հատուածը։

ՀԱՏՈՒՄԺ ԻԲ.

Պ. ՄԱՏԹԷՈՍ

Հրէից ազգին միապետ քահանայապետները ըստ իրենց միապետական կա-
 ուավարութեանը եկեղեցւոյ մէջ խտրութիւններ ունէին. քահանայի եւ
 աշխարհականի, արուի եւ իգի, հրէի ու հեթանոսի մէջ. իշխանք կամ
 քահանայք տէր էին ու ժողովուրդը ծառայ. բայց Քրիստոս մի միայն
 այս միապետութիւնը կործանելու, այս խտիրը բառնալու եւ իր սահ-
 մանադրութիւնը հաստատելու համար եկաւ՝ որով այդ իրարմէ առաւել-
 լութեան ու նուազութեան աստիճանները եւ միջնորմները քակեց. եւ
 Նալքանդեանցին ըսածին պէս հասկըցուց բոլոր մարդոց, թէ մարդիկ հա-
 լասար իրաւունքներով դուրս եկան Աստուծոյ ձեռքից, եւ զամէնքը ՚ի
 մի յազգ եւ ՚ի քահանայութիւն սուրբ՝ միաւորեց, եւ ամէն բանի
 եւ դերագոցն իշխանութեան տէր ըրաւ մի միայն անոնց անխտիր հա-
 մախուժքը. եւ այսպէս կազմեց իր այս սուրբ հասարակապետութիւնը.
 Եթէ ասոնք ասանկ է, ապա ուրեմն Քրիստոսի եկեղեցւոյն կառավա-
 րութիւնն ալ սահմանադրակա՛ն է. սահմանադրակա՛ն. եւ ո՛չ մի-
 ապետական. Փա՛ռք մեր հիմնադրին։ Աւստի եւ Թադէոսի կամ Պետ-
 րոսի օրը սահմանադրական եղածը՝ Սարգսի կամ Պիոսի օրը միապետա-
 կանի չկրնար փխուիլ. եւ զայն սահմանադրական չէ՛ ըսել կամ
 միապետականի փոխել ուզելն, եւ կամ փոխել ուզողներուն թէ՛
 բանիւ, թէ՛ գրով, թէ խորհրդով եւ թէ՛ գործով, համախոհ ու գործա-
 կից գտուիլն, եւ եկեղեցականը առիթ բռնելով՝ ազգային քաղաքական
 սահմանադրութեան դէմ կենալ եւ ժողովուրդին մշանջենաւոր թշուա-
 ութեանը պատճառ ըլլալն ալ մեծ եւ անթողլիմահացու մեղք. թո՛ղ
 դատէ ամէն ողջամիտ անձն՝ այս ըսածներնիս։
 Ահաւասիկ մեր՝ եւ ամէն Հայաստանեայց եկեղեցւոյ հարազատ զաւա-
 կացը համոզուամը։

Վ. Պօլիս.

Մ. Մ. ԱՅՎԱՏԵԱՆ

Ի՞նչ տարաշխարհիկ տեղեկութիւններ ունի Պ. Մատթէոսը . մինչեւ անգամ մեր տղայութեան ժամանակէ տոլրած քրիստոնէականը կարող պիտի ըլլայ սրբագրելու : Վրիստոս ինչո՞ւ համար մարդ եղաւ . մարդիկ տատանայի գերութենէն փրկելու եւ յախտենական փառաց արժանի ընելու համար : Պ. Մատթէոսին հարցո՞ւ . նայէ՛ ինչ պատասխան կառնես : « Վրիստոս մի միայն այս (հրէից քահանայապետներուն) «միապետութիւնը կործանելու , այս խտիրը բառնալու եւ իր սահմանները հաստատելու համար եկաւ » կրսէ : Ի՞նչ չգիտեմ ի՞նչ կը պատասխանէ երբ մէկը իրեն հարցնէ թէ չէ՞ր կրնար արդեօք Մատուած այս պաշտօնը կամ (ինչպէս որ ինք կրսէ) միապետութիւնը լոկ մարդու մը ձեռքով վերցընել , որ լոկ մարդու մը՝ Մովսէս մարդարէի մը ձեռքով հաստատեց , եւ ետքը կռապաշտ հռոմայեցիներուն ձեռքը բնաջինջ ըրաւ քահանայապետութիւննին ալ , զոհերնին ալ , տաճարնին ալ : Տէրն մեր ինքն անձամբ սշխարհք եկերէ անանկ բանի մը համար՝ որ ինքը զլուս շհանեց . իր համարձմանէն քառասուն տարի ետքը հռոմայեցիները կատարեցին նոյն բանը :

Ի՞նչ յանցանք ունի եղեր քահանայապետութիւնը : Խրտութիւններ ունի եղեր քահանայի եւ աշխարհականի . արուի եւ իգի . հրէի եւ հեթանոսի . Եւ տեառն մերոյ աշխարհք գալուն մէկ նպատակն ալ այս է եղեր : Արեւմն հիմայ քահանայի ու աշխարհականի մէջ խտիր չկայ . քահանայն ինչ է նէ՛ աշխարհականն ալ այն է . աշխարհականներն ալ քահանայի գործ պիտի կրնան ընել ասոր խօսքովը կամ թէ ամէն մարդ ամէն բան կրնայ ընել եղեր : Երդեօք Պ. Մատթէոսը պատարագ ըրած կամ քահանայ ձեռնադրած կամ մեր քահանայներուն յատուկ եղած գործերէն բան մը ըրած ունի՞ : Թէ որ ծշմայիտ է նէ նամակին վերջն ըսածը , թէ իրեն եւ ամէն հայաստանեայց եկեղեցւոյ հարազատ զաւակացը համոզումը այս է , երբեմն այդպէս բաներ ալ ընելու ելելու էր . այն ժամանակը բարեպաշտ ժողովուրդէն լուր մը կառնէր թէ եկեղեցւոյ համոզումը եւ հաւատքը ի՞նչ է :

Ի՞նչ մէք քահանայի եւ աշխարհականի խտիրը նոյն իսկ սուրբ գրոց մէջ . եւ յանուանէ՛ սրբոյն Պօղոսի թղթոցը մէջ գտանք : Ի՛նչ չէ՛ թէ միայն քահանայ եւ աշխարհական , ալ եւ ուրիշ աստիճանաւորներ ալ կը ցուցընէ , եւ կրսէ ալ թէ Մատուածոյ իր եկեղեցիին մէջ դրածներն ասոնք են : « Օ՞րս եղն Մատուած յեկեղեցւոջ՝ այս են . նախ զառաքեալս , երկրորդ զմարգարէս , երրորդ զվարդապետս » եւ այլն . ետօտ եր հարցընէ . մի՛ թէ ամենեքին առաքեալք իցեն . մի թէ

« ամենեքին մարգարէ՞ք իցեն . մի թէ ամենեքին վարդապետք իցեն » .
 (Լ. . կարգ. . Եր. . 28 . 29) . Սուրբ առաքելոյն այս հարցմանը Պ .
 Սատթէոս « յո՛ւ պիտի պատասխանէ . ամենն ալ առաքեալ են . ամենն
 ալ մարգարէ են . ամենն ալ վարդապետ են պիտի ըսէ . եւ պատճառն
 ալ պիտի տայ . վասն զի Լ. ստուած այս խտիրը վերցընելու համար ի-
 նչ էր որ աշխարհք եկաւ . Ի՞նչ կըսես . սուրբ առաքեալը կըսէ որ
 եկեղեցւոյ մէջ պէսպէս պաշտօնեայններ դրաւ հաւատացեալներուն հաս-
 տատութեանը եւ պաշտաման գործոյն եւ Վրիստոսի մարմնոյն շինու-
 թեանը համար (Լ. Գ. . Գ. . 11 . 12) . որով այս պաշտօնեայնները աշ-
 խարհականներէն կը տարբերին . Պ . Սատթէոս կըսէ Վրիստոս այդ-
 պիտի խտիրները վերցուց . եկեղեցական եւ աշխարհական մէկ են .
 Դու որո՞նք խօսքին կը հաւատաս ընթերցո՞ղ :

Լ. րուի եւ իգի մէջ եղած խտիրն ալ վերցուցեր է Վրիստոս՝ Պ .
 Սատթէոսին ըսածին նայելով . բայց սուրբ Պօղոս առաքեալը երեւե-
 լի խտիր մը կը ցուցընէ ասոնց մէջը . Եկեղեցեաց մէջ քարոզուի ինչ ը-
 նելու վրայ կարգադրութիւններ ընելով կըսէ . « կանաք յամենայն եկե-
 « ղեցիս լուռ լիցին . զի ո՛չ հրամայի նոցա խօսել . այլ հնազանդ լի-
 « նել , « բայէ » է- օրէնքն է-ի « տն » : Լ. պա եթէ ուսանել ինչ կամ յիշ , 'ի
 « տան զարս իւրիանց հարցանիցեն , քանզի անպատեհ է կնոջ մարդոյ
 « յեկեղեցւոջ խօսել » (Լ. . կարգ. . Եր. . 34 . 35) . Տեսա՞ր Պ .
 Սատթէոս օրէնքն ալ ասանկ կըսէ եղեր . բրիստոնէական եկեղեցւոյ
 համար ալ Պօղոս ասանկ կըսէ . ուրեմն այս խտիրն ալ վերցած չէ՝ ե-
 ղեր : Վրիստոսի վերցուցած բաները սուրբ Պօղոս առաքեալը աղէկ
 գիտէ թէ դուն :

Շրեայի եւ հեթանոսի ալ խտրութիւն կայ եղեր հրէից մէջ . ը-
 սաւ Պ . Սատթէոս . եւ բրիստոնէից մէջէն այս ալ վերցեր է : Լ. սոր
 վրայ սա պիտեմք որ՝ օտար ազգէ մէկը (որ հեթանոս ըսածն է) հրէից
 հաւատքը ընդունէր եւ թլփատուէր նէ՝ հրեայներէն բնաւ ատարբու-
 թիւն չէր տեսնար . մինչեւ անգամ հրէից ազգին հետ խնամութեամբ
 ալ կը միանար : Լ. յսպէս են էրիկ մարդոցմէն Սերիա Վ' ետացին , որ
 ինչպէս մականունն ալ կը ցուցընէ՝ քանանացիներուն քետացի ցեղէն էր .
 բայց ինքը իբրեւ բուն հրեայ սեպուած էր : Եւ կնիկ մարդոցմէն Շը-
 ոութ Ս' ովաւացին , եւ Ռախաբ քանանացին , որ հրէի հետ ամուս-
 նանալով նոյն ազգին խառնուեցան : Ս' էր է ասոնց մէջ հեթանոսի խըտ-
 րութիւն :

Երգեօք պիտի ըսե՞ս որ ասոնք հրեայ կըլլային եւ այնպէս հրեայ-
 ներուն հետ կը խառնուէին . իսկ հեթանոս մնալով հրեայներուն հետ
 չէին կրնար խառնուիլ . եւ այս խտիրը վերցուց Վրիստոս : Լ. սանկ ը-

սելով ըսել կուզես թէ հեթանոսն ու քրիստոնեայն մէկ սեպելու է եկեղեցւոյ մէջ. թէ՛ եւ հեթանոսը քրիստոնէութիւնն ընդունած չըլլայ՝ Այդ խտիրը՝ մենք ուղղափառ քրիստոնեայքս կըսեմք թէ Վրիստոս չը վերցուց. մանաւանդ թէ արքայութեան արժանի ըլլալու պայման դրաւ հաւատալն ու մկրտուիլը: « Ար հաւատայ եւ մկրտիցի՝ կեցցէ » (ԱՊՍՈՍ. Ժ. Գ. 15): Իսկ հեթանոսներն ու հաւատացեալները խառն ՚ի խուռն անխտիր արքայութիւն խրկողը Վրիստոս չէ՛. Օլուինկի անուն աղանդապետն է. եւ դուն՝ Պ. Մատթէոս, ասոր գիրքը մեծ սիրով կարդացած պիտի ըլլաս որ ասոր ըրածը Վրիստոսի ըրած կարծեր եւ. որ մըն ալ ասոր գիրքերուն համար Վրիստոսի աւետարանն է պիտի ըսես: Աստի այս հատուածիդ մէջ մինակ՝ այնքան սուտ կայ, որ բոլոր նամակիդ արժանաւոր վերջաբան ասկէ, զատ չէիր կրնար վալիցընել:


Ըսածներուս՝ Պ. Մատթէոսէն եւ դոնամիջեան հերետիկոսական ժողովակէն զատ ամէնքն ալ համոզուած կըլլան որ Վրիստոսի եկեղեցւոյ կառավարութիւնը միապետականի դրութեամբ է. եւ Պ. Մատթէոսին մեծարեական բացսգանչութիւնով « հմանադրուի » է սահմանադրուի » պօռալը խեր չընել. աշխարհիս մէկ ծայրէն մէկալ ծայրը սահմանադրուի » բառով լիցընէ ալ նէ՛ այդ բառին մէկ գիրն անգամ Վրիստոսի եկեղեցւոյն չվերաբերիր: Այլ որովհետեւ ամենաստոյգ է որ տէրն մեր իւր սուրբ եկեղեցին իր գերագոյն տնօրէնութեանը տակ միապետական կառավարութիւն ըրաւ. Պ. Մատթէոսին Վրիստոս սահմանադրուի » ըրաւ ըսելէն ետքը փառք մեր հիմնադրին պօռալը հայհոյութիւն է. թէ՛ Վրիստոսի համար առնուի, որուն փառք շտալ ըսել է՝ եկեղեցին իր ըսածին պէս ըրած չըլլալուն համար. եւ թէ՛ իրեն ու իրեններուն մասնաւոր հիմնադրին վրայ առնուի, դարձեալ հայհոյութիւն է. որովհետեւ աղանդապետի մը փառք տուած կըլլայ, որուն եկեղեցիէն նզովիւք եւ բանադրանօք մերժուիլը յաւիտենական նախատինք է:


Այսպիսի խնդիրները ազգային քաղաքական սահմանադրութեան հետ բան չունին՝ որ կրօնականի շխառնուիր եւ չկրնար ալ խառնուիլ. կրօնական բաները քաղաքականէն բոլորովին զատ են. եւ այնպէս ըլլալու են: Այդին սշտնջեմաւոր թշուառութիւն կըլլայ այն ատենը՝ երբ որ եկեղեցին անկարգութեան զոհ ըլլայ եւ քաղաքականին խառնուի, որ քաղաքականին մէջ ընկղմիլ ըսել կըլլայ. որովհետեւ մեր ազգը չէ՛ թէ քաղաքական՝ այլ կրօնական ազգ մըն է. եւ ազգայնոց հաւատքը պակսելով ազգն ալ կը տկարանայ եւ իր կործանմանը կը մօտենայ: Վիտուութիւն ալ պէ՛տք է մեր ազգին. բայց զարգանալնիս եւ զօրանալնիս գիտութիւնով չըլլար. մեր ազգութեան հիմը՝ որ է կրօնքը, խախտի նէ, ազգութիւնն ալ կը խախտի. որովհետեւ անոր տեղը գնելու ուրիշ հիմ չունի:

Մինչեւ հոս՝ Գ. Մատթէոս. ինչ հերետիկոսութիւններու մէջ
 իյնալդ տեսանք. բայց քեզի բան մը ըսելու իշխանութիւն չունիմք.
 ազատ ես. ուզած հաւատքիդ կրնաս ծառայել. բայց թէ որ ազգդ կը
 սիրես նէ՛ ազգային հասարակաց գործերու մէջ մի՛ մտներ, քեզ ընտ-
 րող ըլլայ նէ բնաւ անթ չէ՛, մանաւանդ թէ առաքինութիւն ալ կը
 սեպեմ՝ ընտրողներուդ ըսելդ թէ ես ձեր հաւատքէն չեմ. սահմանադ-
 րութիւններնուդ ալ ըսելիք չունիմ կրեսմ նէ ՚ի վերէն էրեւ է. իմ մէջ
 մոնելովս ազգին վնաս կըլլայ. զիս թող տուէք: Վեց ուսումնական խոր-
 հուրդին անգամ ընտրած ատեննին ըսելու էիր. այն խորհուրդը կրօ-
 նական ժողովին հետ ալ յարաբերութիւն պիտի ունենայ, որ եկեղե-
 ցականներէ կը բաղկանայ. իմ հաւատքս անոնցինն չնմանիր. ուստի ես
 ալ այդ խորհուրդիդ մէջ չեմ վայլեր. եւ այսպէս հրաժարելու էիր.
 Հիմայ ալ տակաւին ժամանակն է. թէ որ ուրիշները քեզ ճամբելէն
 առաջ դուն ինքնին ասանկ բան մը ընես նէ՛ Կ. Մատթէոս, վստահ
 եղիր որ այս մարդկային առաքինութիւնդ, Վստուած առանց վարձուց չը
 թողար. միտքդ կը լուսաւորէ. եւ Վրիստոսական եկեղեցւոյ անսայ-
 թաք շաւիղը կը խօթէ քեզ իւր անհուն գթութեամբը:

Եւ թէպէտ նամակը գրած ատենդ կը կարծէիր որ ըսածներդ որ
 ձեր մոլորեալ ժողովակին կարծիքն է, Հայաստանեայց սուրբ եկեղեց-
 ւոյ հաւատքին հետ նոյն ըլլայ. բայց երբ ապր. 4րն երեսփոխանից
 ընդհանուր ժողովքին մէջ կրօնական ժողովին արձանագիրը կարդաց-
 ուեցաւ՝ որ քու վարդապետութեանդ դէմ կը բողոքէր, եւ պատասխան
 գրելու պատրաստութիւնը կիմացընէր, հասկըցար այն ատենը անշուշտ՝
 որ ձեր կարծիքը հայոց եկեղեցւոյ դաւանութենէն տարբեր է: Հա՛րկ
 է քեզի, որ թէ իբրեւ հերետիկոս մեր սուրբ եկեղեցիէն կըտրուիչ չես
 ուղերնէ անոր հնազանդիս: Իուն եկեղեցւոյ վարդապետութեան քննող
 չես, ժողովքներով քննուած՝ եւ ընդհանուր եկեղեցւոյ դաւանու-
 թեան համեմատ գտնուած է. անոր տուած վճռոյն դէմ յամառիլը, գը-
 լուխ քաշելը եւ վէճի մտնել ուզելը հերետիկոսութիւն է, որմէ կը յուսանք
 որ Վստուած ազգերնիս ալ կը պահէ քեզ ալ, աղօթիք սուրբ Վուսա-
 ւորիչ: Հոր առաջին միապետ վերատեսչի Հայաստանեայց սուրբ եկե-
 ղեցւոյ:

Վ. Ե. Ր. Բ.





1861